

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA

Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р.АЧАРЯНА
H.ACHARYAN INSTITUTE OF LANGUAGE

ԼԵԶՈՒ

ԵՎ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

•

ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ

LANGUAGE AND LINGUISTICS

2 (23)

2020



ԵՐԵՎԱՆ • ЕРЕВАН • YEREVAN

Հանդեսի հիմնադիրն է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտը:
Լույս է տեսնում 2003 թ., տարին երկու անգամ:

Գլխավոր խմբագիր Համբարձումյան Վ. Գ.

Խմբագրական խորհուրդ

Աբրահամյան Վ. Շ., Ավետիսյան Յու. Ս., Բարլեզիզյան Ա. Կ., Բրուտյան Լ. Գ.,
Գալստյան Ա. Ս. (գլխավոր խմբագրի տեղակալ), Թրագուտ Յ. (Ավստրիա), Խա-
չատրյան Գ. Վ., Կատվալյան Վ. Լ., Կորտլանդտ Ֆ. (Նիդեռլանդներ), Հովհաննիսյան
Լ. Շ., Հովսեփյան Լ. Ս., Մոհամմադի Մ. Մ. (Իրան), Պետրոսյան Վ. Զ., Սարգսյան Ա.
Ե., Սարգսյան Մ. Ա. (պատասխանատու քարտուղար), Սաքայան Դ. Գ. (Կանադա),
Սիմոնյան Ն.Մ.(գլխավոր խմբագրի տեղակալ), Տեր-Մերկերյան Ռ. (Ֆրանսիա),
Տոնապետյան-Դեմոպուլոս Ա. (Ֆրանսիա):

Главный редактор Амбарцумян В. Г.

Редакционная коллегия

Абрамян К. Ш., Аветисян Ю. С., Барлезизян А. К., Брутян Л. Г., Галстян А. С. (замес-
титель главного редактора), Катвалян В.Л., Кортландт Ф. (Нидерланды), Мохаммади
М. М. (ИРИ), Овсепян Л. С., Оганесян Л. Ш., Петросян В. З., Сакаян Д. Г. (Канада),
Саргсян А. Е., Саргсян М. А. (ответственный секретарь), Симонян Н. М. (заместитель
главного редактора), Тер-Меркерыан Р. (Франция), Тонапетян-Демопулус А. (Фран-
ция), Трагут Я. (Австрия), Хачатрян Г.К.

Chief Editor Hambardzumyan V. G.

Editorial Board

Abrahamyan K. Sh., Avetisyan Yu. S., Barlezizyan A. K., Brutyan L. G., Donabédian-
Demopoulus A. (France), Galstyan A. S. (deputy chiefeditor), Hovhannisyan L. Sh., Hov-
sepyn L. S., Katvalyan V. L., Khachatryan G. K., Kortlandt F. (Netherlands), Mohammadi
M. M. (Iran), Petrosyan V. Z., Sakayan D. G. (Canada), Sargsyan A. E., Sargsyan M. A.
(editorial secretary), Simonyan N. M. (deputy chiefeditor), Ter-Merkeryan R. (France),
Tragut J. (Austria).

ISSN 1829-0183

© Լեզու և լեզվաբանություն

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2020

ՀԱՅԱԼԵՂՈՒ ՏԵՔՍՏԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՆՈՐ ՍՐԲԱԳՐԻՉԻ
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Բանասիր. գիտ. թեկնածու Մ. Ա. Սարգսյան
meri.sargsyan@isec.am

Բանալի բառեր. սրբագրման համակարգ, էլեկտրոնային սրբագրում, ժամանակակից հայոց լեզու, լեզվական սխալներ, ուղղագրական սխալներ, քերականական սխալներ:

Թվային տեխնոլոգիաների դարաշրջանում էլեկտրոնային տեքստը դարձել է մեր կյանքի անբաժանելի մասը: Էլեկտրոնային տեքստի առկայությունն էլ իր հերթին նպաստեց ոչ միայն էլեկտրոնային տարատեսակ ընթերցիչների ի հայտ գալուն, այլև ասպարեզ եկան էլեկտրոնային տեքստը կազմելու, խմբագրելու, սրբագրելու տարատեսակ գործիքներ: Վերջին շրջանում մեծ տարածում են գտել էլեկտրոնային սրբագրիչները: Հայերեն էլեկտրոնային առկա և գործող սրբագրիչներին, դրանց թերություններին, առավելություններին և հեռանկարներին անդրադարձել ենք մեր նախորդ հոդվածներում¹: Սույն հոդվածում ներկայացնենք հայալեզու տեքստերի էլեկտրոնային նոր սրբագրիչի սկզբունքները և առանձնահատկությունները:

«Հայերեն էլեկտրոնային սրբագրման համակարգ» գիտահետազոտական թեմայի² շրջանակներում ստեղծվել է սրբագրման այնպիսի համակարգ, որի միջոցով փորձ է արվում ամբողջական և լիարժեք կերպով սրբագրել արդի արևելահայերենով գրված ցանկացած տեքստ, ինչպես նաև օգտագործելով վեբ տեխնոլոգիաների

¹ Տե՛ս Մ. Սարգսյան, Հայերեն էլեկտրոնային սրբագրման առկա համակարգերի քննություն // «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի», 1(44), Ե., 2018, էջ 598-604: M. Sargsyan, Some Observations on Armenian Electronic Proofreading Systems // "World Science", №6 (34), Vol. 8, June 2018, Warsaw, Poland, p. 21-24:

² Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 19YR-6B070 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

բոլոր հնարավորությունները, հայերեն էլեկտրոնային սրբագրման համակարգը հասանելի դարձնել հանրության լայն շրջաններին՝ ապահովելով համակարգից հեշտությամբ օգտվելու հնարավորություն:

Աշխատանքի սկզբնական փուլում անհրաժեշտ էր տվյալների շտեմարանի և համապատասխան ծրագրաշարի ստեղծումը: Հետագոտության այս փուլում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. ուսումնասիրվել են լայն տարածում գտած օտարալեզու սրբագրման համակարգերը՝ տեքստը ուղղելու ժամանակ դրանցում կիրառված սկզբունքները ըստ անհարժեշտության օգտագործելու նպատակով,

2. ուսումնասիրվել են հայալեզու առկա և գործող սրբագրման համակարգերը՝ առավելապես ուշադրություն դարձնելով այն խնդիրներին, որոնց պատճառով դրանք ոչ բավարար մակարդակով են ուղղում տեքստը,

3. առանձնացվել են տեքստերում առավել հաճախադեպ կիրառություն ունեցող ուղղագրական և քերականական սխալները՝ սրբագրման համակարգի կազմության սկզբունքները մշակելիս կիրառելու համար,

4. մշակվել են հայերեն էլեկտրոնային սրբագրման նոր համակարգի կազմության սկզբունքները,

5. ներկայացվել են կառուցվածքն ու ընդգրկման ծավալը, սխալներն ուղղելու եղանակը,

6. համակարգվել են այն բառարանները, որոնց նյութը ընդգրկվել կամ պետք է ընդգրկվի սրբագրման համակարգի հիմքում ընկած շտեմարանում,

7. թվայնացվել են թղթային և էլեկտրոնային տարբերակով առկա բառարանները,

8. մշակվել է համապատասխան ծրագրաշարը:

Սրբագրման ցանկացած համակարգի հաջող գործարկման հիմքում ոչ միայն հմտորեն մշակված ծրագրաշարն է, այլև տվյալների հարուստ շտեմարանը: Բացի այդ՝ սրբագրիչի տվյալների շտեմարանում ընդգրկվելիք բառապաշարը պետք է ձևային նկարագրության ենթարկել:

Հետազոտության այս փուլում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. մշակվել է բոլոր բառարանների բառարանային նյութը՝ առանձնացնելով միայն գլխաբառերը,

2. կատարվել է ընդգրկվելիք բառապաշարի ձևային նկարագրություն (շուրջ 200 000 գլխաբառ),

3. կազմվել են ձևաբանական փոփոխությունների ենթարկվող բառերի հոլովման և խոնարհման հարացույցները:

Հանրության լայն շրջանակներին հասանելի դարձնելու նպատակով սրբագրման համակարգը կգործի համացանցային առանձին կայքում՝ *armspell.am* վեբ հասցեի ներքո՝ գրանցված որոնողական բոլոր համակարգերում: Կիրառման տեսակետից այն պարզ է և արագագործ, քանի որ դրանից օգտվելու համար որևէ ծրագիր ներբեռնելու անհրաժեշտություն չկա: Տվյալների շտեմարանի կառուցվածքը/ կադապարը պատրաստ է, այնտեղ մուտքագրված են տվյալները: Մշակվել է նաև համապատասխան ծրագրաշարը: Համակարգն ունի կառավարման վահանակ (այսուհետ՝ ԿՎ), որը ծառայում է համակարգի շտեմարանում նոր բառեր ավելացնելու, ինչպես նաև վրիպակները, հնարավոր սխալները շտկելու համար:

ԿՎ-ը բաղկացած է 2 էջից: Առաջին էջը նախատեսված է բառերի մուտքագրման համար, որի համար օգտագործվում է հատուկ տեխնոլոգիա, որը հնարավորություն է տալիս շտեմարանում բառեր մուտքագրել և՛ մեծ խմբաքանակով, և՛ առանձին-առանձին: Երկրորդ էջը նախատեսված է արդեն մուտքագրված բառերն ըստ խոսքի մասերի դասակարգելու համար: Այս էջում առկա է նաև գլխաբառերի հնարավոր թեքված տարբերակները թե՛ մուտքագրելու, թե՛ խմբագրելու, թե՛ հեռացնելու հնարավորություն:

Կայքի օգտատերերը սրբագրման համակարգը կիրառելիս որոնման դաշտում կարող են մուտքագրել ստուգվող տեքստը և ստուգել այդ տեքստի բառերի ուղղագրական և քերականական սխալները: Միակ գտնելու դեպքում համակարգը սխալն ուղղելու մի քանի տարբերակ է առաջարկում՝ նշելով առաջարկված բառերի խոսքիմասային պատկանելությունը, ինչպես նաև՝ դրանց թեքված տարբերակները:

Համակարգը ուղղագրական և քերականական սխալների ստուգումը կատարում է շտեմարանում առկա բառերի հետ համե-

մատելու միջոցով: Եթե ստուգվող բառը բացակայում է շտեմարանում, ապա այն համակարգի կողմից համարվում է ուղղագրական սխալ ունեցող բառ: Միսալ ունեցող բառը գտնելուց հետո համակարգը համեմատում է այն շտեմարանում առկա բառերի հետ և գտնում ձևային առումով ամենամոտ բառերը՝ ներկայացնելով այն օգտատիրոջը որպես հնարավոր ճիշտ տարբերակ: Բառերի համեմատությունը կատարվում է տեքստերի նմանության Լևենշտեյնյան հեռավորության չափման միավորի հիման վրա (Levenshtein distance):

Էլեկտրոնային նոր սրբագրիչի շտեմարանը լիարժեք կերպով արտացոլում է հայերենի արդի վիճակը, քանի որ ներառում է ոչ միայն հայերենի հիմնական բառաֆոնդը, այլև հետևյալը.

1. հատկապես վերջին շրջանում ստեղծված մեծաթիվ նոր բառեր և նորաբանություններ,
2. օտարաբանություններ,
3. հատուկ անուններ (աշխարհագրական անուններ, անձնանուններ, ազգանուններ),
4. հապավումներ,
5. համառոտագրություններ:

Կայքից օգտվողների թիվը որևէ սահմանափակում չի ունենա: Ծառայելով հասարակության լայն շրջանակներին՝ այն *կարող է օգտակար լինել*.

ա. արևելահայերին ցանկացած տեքստի սրբագրման ժամանակ (գիտական, հրապարակախոսական, գեղարվեստական և այլն),

բ. արևմտահայերին, որոնք, ուղղագրական համակարգերի տարբերություններով պայմանավորված, ոչ միշտ են կարողանում ինչպես ճիշտ ուղղագրությամբ արևելահայերեն տեքստեր գրել, այնպես էլ առհասարակ լիարժեք կերպով կիրառել հայերենի քերականական կանոնները:

գ. օտարերկրացիներին, որոնք բավարար լեզվական գիտելիքներ չունենալու պատճառով չեն կարող կառուցել իրենց գրավոր խոսքը պատշաճ մակարդակով:

Այսպիսով՝ կայքը և էլեկտրոնային նոր սրբագրիչը կարող է կիրառել ցանկացած անձ՝ անկախ սեռից, տարիքից, կրթական մակարդակից, բնակության վայրից և այլն:

Ծրագրաշարը մշակված է այնպես, որ հետագայում հնարավոր է ընդլայնել համակարգի հնարավորությունը՝ ընդգրկելով շարահյուսական, կետադրական և ոճական սխալների ուղղումը: Այն կարելի է գործակցելի դարձնել նաև սրբագրման օտար լեզվով համակարգերի հետ, որոնց միջոցով կարելի է կատարել հայերեն տեքստերի սրբագրում (http://www.stars21.com/spelling/armenian_spell_checker.html, https://www.spellchecker.net/eastern_and_western_spell_checker.html, <https://addons.mozilla.org/en-US/firefox/addon/armenian-spell-checker-diction/>,):

Էլեկտրոնային նոր սրբագրիչի ստեղծումը էապես կնպաստի ինչպես լեզվաբանական հետազոտությունների բնագավառում համակարգչային տեխնիկայի կիրառությանը, համակարգչային ծրագրերի միջոցով տեքստերում եղած լեզվական սխալների վերացմանը, այնպես էլ լայն առումով հայերենի՝ որպես համացանցային լեզվի հաջող գործառնությանը: Այն մեծ հեռանկարներ է բացում ոչ միայն տեսական-լեզվաբանական, այլև գործնական-կիրառական խնդիրների լուծման համար:

Ключевые слова: система корректуры, электронная корректура, современный армянский язык, языковые ошибки, орфографические ошибки, грамматические ошибки.

М. А. Саргсян. Принципы нового электронного корректора армяноязычных текстов. В век цифровых технологий электронный текст стал неотъемлемой частью нашей жизни. Наличие электронного текста, в свою очередь, способствовало появлению не только различных электронных ридеров, но и различных инструментов для составления, редактирования и корректуры электронного текста. В последнее время большую популярность приобрели электронные корректоры. В наших предыдущих статьях мы рассказывали о существующих армянских электронных корректорах, их недостатках, преимуществах и перспективах. В этой статье мы представим принципы и особенности нового электронного корректора армянских текстов.

Key words: proofreading system, electronic proofreading, Modern Armenian language, linguistic mistakes, spelling errors, grammar mistakes.

M. A. Sargsyan. The principles of the new electronic proofreader for armenian-speaking texts. In the age of digital technologies, the electronic text has become an integral part of our lives. The existence of an electronic text, in its turn, not only contributed to the emergence of various electronic readers but also to the field of various tools for compiling, editing, and proofreading electronic text. Recently, electronic proofreaders have become very popular. In our previous articles, we talked about the existing Armenian electronic proofreaders, their shortcomings, advantages, and perspectives. In this article, we will present the principles and features of the new electronic proofreader of Armenian texts.

**ՀԱՅԱՑՔ ԱՌԼԵԶՎԱԿԱՆ ՀՈՐԻՆՎԱԾՔՆԵՐԻ
ԿԱՌՈՒՑԱՏԻՊԵՐ
(Փոփոխականի հարաժամանակյա
համայնալեզվաբանության հարցեր)**

Բանասիր. գիտ. թեկնածու Դ. Վ. ԳՅՈՒԼԶՍՅԱՆ

Բանալի բառեր. կցականություն, թեքակցական լեզու, ապակցում, ձուլում, անջատում, զուտ թեքական ձուլում, թեքակցական ձուլում, անձույլ թեքակցականություն

Լեզուների տիպավորման հետազոտության մեջ անդրադառնալով Վ. ֆոն Հումբոլդտի տարբերակած լեզվակառուցվածքային տիպերին¹ Է. Սեպիրը նկատել է տալիս, որ չափազանց դժվար է հայտնի լեզուները հատկացնել միայն այս կամ այն տիպին, քանի որ լեզուն կարող է միաժամանակ լինել և՛ կցական, և՛ թեքական կամ թեքական ու բազմահամադրական և կամ մինչև իսկ բազմահամադրական ու անջատական², որ և ապացուցում է նա իր ուսումնասիրությամբ³, և մենք էլ այդ ցույց կտանք ստորև հատկապես հայերենի տարբեր գոյաձևերի հիմամբ: Վ. ֆոն Հումբոլդտի և Է. Սեպիրի տիպաբանական խմբավորումների յուրօրինակ հանդիպադրությամբ Է. Աթայանը լեզուների տիպավորման համար կարևոր է համարում երկու ընդգրկուն հասկացություն՝ ձուլում (ֆուզիա) և անջատում (իզոլյացիա)⁴: Առաջինը չափվում է իմաստային միաժամանակության հատկանիշով՝ ձևահնչության բազմազանությամբ, երկրորդը՝ իմաստային տարաժամանակության հատկանիշով՝ երկու հակակշիռ ենթատեսակի հավասարակշռությամբ՝ կցում (ազյուտինացիա)՝ ժամանակային անընդհատականություն, և ապակցում (դեզյուտինացիա) կամ ներմարմնավորում՝ ժամանակային ընդհատականություն, երբ որոշակի հեռավորությամբ

¹ Տե՛ս В. фон Гумбольдт, Избранные труды по языкознанию, М., «Прогресс», 1984, էջ 118-126, 144-155:

² Տե՛ս Э. Сепир, Избранные труды по языкознанию культурологии, М., «Прогресс», «Универс», 1993, էջ 119:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 117-137:

⁴ Է. Աթայան, Լեզուների ձևաբանական տիպաբանության առարկան և «անհատական լեզվական ձևի» բացահայտման խնդիրը, էջ 43-44 (37-45):

մերձիմաստ կամ նույնիմաստ միավորների միջև առաջանում է ձգողություն կամ, հակառակը, հարամերձ նույնիմաստ միավորները վանում են իրար⁵: Ինչպես կտեսնենք, տիպաբանական այս դրսևորումներն առկա են վանկակազմից մինչև տեքստակազմ ընկած բոլոր միավորներում ու միացություններում: Նշենք, որ «թեքական» («ֆլեկտիվ») անվանումից խուսափում են ինչպես Է. Մեպիրը, այնպես էլ Է. Աթայանը: Առաջինը թեքականության հասկացությունը նույնացնում է խորհրդանշացման, երկրորդը՝ ձուլման հետ: Այնուամենայնիվ, հարկ է նկատել, որ դրանք տարբեր իրողություններ են, որոնցից հատկապես ձուլմանն ու թեքմանը հատուկ անդրադառնում ենք այստեղ:

Տարածված տեսակետի համաձայն՝ գրական աշխարհաբարը գրաբարի համեմատությամբ փոխել է կառուցվածքային հորինվածքը: Գրաբարը թեքական համակարգ է ունեցել, մինչդեռ աշխարհաբարը ձեռք է բերել կցականության հատկություն: Այն, որ հայերենը XI դ. արդեն համակարգային փոփոխություն էր կրել, կասկածից վեր է: Մեր նախնական խնդիրն է պարզել, թե «միջին հայերեն» կոչվող տևական անցումային շրջանից հետո ինչ կառուցվածքների են հանգել մերօրյա գրական գոյաձևերի համակարգերը, որոշել դրանցում կցականության իսկության չափը, ինչպես նաև պարզել գրաբարում թեքականության և կցականության հարաբերակցությունը: Դրա համար հարկ է նկատի առնել մի քանի իրողություն:

ա) Աշխարհաբարի մասնակի կցականացումն ունե՞ր իր հիմքերը գրաբարում:

բ) Գրական աշխարհաբարի երկու տարբերակները նույնաչա՞փ տեղաշարժ են ունեցել դեպի կցականություն:

գ) Տեղաշարժը հավասարաչա՞փ է գնահատված վանկակազմության, բառակազմության, ձևակազմության և շարակազմության ու շարահյուսության ոլորտներում:

դ) Ձևակազմական տեղաշարժը վեր հանելիս հավասարաչա՞փ ուշադրություն է դարձվել հոլովման և խոնարհման համակարգերին:

ե) Հոլովման համակարգը քննելիս կցականության չափը պարզելու համար նո՞ւյն հետևողականությամբ են բացահայտված

⁵ Տե՛ս նույն տեղում:

ու գնահատված անվանական և դերանվանական համակարգերը:

զ) Արդի հայերենի կառուցվածքը բնութագրող հետազոտություններում որքանով են արտացոլված նորագույն լեզվաբանության, մասնավորապես՝ լեզվաբանական տիպաբանության և հանդիպադրական լեզվաբանության տվյալները⁶:

Եթե վերը բերված կետերից թեկուզ մեկը անտեսված է, ապա հայերենի հատկացումը լեզուների այս կամ այն կառուցվածքային տիպին լիարժեք համարվել չի կարող:

Արդ՝ ասենք միանգամից, որ անտեսված շատ բան կա: Աշխարհաբարի գրական տարբերակների կառուցվածքային տիպը որոշելու համար մասնագետները ցարդ հիմնվել են հոլովման, այն էլ գերազանցապես անվանական համակարգի վրա: Սակայն անգամ այս դեպքում խիստ նկատելի է արևելահայերենի և արևմտահայերենի համակարգային տարբերությունը: Բանն այն է, որ կցականության չափաբաժինը գնահատելիս լեզվաբանները մինչև հիմա հիմնվել են մենիմաստ վերջավորությունների սոսկական ավելացման վրա: Անշուշտ սա կցականության երևույթի գնահատման էական չափանիշ է: Սակայն հոլովաձևի կազմության հիմքակազմական առանձնահատկությունն աչքաթող անել չի կարելի: Հոլովաձևը միայն վերջավորությամբ չի որոշվում: «Մեղանի», «գրքի» օրինակներում հոլովն ամբողջ բառաձևով է որոշվում: Առաջին օրինակի սեռականի ձևը մեր երկու գոյաձևում էլ հենց «սեղանի» անհնչյունափոխ ձևն է, և սա մաքուր կցականության արտահայտություն է: Երկրորդ օրինակի սեռականն անհնչյունափոխ չէ արևելյան տարբերակում, ուստի սեռականի ձևն էլ ոչ թե *«գիրքի» է (ինչպես արևմտյան տարբերակում), այլ «գ[ը]րքի»: Հոլովաձևի հնչյունափոխ հիմքը ձևահնչությային օրինաչափության արտահայտություն է, որը հոլովակազմության անհրաժեշտ պայման է: Բսկ հիմքի փոփոխությունը հենց ներքին թեքման առանձնահատկություն է, որով լեցուն է արևելահայերենի հոլովման համակարգը, այնինչ հիմքի մեջ հնչյունափոխ դրսևորումները սակավ են արևմտահայերենում: Ավելի՛ն. հոգնակի ուղղականի ձևը՝ անգամ անհնչյունափոխ հիմքով, ներքին թեքման դրսևորում է, որովհետև -

⁶ Տե՛ս, օրինակ, W. Nemser, Problems and prospects in contrastive linguistics // *Modern linguistics and language teaching*, Budapest, 1975, էջ 99-113: В. Гак, О контрастивной лингвистике // *Новое в зарубежной лингвистике*, М., «Прогресс», 1989, էջ 5-17:

(ն)եր հոգնակերտը ուղղականում երկիմաստ է: Հոգնակի հարացույցի ելակետային ձևում այդ ձևորդը ոչ միայն թվակերտ է, այլև հոլովակերտ: Գրաբարյան *ջուր-ք* և աշխարհաբարյան *ջր-եր* նույնիմաստ բառաձևերի համեմատությամբ պարզ է դառնում, որ կցական համարված աշխարհաբարի ձևը նույնիսկ ավելի՛ շատ թեքականության հատկանիշներ է պարունակում, քան թեքական գրաբարի ձևը: Այնուհետև, գրաբարի *-ք* ձևորդն ավելի՛ պարզ է կցված հիմքին, քան աշխարհաբարյան *-եր* ձևորդը, որովհետև հիմքից զատելով՝ առաջինում ունենում ենք հոլովման հարացույցի ելակետային ձև, որը բառարանային հարացույցի ինքնուրույն միավոր է՝ ի տարբերություն արևելյան աշխարհաբարի ձևի, որտեղ *-եր* վերջավորության զատումով անիմքնակա հիմք ենք ունենում՝ չնույնացող ելակետային ձևին: Թեքական համարվող գրաբարի հոգնակի ուղղական և հայցական հոլովները (*ջուր-ք*, (*զ*)*ջուր-ս*) ավելի՛ կցական են, քան աշխարհաբարյան հոգնակի ուղղականը: Հնչունափոխ հիմքով և նրան կցված նույնիսկ մենիմաստ վերջավորությամբ ձևավորված հոլովները թեքակցական են՝ հիմքի թեքականության և վերջավորման կցականության բնույթով պայմանավորված:

Ասվածները հետևյալն են հուշում.

ա) *գրաբարի հոլովման համակարգը զուտ թեքական չէ, այլ թեքակցական է՝ մինչև իսկ ներքին թեքման պատկանող շատ բառերի հոգնակի ուղղականն ու հայցականը հաշվի առնելով* (օր.՝ *տուն-ք*, (*զ*)*տուն-ս*),

բ) *արևելահայերենը նույնիսկ միայն անվանական հոլովման համակարգում թեքակցական չէ*:

Իսկ եթե սրան էլ ավելացնենք դերանվանական և խառը հոլովման դրսևորումները, խոնարհման համակարգը, որն ամբողջովին թեքական տիպի է, բառակազմությունը, ապա կհամոզվենք, որ իրականում թեքականության բաղադրությունն անհամեմատ մեծ է արևելյան թեքակցական տարբերակում: Չնայած այն բանին, որ արևմտահայերենն ավելի շատ է հակված դեպի կցականություն (հմմտ. *ջուրին* փրփուրը, *տունին* մեջ), այնուամենայնիվ, նկատի առնելով խոնարհման համակարգը, այս մի տարբերակը ևս չի կարելի զուտ կցական համարել: *Աշխարհաբարի երկու տարբերակներն էլ, այսպիսով, թեքակցական տիպին պատկանող համակար-*

գեր են՝ թեքականության և կցականության տարբեր չափաբաժիններով:

Բացի նշվածներից՝ կան կառուցվածքային տիպը վեր հանելու այլ եղանակներ նույնպես, որոնք այլ տիպերի առանձնահատկություններ էլ են բացահայտում:

Վանկակազմի տարաբնույթ դրսևորումները՝ վանկատոգորմամբ ու վանկապարպմամբ, պարունակում են լեզվական կառուցվածքի գրեթե բոլոր տիպերը՝ ձուլման և անջատման ենթատեսակներով: Այսպես՝ արևելահայերենում [սա], [ստ] և այլ հնչակցություններից առաջ կա համակարգային ձուլում դրանցով սկսվող բառերում, այն է՝ խոսքում նշված միավորներից առաջ թույլ արտասանվող կամ մինչև իսկ չարտասանվող [ը], որը կա՝ մեր լեզվական (ենթա)գիտակցության մեջ (հմտ. [սկըսվել], բայց՝ [դասնը-սկըսվեց]): «Բորբոք» բառի առաջին վանկի մասնակի վանկապարպումը, ըստ կառուցվածքային տիպի, անջատման գործողություն է, իսկ երկրորդ վանկի վանկատոգորումը՝ ձուլման գործողություն (հմտ. բառակազմորեն՝ բորբոք+ոք, վանկակազմորեն՝ բորբոք = [բոր], բ+ոք = [բոք]):

Ձևակազմության մեջ կառուցվածքային տիպը որոշելի է հորիզոնականորեն և ուղղաձգորեն՝ հարացույցի մեկ անդամի ներսում կամ այդ հարացույցի միջանդամային դրսևորումներում, ինչպես նաև (ստորև պարզ կդառնա) միջհարացուցային հարաբերություններում: Այսպես՝ 1) *պատ* – *պատ-ի*, 2) *գիրք* – *գ[ը]րք-ի*, 3) *գնաւ* – *գնաւ-ս* օրինակներից առաջինում գործ ունենք անջատական տիպի պարզ կցման հետ, երկրորդ օրինակում՝ հիմքի թեքականություն և վերջավորության կցում, երրորդ օրինակում յուրաքանչյուր անդամ առանձնորեն թեքակցականության արտահայտություն է (*գնաւ+ս*, *գնաւ+ս*), սակայն միմյանց հարաբերությամբ փոխարկիչների առկայությունը զուտ թեքականության մասին է հուշում. հմտ. *գնաւ- ս* – *գնաւ-ս*:

Հարկ է պարզել ձուլման և թեքման, կցման և ապակցման (անջատման) հարաբերությունները: Առաջին զույգի երկրորդ և երկրորդ զույգի առաջին անդամները անցումային վիճակն են ձուլման և անջատման տիպերի: Պետք է տարբերակել երեք բան՝ զուտ թեքական ձուլումը, թեքակցական ձուլումը և անձույլ թեքակցականությունը:

1) *Ձուտ թեքական ձուլումը* կցականության պահ չի պարունակում. այն դրսևորվում է բառամիջում ձայնդարձի կամ հերթագայության արտահայտությամբ. հմմտ. *տուն – տան, գիր – գ[ը]ր-, արական – առնական, դառնալ – դարձել* (հմմտ. նաև ռուս. *лик – лицо – личный*):

2) *Թեքակցական ձուլումն* արտահայտություն է գտնում բառավերջում ուղղաձգորեն կամ հարացուցայնորեն անջատելի ձևերի փոխարկային հարաբերությամբ, երբ չի պահպանվում հիմքի բառային արժեքը. հմմտ. *այգի – այգու, գնամ – գնամ* (հմմտ. նաև ռուս. *страна – страны – стране*) և այլն:

3) *Անձույլ թեքակցականության* դեպքում ստուգվող նշանները, փոխարկելի լինելով հանդերձ, բաժանելի են նաև հարթաձգորեն՝ ինքնակա հիմքով, որը, լինելով հարացույցի ելակետային ձևը, դրանով իսկ բառային միավոր է՝ գրբ. *գիրք – (գ)գիրք*:

Ձուտ թեքական և թեքակցական ձուլումների ընդհանրությունն այն է, որ երկուսն էլ դրսևորվում են ուղղաձիգ կամ հարացուցային միավորների ձայնդարձով կամ հերթագայությամբ: Սրանց տարբերությունը ոլորտային է. առաջինը՝ բառամիջի, երկրորդը՝ բառավերջի ոլորտում է: Թեքակցական ձուլման և անձույլ թեքակցականության ընդհանրությունը ոլորտային է և գործառական. երկուսի ստուգվող ձևայիններն էլ բառավերջում են հանդիպում, երկուսն էլ բառաձև են կազմում (բառահարաբերական ձևայիններ են) և փոխարկելի են, այսինքն՝ անփոփոխակներ են (հակադրական բաշխման հարաբերության մեջ են): Սրանց դեպքում ստուգվող նշաններ են ոչ միայն ձևայինները, այլև հիմքերը. վերջիններով էլ պայմանավորված է տարբերությունը. Թեքակցական ձուլման ենթակա բառաձևերի հիմքն անինքնակա է, անձույլ թեքակցական բառաձևերի հիմքը՝ ինքնակա: Մյուս տարբերությունն էլ այն է, որ առաջինի ձևայինների անջատելիությունը միայն ուղղաձիգ հնարավորությամբ է բացահայտելի, երկրորդինը՝ նաև՝ հորիզոնականորեն:

Սակայն հիմքի ինքնակայությունն էլ մի ուրիշ խնդիր է առաջ բերում: Արդյո՞ք այն բոլոր դեպքերում, երբ հիմքն ինքնակայությունից զուրկ է, նրան բոլոր (ներառյալ՝ մենիմաստ) ձևորդների միացումը կարող ենք համարել ոչ թե անջատական տիպի կցական ենթատեսակ, այլ հենց ձուլական տիպի թեքակցական ենթատե-

սակի արտահայտություն: Այլ կերպ ասած՝ վերը բերած *q/p/np* թեքակցական օրինակում ունենք ձուլում: Չէ՞ որ ինչպես զուտ թեքական ձուլման տեսակ համարված օրինակների *այգ*-, *զն(ա)*- հիմքերն են անիքնակա և գործադրվում են միայն *-հ*, *-ու*, *-մ*, *-ս* ձևորդների պարտադիր մասնակցությամբ, այնպես էլ *q/p/np*- հիմքը չի կարող գործածվել առանց *-հ*, *-ից*, *-ով*, *-ում*, *-եր* ձևորդներից մեկի մասնակցության, և թե՛ խոնարհման, թե՛ հոլովման հարացույցում գործ ունենք ձևորդների միևնույն փոխարկման իրողության հետ: Խնդրի լուծման համար դիմենք տարածաչափական և հարթաչափական եղանակներին, այլ կերպ ասած՝ նշանների ներհարացույցային և միջհարացույցային համանման հարաբերությունների համասեռ մեկնաբանությանը⁷:

ա) Հարթաչափական կամ ներհարացույցային հայեցակետով *q/p/np*- հիմքին միանալու հավասարագործություն ունեն միմյանց փոխարկելի *-հ*, *-ից*, *-ով*, *-ում*, *-եր* հոլովակերտ նշանները: Վերջավորությունների դեպքում թեքական տիպին պատկանելության պայմաններից մեկը այդ իսկ վերջավորությունների բազմիմաստությունն է: Բերված վերջավորություններից առաջին չորսը մենիմաստ են՝ զուտ հոլովակերտության բերումով, վերջինը՝ *-եր*, բազմիմաստ է՝ միաժամանակ հոլովակերտության և հոգնակերտության գործառական բեռնվածությամբ, ուստի *q/p/np* բառաձևը թեքական է թե՛ հնչյունափոխ հիմքի և թե՛ վերջավորության բնությունով: Մնացյալ ձևորդները մենիմաստ են, ուստի, ինչպես վերն ենք նշել, առայժմ ընդունում ենք, որ դրանցով ձևավորվող բառաձևերը թեքակցական են: Նկատեցինք, սակայն, որ չեն նույնանում թեքականության և ձուլման սահմանները:

բ) Տարածաչափական կամ միջհարացույցային մեկնակետով *q/p/np*- հիմքին ավելացող *-հ*, *-ից*, *-ով*, *-ում* փոխարկելի նշանները կարծես թե գործառապես չեն տարբերվում *այգ*- հիմքին ավելացող և միմյանց փոխարկող *-հ*, *-ու* ձևորդներից, այլև *զն(ա)*- հիմքին ավելացող *-մ*, *-ս* փոխարկիչներից: Առերևույթ ունենք նույն իրողությունը. ինչպես առանց *-հ*, *-ու* ձևորդների չի կարող գոյություն ունենալ *այգ*- հիմքը, այնպես էլ առանց *-հ*, *-ից*, *-ով*, *-ում* ձևորդների

⁷ Այս մասին տե՛ս Դ. Գյուլգասոյան, Լեզվական նշանի տարածաչափական և հարթաչափական մեկնակետերը // «Բանբեր Երևանի համալսարանի, Բանասիրություն», Ե., 2017, 2, էջ 24-31:

զ/ը/ըք- հիմք լինել չի կարող, և եթե առաջինների համակցությունը ձուլում է, ապա ձուլում պետք է համարվի երկրորդների համակցությունը ևս՝ հակառակ այն բանի, որ *այգ-*ն անհնչյունափոխ հիմք է, *զ/ը/ըք-*ը՝ հնչյունափոխ: Դա այդպես էլ կհամարեինք բացարձակորեն, եթե *ի* հոլովման համակարգը համատարած այդպիսի ընդգրկում ունենար: Սակայն տարածաշափական մեկնակետը հուշում է, որ ունենք նույն հոլովակերտներով պարզ կցման օրինակներ, որոնք ոչ մի կերպ ձուլում համարել չի կարելի՝ *պատ-ի/ին/ից/ով/ում*, *քար-ի/ին/ից/ով/ում* և այլն, ուստի այս մասնիկներն էլ հիմքին կցվող սոսկական փոխարկիչներ են: Վերադառնալով *ու* հոլովման բառերին՝ պարտավոր ենք նկատել, որ ուղղականի *-ի* և սեռականի *-ու* ձևորդները բազմիմաստ են, քանի որ երկուսն էլ համատեղում են եզակի թվի և համապատասխան հոլովի իմաստներ: Ապացույցն այն է, որ հոգնակի թվում դրանք չկան որպես ձևորդներ. *-ու*-ն հոգնակի թվում առհասարակ վերանում է, իսկ եզակի ուղղականի *-ի* ձևորդը դառնում է հիմքի բաղադրիչ (*այգի-ներ*)⁸:

Այս երկու կետում բերված մեկնություններից հետևյալ եզրահանգման ենք գալիս.

1) Առհասարակ, բառամիջում ձայնդարձի, հերթագայության կամ ձայնավորների և երկբարբառների այլաբնույթ հնչափոխության առկայությամբ գործ ունենք միաժամանակ ձուլման և թեքականության հետ:

2) Թեքականության դեպքում հիմքին չձուլված վերջավորությունների բազմիմաստությունը պարտադիր է, և դրանց մեջ թեքականության միակ «բնական» նշանը դա է (հմմտ. զգիրս), և քանի որ ձևակազմ ձևույթն էլ կցված է հիմքին, ապա ամբողջ բառաձևը կազմված է թեքակցական տիպով:

3) Ձուլումը մեկնելի է ոչ միայն քերականական կարգերի (տվյալ դեպքում՝ հոլովի, թվի և սեռի) իմաստների համատեղմամբ (որը վերջավորական դիրքում թեքականության պայման է), այլև

⁸ Որ ուղղականում *ու* հոլովման գոյականների՝ *ի*-ով վերջավորվող բազմավանկ բառերում այդ *ի*-ն վերջավորություն է, մեզ համար կասկածից վեր է: Սրա հիմնավորումը երկրաչափական թեորեմի ճշգրտությամբ է տվել Է. Աղայանը: Տե՛ս Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Ե., ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1967, էջ 233–235:

հիմքից անբաժան լինելու գործոնով (հմմտ. ռուս. *книга, озеро* բառերում [a] և [o] ձայնավորների՝ *книг-* հիմքին և հայ. *այգի, այգու* բառաձևերում [h] և [nz] ձայնավորների՝ *այգ-* հիմքին ձուլումը):

4) Անինքնակա հիմքով բառաձևերի ձուլական թե անջատական տիպի կցական բնույթը որոշելի է տարածաչափական մեկնակետով: Եթե միջհարացուցային ստուգմամբ միևնույն վերջավորություններն ավելանում են անհնչյունափոխ հիմքին ևս, ապա հնչյունափոխ հիմքին ավելացող այդ վերջավորությունները ոչ թե ձուլված, այլ կցված ձևորդներ են: Կարծում ենք՝ տեղին է նույնիսկ այսպիսի տարբերակում կատարելը. *այգի – այգու* տիպի օրինակներում ունենք բացարձակ ձուլում, որոնք այդպիսին են թե՛ հարթաչափական, թե՛ տարածաչափական մեկնակետով, մինչդեռ *զ[ը]րքին – զ[ը]րքից* տիպի օրինակներում ունենք հարաբերական ձուլում, քանի որ հարթաչափորեն այդ բառաձևերը, իրոք, ձուլման արտահայտություն են, մինչդեռ տարածաչափորեն (հմմտ. *քարին – քարից*) առավել հաճախադեպ է դրանց բաղադրիչների դյուրագատումը:

5) Ձուլումը և թեքականությունը նույնանում են բառամիջի այս կամ այն հնչափոխության (ներառյալ ձայնդարձը և հերթագայությունը) դեպքում:

6) Եթե բառաձևի ձևորդը բազմիմաստ է և միաժամանակ անտրոհ է հիմքից, ապա նշանակյալի բազմիմաստությամբ այդ բառաձևը թեքական է, նշանակչի անտրոհելիությամբ՝ ձուլական:

Պետք է նկատի ունենալ, որ «անջատում» ասելով հաշվի է առնվում ոչ միայն (և ոչ այնքան) նշանների անջատ գործածությունը, այլև բաղադրիչների անջատելիությունը: «Քարի» բառաձևն անջատական տիպի է, որովհետև անջատելի բաղադրիչների («քար» և «ի») համակցություն է: Ձևակազմական տիրույթում անջատական տիպի կցական ենթատեսակին են պատկանում նաև հարադրավոր բառերը (*պար զալ, ծառ ու ծաղիկ*), առդրիվ բառերը (*սենյակի մեջ, ի մենջ* ևլն): Անջատական տիպի ապակցական կամ ներմարմնավոր ենթատեսակին են պատկանում շարահյուսական գծայնությունը խախտած բառաձևերը, ինչպես՝ *եղբորորդիս, հորեղբորորդիդ*, որտեղ վերջահանգ հոդերը վերաբերում են սերող հիմքերին՝ բառաձևերի առաջին բաղադրիչներին: Ներմարմնավորման արտահայտություն են նաև առանձնական եզակի թիվ նշող

բառաձևերը (հմմտ. *տաշտներդ, տուններդ* ևլն), ինչպես նաև կրկնաստացական փոխանունները (հմմտ. *Վարդանինը, իմինից* և այլն):

Բառակազմության մեջ հետևելով Լ. Հովսեփյանի գրաբարի բառակազմական կաղապարներին, Է. Աղայանի և Գ. Ջահուկյանի բառակազմական համակարգերին՝ համոզվում ենք, որ այս տիրույթում համադրական բաղադրությունները թե՛ ձուլման ու թեքականության, թե՛ կցականության օրինաչափություններով են իրացված⁹: Բազմաբաղադրիչ բառերը բազմահամադրականության սկզբունքով են կազմվում: Այդ սկզբունքը գործուն է հատկապես գերմաներենում:

Շարակազմության և առհասարակ *շարահյուսության տիրույթում* որոշիչ է նախադասության գերակայի՝ բայ-ստորոգյալի դրսևորումը: Դիմավոր բայը համատեղում է բոլոր քերականական կարգերը և իրեն ձգում նախադասության կառուցվածքն ամբողջացնող միավորների անդամակցությունը: Նրանով է պայմանավորված անգամ բային ոչ անմիջականորեն կապվող անդամների համակցելիությունը: Այս ամենով էլ գերական ամփոփում է իրենում թե՛ ձուլման, թե՛ անջատման տիպերը, որոնցից բառային և քերականական իմաստների (եղանակ, ժամանակ, կերպ և այլն) համատեղումը հենց իմաստային ձուլում է, իսկ բոլոր անդամների համակցելիության ձգողական ուժով միավորումը՝ ներմարմնավորում, որը, ինչպես նշվեց, անջատական տիպի ապակցման ենթատեսակն է: Անմիջական կապով միավորված անդամների շարահասական հարամերձությունը կցականությունն է հուշում: Նվազագույն գերշարայթից (շարահյուսական եռանդամ կառուցվածք) սկսած՝ ունենում ենք կցականության և ներմարմնավորման համատեղում, իսկ եթե եռանդամի բաղադրիչներից մեկը գերակա է՝ դիմավոր բայ, ապա գործ ունենք նաև ձուլման հետ: Ներմարմնավորում է ընդմիջարկությունների առկայությամբ յուրաքանչյուր կապակցություն՝ Ես *ձեզ* ասում եմ՝ || Կգա *ոգու* սով: Առաջին

⁹ Տե՛ս Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 376 էջ: Նույնի՝ Գրաբարի բառակազմության վերլուծական տիպը, Ե., «Ասողիկ» հրատ., 2016, 120 էջ: Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., ԵՊՀ հրատ., 1984, էջ 207-309: Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., ՀԽՍՀ ԳԱ, 1989, էջ 158-229:

հատվածում ընդմիջարկված են նախադաս ենթական ու հետադաս գերական (բայ-ստորոգյալը), երկրորդում՝ նախադաս գերական ու հետադաս ենթական: Ներմարմնավորման արտահայտություն են միջադաս գործածությամբ բոլոր միավորներով (նախադասություններով, դերբայական դարձվածներով, միջանկյալ և ներդրյալ միավորներով) կառուցվածքները: Գերմաներենում ներմարմնավորման օրինակներ են գատվող նախածանցով, բաղադրյալ բայական գերակայով միավորները, որոնցում նախածանցն ու գերակայի մի հատվածը վերջադասվում են՝ անջատված միավորների հետ օղակելով ողջ կառուցվածքը: Անգլերենի բարձր ոճում նախդրիվ հարցական նախադասությունը նույնպես ներմարմնավոր է դառնում՝ նախդրի վերջադասմամբ՝ *What are you talking about? Who do you usually go to school with?*

Վերասացական մակարդակում կամ *տեքստակազմության* մեջ իմաստային ձուլումը ամբողջ տեքստակազմով պայմանավորված բովանդակությունն է, որի մակերեսային արտահայտությունը ողջ շարադրանքի էությունը ներառող նրա խորագիրն է, որն էլ հենց ձուլման նշանն է: Անջատման տիպի կցական ենթատեսակն ակնառու է տեքստակազմ նախադասությունների հարակցությամբ, որն էլ հենց տեքստի կցականության գծային-ժամանակային արտահայտությունն է: Կցականության արտահայտություն է, օրինակ, գեղարվեստական արձակի դիպաշարի կանոնավոր հաջորդականությունը՝ նախադրության, հանգույցի, գործողության զարգացման, զագաթնակետի և լուծման բաղադրիչներով: Կցականությունը խախտվում, ապակցման է փոխարկվում գեղարվեստական հնարանքի հեղինակային նպատակադրմամբ, երբ, ասենք, նախադրությունը նախորդելու փոխարեն հաջորդում է հանգույցին, որն այլ բան չէ, եթե ոչ ներմարմնավորման արտահայտություն:

Կանոնավոր շարադասությամբ պարբերությո՜ր՝ իր գծայնության բնույթով, կցականության արտահայտություն է, որը կազմվում է տրամաբանական մակաձման եղանակով: Հակագծային է շրջուն շարադասությամբ պարբերությո՜ր, որ կազմվում է արտաձման եղանակով: Ներմարմնավորյալ պարբերությո՜ր, կազմվելով մակաձման եղանակով, եզրափակվում է արտաձելի սկզբնամասի այս կամ այն բաղադրիչի նպատակային կրկնությամբ, որի դեպքում

ունենում ենք պարառական պարբերությ: Պարբերության տեսակներից պարառականը, այսպիսով, ներմարմնավորյալ է:

Բացի ձուլման և անջատման տարողունակ տիպերից՝ ձևակազմությունից ու բառակազմությունից սկսած՝ նկատի են ունենում նաև ամբողջական նշանի գծային բաշխումը՝ վերլուծման, համադրման և բազմահամադրման տիպերով: Հարցը ձևակազմության և բառակազմության մեջ վաղուց է քննված, ուստի դրանց այստեղ չենք անդրադառնա: Շարահյուսական կառուցվածքում վերլուծական տիպ է ապահովում բաղադրիչների համադասությունը, համադրական տիպ է տվյալ համադաս բաղադրիչների՝ ընդհանուր անդամով հանգուցավորումը, իսկ համադաս նախադասությունների դեպքում, եթե չկա ընդհանուր անդամ, ավարտահնչերանգով կառուցվածքի ամբողջացումը: Նախադասության ներսում համադրական տիպ է տարադասական դրավորմամբ (գերադաս-ստորադաս) կապակցությունը (ներառյալ ենթաստորադասությունը), բազմահամադրական տիպն են ներկայացնում համաստորադասությունն ու համագերադասությունը, միաստորադասությունն ու միագերադասությունը:

Ծավալուն տեքստակազմում վերլուծական տիպը փաստվում է առանձին գլուխների առկայությամբ. դրանց տրամաբանական համադրումն ինքնին համդրական տիպի մասին է խոսում: Բազմագլուխ կամ բազմահատոր երկերի տրամաբանական ամբողջությունը դրանց բազմահամադրական տիպի գոյությունն է հաստատում՝ տեքստը ծայրից ծայր հանգուցող բազմահամադրական ստորոգմամբ:

Լեզվական հորինվածքում ի հայտ եկող տարամակարդակ իրողությունների կառուցատիպերը ենթակա են նաև գոյամակարդակային շերտավորման: Կառուցվածքային ընդհանրական տիպերը (ձուլում, թեքում, անջատում, կցում, ապակցում-ներմարմնավորում, վերլուծում, համադրում, բազմահամադրում) իրենց ընդհանրականությամբ իսկ համակարգային իրողություններ են: Սակայն գոյամակարդակային շերտատման բառակազմական սկզբունքից ելնելով՝ նշված անվանումները կհատկացնեք հոգեկան գոյաշերտին: Պայմանավորվենք այդ ընդհանրութենական երևույթները՝ որպես մարդկային լեզվին հատուկ համընդհանուր նշանակյալներ, հասկացավորել լեզվական համակարգին հատուկ տերմինասեր-

մամբ, և կունենանք դրանց համապատասխանող շարակարգային ու գծակարգային անվանումներ ևս: Այսպես՝ լեզվական համակարգում, որպես մարդկային լեզվին հատուկ կառուցատիպեր, կունենանք անվանողական դերով օժտված *թեքվելիք, ձուլվելիք, անջատվելիք, կցվելիք, ապակցվելիք* կամ *ներմարմնավորվելիք, վերլուծվելիք, համադրվելիք* և *բազմահամադրվելիք* հասկացություններ, որոնք լեզվախոսքային շարակարգում բեկվում են *թեքման, ձուլման, անջատման, կցման, ապակցման* կամ *ներմարմնավորման, վերլուծման, համադրման* ու *բազմահամադրման* պատկերացումների: Խոսքային գծակարգում հասկացական և պատկերացումային այս իրողություններն ստանում են իրենց իրացումները՝ որպես պատկերակցական բովով անցած տիպական հասկացությունների առարկայական վերաբերություններ՝ *թեքվածության, ձուլվածության, անջատվածության, կցվածության, ապակցվածության* կամ, որ նույնն է, *ներմարմնավորվածության, վերլուծության* կամ *վերլուծվածության, համադրության* կամ *համադրվածության, բազմահամադրության* կամ *բազմահամադրվածության* արտահայտություններով:

Այս կարգի տիպաբանությունն ավելի ընդհանրական է, քանի որ նշված տիպերն առկա են բոլոր լեզուներում այս կամ այն չափաբաժնով: Կարծում ենք՝ նախ մասնավոր լեզվաբանությունը պիտի վեր հանի տվյալ լեզվի կառուցատիպերի չափաբաժինը, որից հետո նորովի կշնչավորվեն լեզվաբանական տիպաբանությամբ վեր հանվող հանրույթներն ու տարբերույթները՝ իրականությունների դասդասման նոր հնարավորությամբ: Իսկ ընդհանուր լեզվաբանությունն ու լեզվափիլիսոփայությունը նորաբնույթ ընդհանրացումների կհանգեն՝ մեկ այլ հայեցակերպով իմաստավորելով ու վեր հանելով լեզվի և արտալեզվական իրականության նույնականությունը:

Ключевые слова: агглютинация, флективно-агглютинативный язык, деагглютинация, фузия, изоляция, собственно флективная фузия, флективно-агглютинативная фузия, флективная агглютинация без фузии

Д. В. Гюльзатян – Взгляд на структурные типы языковых композиций. Чтобы выяснить структурный тип того или иного языка, не следует ограничиваться только его морфологической системой. Учитывая разноуровневые данные, надо отметить, что современный армянский язык относится не к агглютинативному, а к флективно-агглютинативному типу, более того – в его двух литературных разновид-

ностях наблюдается различное соотношение агглютинации и флективности. В восточноармянском языке флективных компонентов встречается больше, чем в западноармянском языке. Кроме того, есть и другие параметры оценки структуры: фузия, изоляция, агглютинация, деглутинация или инкорпорация, синтетизм и аналитизм, которые в той или иной степени встречаются во всех языках и имеют равноценную значимость. В морфологической системе восточноармянского языка есть также переходные подтипы, учитывая которые мы выделяем: 1) собственно флективную фузию, 2) флективно-агглютинативную фузию, 3) флективную агглютинацию без фузии. Задачей современной типологии является определение соотношений между ними.

Key words: agglutination, flecto-agglutinative language, deglutination, fusion, isolation, pure flective fusion, flecto-agglutinative fusion, unfusional flecto-agglutination.

D. V. Gyulzatyan – Look at Structural Types of Linguistic compositions. To find out the structural type of this or that language, it should not only be limited to its morphological system. Taking into account different levels, it has become obvious that Modern Armenian belongs not to an agglutinative language but to flecto-agglutinative language, even its two literary branches have different proportions of agglutination and flection. In Eastern Armenian the component of flection prevails comparing it with Western Armenian. In addition, there are other parameters of structural estimation, such as fusion, isolation, agglutination, deglutination or incorporation, synthesis and analysis, which to this or that extend are available in all languages and are of equal importance. In Eastern Armenian morphological system, there are also transitional sub-types, which we distinguish between: 1) pure flective fusion; 2) flecto-agglutinative fusion; 3) unfusional flecto-agglutination. The actual problem of modern typology is to find out in each language the amount of each of them.

**ԱՐԱԲԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՍՏ. ՄԱԼԽԱՍՅԱՆՑԻ
«ՀԱՅԵՐԵՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ»-ՈՒՄ**

Բանասիր. գիտ. թեկնածու Ս. Ա. Միքայելյան

sonmiq20@gmail.com

Բանալի բառեր. հայերենի արաբական փոխառություններ, ընդհանուր գործածություն ունեցող բառեր, բարբառային բառեր, հազվադեպ կիրառվող բառեր, մեռած բառեր և նշանակություններ:

Մեր նախորդ հոդվածներում հայերենի արաբական փոխառություններն ուսումնասիրել ենք ըստ Հ.Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ի¹: Այդ բառարանն, ինչ խոսք, պարունակում է հարուստ նյութ, ընդ որում բավականին ընդգրկուն, համապարփակ և բազմաշերտ²:

Սույն հոդվածում արաբական փոխառություններին անդրադառնում ենք ըստ մեկ այլ, ժամանակագրական առումով ավելի ուշ շրջանին պատկանող հայերենի կարևորագույն բառարաններից Ստ.Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ի³: Ի տարբերություն նախորդի՝ այս բառարանում բերվող արաբական փոխառությունների զգալի մասը, բնականաբար, համարվում է նոր գրական հայերենի բառապաշարի գործածական բառեր:

Այս երկու հսկայածավալ բառարանների կազմման սկզբունքները, ելնելով նրանց բնույթից, տարբեր են, սակայն մեր հարցին առնչվող հայերենի արաբական բառաշերտի համակողմանի ուսումնասիրության առումով բավականաչափ կարևորություն ունեն: ՀԱԲ-ում ընդգրկված արաբերեն փոխառությունները, որոնք քաղված են գլխավորապես հայ միջնադարյան մատենագրությունից, բերված են իրենց համապատասխան բացատրություններով, գործածության սկզբնաղբյուրներով, ստուգաբանություններով, արա-

¹ Տե՛ս Ս.Միքայելյան, Միջին հայերենի շրջանում կատարված արաբական փոխառությունների բաղաձայնական համակարգը //«Լեզու և լեզվաբանություն», 2017, էջ 37 - 48, Ս.Միքայելյան, Ձևաբանական և բառակազմական դիտարկումներ միջին հայերենի արաբական փոխառությունների վերաբերյալ //«Լեզու և լեզվաբանություն», 2018, 2 (19), էջ 34-40:

² Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հհ. 1-4, Ե., 1971-1979:

³ Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան հհ. 1-4, Ե., 1944-1945:

բերեն համարժեք ձևերով, իսկ որոշ բառերի դեպքում՝ հայերեն բարբառային տարբերակներով, թեև պետք է նշել, որ փոխառությունների բարբառային բառաշերտն առավելապես ներառված է Հ. Աճառյանի «Հայերեն գաւառական բառարան» և «Թուրքերենից փոխառեալ բառեր հայերէնի մեջ» աշխատություններում⁴:

Ստ.Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ն ընդգրկում է հայերենի՝ 5-րդ դ. մինչև 20-րդ դ. գրեթե կեսերի բառապաշարը, այդ թվում նաև՝ արաբերեն փոխառությունները: Հատկանշական է, որ Հ.Աճառյանի՝ վերոնշյալ բառարանների բառամթերքից բացի, այս դեպքում կան նաև արաբերեն այնպիսի բառեր, որոնք ավելի նոր շրջանի պատկանելով, չկան այլ բառարաններում: Այս բառերի շնորհիվ է նաև, որ հնարավոր է հասկանալ, թե փոխատու և փոխառու լեզուները պատմական զարգացման ընթացքում ինչպիսի առնչություն են ունեցել և այժմ ունեն: Բառարանում նշվում է նաև փոխառության՝ ուղղակի կամ միջնորդավորված լինելը (օր.՝ արաբ, արաբ-ռուս., արաբ.-ռուս. ֆրանս.-ից, արաբ.-տաճկ.), որը ցույց է տալիս բառի՝ հայերենին անցնելու ուղիները: Այս հանգամանքը կարևոր նշանակություն ունի քննվող նյութը լեզվի՝ պատմամշակութային, աշխարհաքաղաքական գործոնների զարգացման համատեքստում դիտարկելու պարագայում:

Բառարանի կազմման սկզբունքին համապատասխան՝ արաբերեն փոխառությունները ևս բաժանված են գործառական և ժամանակագրական տարբեր բառաշերտերի՝ *լեզվում (և՛ հին, և՛ նոր) ընդհանուր գործածություն ստացած բառեր, զավառական կամ բարբառային բառեր* (+ նշանով դրված), *մեռած կամ հազվադեպ կիրառվող բառեր, մեռած բառեր և նշանակություններ* (*նշանով դրված) (հեղինակի բնորոշմամբ՝ այս վերջին դասակարգումը սուբյեկտիվ է և պայմանական (թեև մեր դիտարկմամբ՝ բավականին արժանահավաստ)):

Առանձին կարևորություն է ներկայացնում նաև բազմիմաստ բառերի ուսումնասիրությունը՝ դիտարկելով այն բառի պատմական զարգացման համատեքստում, որը թույլ է տալիս վերհանելու

⁴ Տե՛ս Հ. Աճառեան, Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913: Նույնի՝ Թուրքերենէ փոխառեալ բառեր հայերէնի մեջ, Մոսկուա-Վաղարշապատ, 1902: Գրքի վերնագիրը պայմանական է. դրանք փոխառություններ են օսմաներենից, որը կազմված է թուրքերենի, արաբերենի և պարսկերենի խառնուրդով (տե՛ս Հ. Աճառեան, նշվ. աշխ., էջ 14):

բազմիմաստության առաջացման օրինաչափությունները և իմաստների ներքին կապը, որը, թեև, առանձին դեպքերում, այնքան էլ պարզորոշ չէ:

Ստորև Ստ.Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան» աշխատությունից մեր առանձնացրած արաբերեն փոխառյալ բառերից մի քանիսը փորձենք ներկայացնել վերոնշյալ լեզվական գործոնների հաշվառումով:

1. *Լեզվում ընդհանուր գործածություն ստացած բառեր:*

ա) *Ամիրալ* «ռազմածովային ծառայության բարձրագույն պաշտոնյա» (արաբ. amir-al-bahr, բառացի՝ «ծովի ղեկավար, տիրակալ»)⁵: Բառը հայերենին է անցել ռուսերենի միջնորդությամբ⁶: Ռուսերենն, իր հերթին, 17-րդ դ. փոխառել է գերմաներենից կամ հոլանդերենից: Այս լեզուներին անցել է հին ֆրանսերենից՝ a(d)miral տարբերակով, որն էլ ծագում է արաբերենի amir-al-bahr, «ծովի ղեկավար, տիրակալ» բառակապակցությունից⁷:

Ինչպես կարելի է նկատել, նկարագրական կառույցի երկրորդ բաղադրիչը՝ bahr («ծով»), փոխառու լեզվում (լեզուներում) չի պահպանվել: Մեր լեզվի պատմական զարգացման ընթացքում բառն աստիճանաբար կորցրել է կենսունակությունը, դուրս մղվել ակտիվ բառապաշարից, փոխարինվել հայերեն «ծովակալ» համարժեքով:

բ) *Ալգեբրա* «մաթեմատիկայի այն բաժինը, որում քանակությունները հաշվվում են տառերի միջոցով» (արաբ. al-gebr բառացի՝ «միացումն մասերի, համալրում»)⁸: Բառը հայերենին է անցել ռուսերենի միջնորդությամբ, որն էլ իր հերթին փոխառել է գերմաներեն al-gebr տարբերակից⁹: 12-րդ դ. այս գիտաճյուղը թափանցեց Եվրոպա և սկսեց արագորեն զարգանալ: Տերմինը առաջին անգամ կիրառել է ծագումով պարսիկ, միջնադարյան արաբագիր գիտնական Ալ-Խորեզմին:

⁵ Փոխառյալ բառերի գրառման համար գործածվել է Baskerville MT for Brill 02 տառադարձման համակարգը (տե՛ս [www. brill.com](http://www.brill.com)), իսկ նրանց համարժեք ձևերի և իմաստների՝ հայերեն նշված աշխատություններում տրված տարբերակները մեր կողմից համեմատվել են *"Al-Qamus al-jadid"*, T., 1985 (արաբերեն) և *Баранов X., Большой арабско-русский словарь*, т. 1, 2, М., 2002) բառարաններում ներկայացված տարբերակների հետ: Արաբերեն բառերի՝ վերոնշյալ աղբյուրներում ներկայացված տառադարձումը ճշգրտվել և միօրինակացվել է:

⁶ Տե՛ս Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 1, էջ 29:

⁷ Տե՛ս Մ. Փասեր, Этимологический словарь русского языка, т. 1, М. 1986, էջ 62:

⁸ Տե՛ս Ստ. Մալխասյանց, նշվ. աշխ., էջ 16:

⁹ Տե՛ս Մ. Փասեր, նշվ. աշխ., էջ 70:

Արաբերեն ծագմամբ, համընդհանուր գիտական կիրառություն ունեցող այս բառի գործածությունը ևս աստիճանաբար դուրս է մղվել մեր լեզվի ակտիվ բառապաշարից՝ փոխարինվելով հայերեն համարժեք *«հանրահաշիվ»* տարբերակով:

գ) *Ալկոհոլ* (արաբ.՝ al-kuhul «1.ծափրաներկ, 2.շատ մաքուր, կրկին թորած սպիրտ») բառը ևս ընդգրկված է լեզվում ընդհանուր գործածություն ստացած բառախմբում¹⁰: Բառիմաստի ծագմանը, զարգացման օրինաչափություններին անդրադարձել ենք մեր նախորդ հոդվածում¹¹: Այստեղ նշենք միայն, որ ի տարբերություն վերոնշյալ փոխառությունների, այս բառը հայերենում կենսունակ է, կիրառվում է «ոգելից խմիչք» համարժեք տարբերակի հետ զուգահեռ, ստեղծվել են նոր բառաձևեր, ինչպես՝ *ալկոհոլային, ալկոհոլացնել* և այլն:

դ) *Գազել*՝ «երկտող տներից կազմված ոտանավոր, որում յուրաքանչյուր տան վերջին հատվածը կրկնում է առաջինի վերջավորությունը» (արաբ. gazal «սիրային, քնարերգական բանաստեղծություն», ծագում է gazala «հաճոյախոսել, սիրալիրություն, սիրախաղ անել» արմատից)¹²: Սա միջնադարյան արաբական (արևելյան) տաղաչափությունից փոխառված, չափածո ստեղծագործություններում կիրառվող ձև է, որը գործածություն է ստացել նաև հայ քնարերգության մեջ:

ե) *Աճպարար* «ձեռնածու» (արաբ. ‘ajab «զարմանք, հիացմունք» + հայ.՝ *արար*) բառը ևս ընդգրկված է հայերենի համընդհանուր գործածություն ստացած բառերի մեջ¹³: Այն միջինհայերենյան շրջանում կատարված փոխառություն է, որն աստիճանաբար յուրացվել է լեզվում, առայսօր կենսունակ է, «ձեռնածու» հայերեն համարժեքի հետ ունի զուգահեռաբար կիրառություն: Ավելին, փոխատու լեզվի համեմատությամբ, նկատելի է բառիմաստի զարգացում. բառը կիրառվում է նաև փոխաբերական՝ «խաբեբա» իմաստով: Բացի այդ, հիմք է հանդիսացել նոր բառերի կազմության՝ *աճպարարություն* «1.աճպարար լինելը, աճպարարի արհեստը, 2.ճարպիկ խաբեբայություն» և այլն:

¹⁰ Տե՛ս *Ստ. Մալխասյանց*, նշվ. աշխ., էջ 18:

¹¹ Տե՛ս *Ս. Միքայելյան*, Արդի գրական հայերենի՝ արաբերեն ծագման մի քանի փոխառությունների մասին // *«Լեզու և լեզվաբանություն»*, 2019, 2, էջ 38-42:

¹² Տե՛ս *Ստ. Մալխասյանց*, նշվ. աշխ., էջ 403:

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 54:

2. Գավառական կամ բարբառային բառեր:

ա) *Զավթել* բառը վկայված չէ Հ.Աճառյանի «Արմատական բառարան»-ում, Գ.Զահուկյանի «Հայերեն ստուգաբանական բառարանում»: Բառը գտնում ենք Ստ.Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում»՝ որպես գավառային կամ բարբառային բառ (+ նշանով)՝ «1.գրավել, տիրապետել, իր իշխանության տակ առնել, 2.նվաճել, զսպել» իմաստներով¹⁴: Ըստ հեղինակի՝ այն արաբերեն ծագմամբ (տաճկերենով) միջնորդավորված փոխառություն է (ծագում է արաբ. *dabata* «1. զսպել, պահել, 2. բռնել, որսալ, նվաճել» բայարմատից): Բառը կենսունակ է արդի հայերենում, կան այդ բառով կազմված մի շարք նոր բառեր՝ *զավթիչ, զավթողական, զավթողարար, զավթում*՝ն այլն¹⁵:

բ) *Թայֆա* «1.մարդկանց խումբ, որոնք միացած են իրար հետ մի որոշ (ոչ արդար) նպատակի հասնելու համար. համախոհների խումբ, 2.պարտիա, որ հետամուտ է ոչ այնքան իր քաղաքական շահերը պաշտպանելու, որքան նեղ պարտիական կամ անձնական շահերը (գործածվում է անարգական նշանակությամբ)»¹⁶ (արաբ. *tafa* «1.դաս, շարք, 2.խումբ, դասակարգ»): Թեև հստակ չի նշում բառի՝ հայերենին անցնելու ուղիները և ժամանակաշրջանը, սակայն այն ևս արդի հայերենի բարբառային և խոսակցական տարբերակներում բավականին կենսունակ է: Կիրառվում են նաև *թայֆայական, թայֆայականություն, թայֆաբազ, թայֆամոլ* բառակազմական ձևերը: Հատկանշական է, որ արաբերենում բառը չունի անարգական նշանակությամբ կիրառություն, այսինքն՝ փոխատու լեզվում (կամ լեզուներում) այն բառիմաստի հետագա զարգացման հետևանք է:

գ) *Խալաթ* «1.զգեստ, որով իշխողները պարզևատրում էին որևէ մեկին՝ ի նշան իրենց գոհունակության, 2.երկար ու լայն կապա, որ առավոտյան արթնանալիս հագնում են, 3. նորահարսին տրվող նվեր» (արաբ.՝ *xil'a* «պարզև տրված հագուստ, պարզև») բառն առայսօր կենսունակ է հայերենի բարբառային տարբերակներում և առօրյա-խոսակցական լեզվում: Նկատենք, որ փոխատու լեզվի հա-

¹⁴ Տե՛ս Ստ. Մալխասյանց, նշվ. աշխ., հ. 2, էջ 16:

¹⁵ Տե՛ս Է. Բ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976, էջ 363:

¹⁶ Տե՛ս Ստ. Մալխասյանց, նշվ. աշխ., հ. 2, էջ 80:

մեմատությամբ տեղի է ունեցել բառիմաստի նեղացում, մասնավորեցում:

դ) *խաթաբալա* «փորձանք, դժվար կամ տհաճ դրություն, որի մեջ մարդն ընկնում է» (արաբ. xata' «սխալ, հանցանք», bala «փորձանք») բառը ևս վկայված ենք գտնում Ստ. Մալխասյանցի բառարանում՝ որպես բարբառային կամ գավառական նշանակություն ունեցող, արաբերեն ծագմամբ. այն ամենայն հավանականությամբ միջնորդավորված փոխառություն է:

ե) *Հաբ* բառը «ղեղահատ» նշանակությամբ Ստ. Մալխասյանցը համարում է արաբերեն ծագման բարբառային փոխառություն, որի արաբերեն համարժեքն է habb, թեև չի նշում վերջինիս իմաստը¹⁷: Արաբերեն habb բառն ունի «1. հատիկ, սերմ, կորիզ, 2. պտուղ» իմաստները: Թեև այն վկայված չէ վերը նշված արմատական և ստուգաբանական բառարաններում, սակայն մեզ հավանական է թվում *հաբ* բառի արաբերեն ծագումը, բառիմաստի զարգացման արդյունքում «ղեղահատ» նշանակության ձեռքբերումը: Այն հայերեն համարժեք ձևի հետ զուգահեռաբար կիրառվում է, ավելի հաճախ գործածական է արդի հայերեն խոսակցական լեզվում և բարբառներում:

3. Մենած կամ հազվադեպ կիրառվող բառեր, մենած բառեր և նշանակություններ:

Ինչպես վերը նշեցինք, Ստ. Մալխասյանցը գտնում է, որ այս խմբերի առանձնացումը պայմանական է կատարվել: Համապատասխան միավորների ուսումնասիրությունից նկատել է այն, որ այստեղ առանձնացված են հիմնականում միջինհայերենյան շրջանում կատարված մի շարք փոխառություններ, որոնք ըստ իմաստային (թեմատիկ) խմբերի կարելի է ներկայացնել, որպես՝ 1) միջնադարյան բժշկության մեջ կիրառվող բուսատեսակների անվանումներ, օրինակ՝ *հոտոտ* «աչքացավի համար դեղ» (արաբ. hudad), *աթխար* «վաղամեռուկ խոտ» (արաբ. ixir), *կակիկայ* «դեղի տեսակ. աղի ծաղիկ» 2) հարկատեսակներ՝ *աղլհակ* «փարախի ոչխարի վրա դրված հարկ» (թրք. *աղլ* «փարախ» և արաբ.՝ haqq «իրավունք» բառերից), *հազր* «եզան վրա դրված հարկ» («փարախ, մակաղատեղ, ցանկապատ»), *ուշուր* «տասանորդի տուրք», *դաման* «հարկ, տուրք» (damn «երաշխավորություն, վնասի հատուցում»), *դաւիլ* «դաշնագիր,

¹⁷ Տե՛ս նույն տեքստում, էջ 7:

մութիակ» (արաբ.՝ tahwil «մութիակ») և զանազան այլ իմաստային (թեմատիկ) խմբերին առնչվող բառային միավորներ, որոնք անվանող երևույթները և հասկացությունները ժամանակակից կյանքի բաղադրիչներ չեն:

Ключевые слова: арабские заимствования армянского языка, общеупотребительные слова, диалектные слова, редко используемые слова, мертвые слова и значения.

С. А. Микаелян, Арабские заимствования “Армянского толкового словаря” Ст. Малхасянца. В статье рассматриваются арабские заимствования армянского языка согласно “Армянского толкового словаря” Ст. Малхасянца. Исследование показывает, что часть слов продуктивна и сегодня, некоторые слова используются параллельно с армянскими эквивалентами, а некоторая часть вытеснялась из активного запаса слов.

Key words: Arabic borrowings of Armenian, common words, dialectal words, rarely used words, dead words and meanings.

S. A. Mikayelyan. The Arabic Borrowings of Malkhasyants' "Armenian Explanatory Dictionary". The article studies the Arabic borrowings of Armenian according to Armenian explanatory dictionary compiled by St. Malkhasyants. Research shows that a group of words are still viable in Armenian today, a group of words are used in parallel with the Armenian equivalent, and a number of words, having lost their viability, have been pushed out of the active vocabulary

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ. ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ. DISCUSSIONS

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

Բանասիր. գիտ. դոկտոր Հ. Հ. Մեսրոպյան

Բանալի բառեր. բարբառ և խոսվածք. տարածքային տարբերակներ, Ղարաբաղի բարբառ, Սիսիանի խոսվածք, Գորիսի ենթաբարբառ. խոսակցական լեզու. Պարսկահայ խոսվածքներ, բարբառային կղզյակներ:

«Մեփական տիպը հայկականք ոչ ուրեք՝ բայց յԱյրարատեան բնաշխարհէն՝ այնպէս ճշգրիտ երեւին յերկրի Հայոց, որպէս յաշխարհիս Սիսական. զի թէպէտ և Տուրուբերան կենդրոնագոյն է, քան զայլսն և հարուստ ազգային յիշատակօք, այլ Սիւնիք յամառագոյն իմն թուին հանդիսացեալ ի պահուստ ազգային ոգւոյ և աւանդից, յոլովագոյնս ունելով նշխարս և արձանս նախնեաց գրաւորս և անգիրս»¹, - այսպէս է բնութագրում Սյունյաց աշխարհը Հայր Ալիշանը:

Ինչպէս կարելի է նկատել, այդ տարածքի պատմաաշխարհագրական առանձնահատկություններից բացի նշվում է հոգևոր ժառանգության՝ անգիր ավանդության մասին, որը ներառում է լեզուն՝ Սյունիքի տարածաշրջանին բնորոշ բարբառները և խոսվածքները:

Սյունիքի տարածքային լեզվական տարբերակին է նվիրված Քարահունջի բնակիչ Ն. Վարդապետյանի «Սյունյաց բարբառը» ուսումնասիրությունը², որում մեկնաբանվում են *Սյունիքի բարբառ*, կամ ինչպէս նախկինում էր ասվում, *Գորիսի ենթաբարբառ* կամ *Գորիսի խոսվածք* գիտական ըմբռնումները:

¹ Սիսական, Տեղագրություն Սիւնեաց աշխարհի, ի Հ. Ղեւոնդեայ Մ. Ալիշան, Վենետիկ, ի Սիսիթարայ վանս ի Ս. Ղազար, 1893, էջ 1:

² Ն. Հ. Վարդապետյան, Սյունյաց բարբառը, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ (ձեռագիր հավաքածու), Ե., 1961, 440 էջ (այսուհետև՝ ՆՎՍԲ):

Վկայաբերելով Ա. Ղարիբյանի և Ա. Գրիգորյանի տեսակետները, ըստ որոնց Սյունիքի լեզուն Ղարաբաղի բարբառի խոսվածքներից է, Ն. Վարդապետյանն առաջադրում է իր տեսակետը: Նա գրում է. «Գորիսի «ենթաբարբառի» մանրագնին հետազոտությունը մեզ բերեց այն համոզման, որ նա ոչ թե Ղարաբաղի խոսվածքն է կամ ենթաբարբառը, այլ որոշակիորեն ձևավորված ու մշակված մի ինքնուրույն բարբառ է, որը շփման որոշ կետեր ունի ինչպես Ղարաբաղի, նույնպես և Արարատյան (Երևանի) բարբառի հետ»³: Իսկ ըստ Ա. Մարգարյանի՝ «Գորիսի (իմա՝ Սյունիքի) և Ղարաբաղի (իմա՝ Արցախի) բարբառները սերում են երբեմնի մի միասնական մայր բարբառից և այլ բան չեն, քան նրա երկու առանձին ճյուղերը, որոնք իրենց պատմական կյանքի զարգացման ընթացքում ձեռք են բերել միմյանցից տարբեր առանձնահատկություններ և ինքնորոշվել իբրև ինքնուրույն ու անկախ բարբառներ»⁴:

Ն. Վարդապետյանը *Գորիսի ենթաբարբառ* տերմինի փոխարեն առաջադրում է *Սյունյաց բարբառ* տարբերակը: Նա գրում է. «Նկատի ունենալով, որ քննարկվող բարբառը ընդգրկում է պատմական Սյունիքի կենտրոնական հատվածը, որ հիշյալ բարբառը այժմ տարածված է Գորիսի, Սիսիանի և մասամբ Ղափանի շրջաններում, այլև VIII դարի քերական Ստ.Սյունեցու վկայությունն ու անվանումը, մենք ճիշտ ու նպատակահարմար համարեցինք այդ բարբառը կոչել *Սյունյաց* բարբառ»⁵: Ինչպես գիտենք, Ստեփանոս Սյունեցին իր սահմանած յոթ բարբառների մեջ առանձնացնում է նաև *զՍիւնիս*, որով խոսում էր Զանգեզուրի հայությունը:

Ա. Ղարիբյանը այս տարածաշրջանի ենթաբարբառները միավորում է և տալիս է Ղարաբաղի բարբառի Զանգեզուրի ենթաբարբառ անվանումը: Նա գրում է. «Զանգեզուրի ենթաբարբառը համադրում է մի կողմից Ղարաբաղի բարբառը, մյուս կողմից Արարատյան (Երևանի) բարբառը, բայց Ղարաբաղի բարբառի բացարձակ գերակշռությամբ»⁶:

Ինչպես նկատում ենք, միևնույն տարածքի համար առաջադրվում են երեք՝ Սյունյաց, Զանգեզուրի և Գորիսի բարբառ անվա-

³ Ն. Հ. Վարդապետյան, նշվ. աշխ., էջ II:

⁴ Ա. Ս. Մարգարյան, Գորիսի բարբառ, Ե., 1975, էջ 10:

⁵ Ն. Հ. Վարդապետյան, նշվ. աշխ., էջ IV:

⁶ Ա. Ս. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Ե., 1953, էջ 232:

նումները: Ի դեպ, Ա. Մարգարյանը «Գորիսի բարբառը» աշխատության ներածությունն սկսում է *Գորիսի բարբառը* տերմինով, սակայն ստորև նշում է *Սյունյաց բարբառը*՝ տուրք տալով Ն. Վարդապետյանի *Սյունյաց բարբառ* տերմինին. «Սյունյաց (իմա՝ Գորիսի) բարբառի»⁷:

Այս հարցի պատասխանը տալիս է Գ.Զահուկյանը: Հայերենի բարբառների բազմահատկանիշ դասակարգմամբ խնդրո առարկա լեզվական տարածքային միավորը, բացառյալ Մեղրին, համարում է բարբառների արևելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախիի կամ ծայր հյուսիսարևելյան միջբարբառախմբի Ղարաբաղի բարբառի խոսվածք: Գ. Զահուկյանը Մեղրիի բարբառը դասում է Ագուլիս-Մեղրիի արևելյան բարբառախմբում⁸:

Սյունյաց բարբառն ունի 42 հնչյուն՝ 32 բաղաձայն և 10 պարզ և քմային ձայնավորներ, գործում է Աճառյանի օրենքը: Այն չունի չ հնչյուն, չունի նաև երկբարբառներ և եռաբարբառներ:

Ն. Վարդապետյանը համոզված է, որ «Քմային ձայնավորների առաջացումը բխում է բարբառի հնչյունական սիստեմի զարգացման օրինաչափություններից և ոչ մի ազդեցություն չի կրում օտար լեզուների հնչյունական սիստեմներից»⁹:

Ի տարբերություն ՀՀ մյուս մարզերի, որտեղ հանդիպում են և՛ արևելյան, և՛ արևմտյան խմբակցության բարբառներ, Սյունիքի մարզը լեզվական առումով համասեռ է, և հաղորդակցվում են միայն արևելյան ճյուղի բարբառներով: Բացառապես արևմտահայերով բնակեցված գյուղեր չկան, ուստի չկան և արևմտյան բարբառներ: Սիսիանի Տոլորս ներգաղթած մշեցիները, Ախլաթյանի վանեցիները, Գորիսի Խոտ գյուղը հիմնադրած խութեցիները և այլ արևմտահայեր ժամանակի ընթացքում կորցրել են մայրենի բարբառները:

Սյունիքի մարզում գործածվող բարբառները և խոսվածքները կարելի է առանձնացնել ըստ տարածաքային-գործառական հատկանիշի: Ըստ այդմ՝ առկա է 4 հիմնական խումբ. ա) *Ղարաբաղի բարբառի խոսվածքներ*, բ) *բարբառային տարրերով հարուստ ժողովրդախոսակցական հայերեն*, գ) *պարսկահայ խոսվածքներ* և

⁷ Ա. Մ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 13:

⁸ Տե՛ս Գ. Բ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 135-136:

⁹ Ն. Ն. Վարդապետյան, նշվ. աշխ., էջ 13:

դ) գործածության նեղ շրջանակ ունեցող բարբառային կղզյակներ:

ա) *Ղարաբաղի բարբառի խոսվածքներ*: Արևելյան խմբակ-
ցության Ղարաբաղի բարբառը պատկանում է Ում ճյուղին: Այն
լեզվական ընդհանրություններ ունի Մ ճյուղի Հադրութի, Շաղախ-
Խծաբերդի և Ուրմիայի, Լ ճյուղի Մարաղայի բարբառների և Գորի-
սի, Կապանի, Ղազախի, Գանձակի, Հավարիկի և այլ ենթաբար-
բառների հետ: Տարբեր ժամանակներում Լեռնային Ղարաբաղի
տարբեր վայրերում բնակություն են հաստատել այլ բարբառներով
և խոսվածքներով հաղորդակցվողներ, որոնք լեզվական տարրեր
են ներմուծել Ղարաբաղի բարբառ: Բարբառակիրների աշխարհա-
գրական տեղաշարժերի մասին ստույգ տեղեկություններ է հա-
ղորդում Մ. Բարխուդարյանը «Արցախ» աշխատության մեջ: Ըստ
այդմ՝ Ղարաբաղում ապրում են նաև մասնավորաբար Ղարաղա-
ղից, Նախիջևանից, Խոյից և այլ վայրերից գաղթածներ, ինչպես,
օրինակ՝ Ստեփանակերտի Վարազաբուն գյուղում, Հադրութում,
Զանյաթաղում ապրում են Ղարաղաղից, Նախիջևանիկում՝ Հին
Նախիջևանից, Մեհտիշենում, Սարդարաշենում, Նորագյուղում,
Մարտունու Սպիտակաշենում՝ Խոյից գաղթածներ և այլն: Վերո-
նշյալ բարբառների առկայության, դրանց փոխազդեցության և այ-
սօր արդեն Ում ճյուղի Ղարաբաղի բարբառի գերակայության մա-
սին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Կամո Դավթյանը
«Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» ընդարձակ ուսում-
նասիրության մեջ¹⁰:

Հ. Աճառյանը ժամանակին «Արարատ» ամսագրում գրում է.
«Անձանօթ մնացած բարբառ մը չէ Ղարաբաղի բարբառը: Ընդհա-
կառակը՝ Տփղիսի բարբառին հետ՝ գրականութեան ամենէն աւելի
ծանօթացած հայ բարբառներէն մէկն է. այս բարբառով գրուած աշ-
խատութեանց ամբողջութիւնը կարող է փոքրիկ մատենագրութիւն
մը կազմել»¹¹:

Անցյալ դարի վերջերին Ղարաբաղի բարբառի սահմաններն
ավելի ընդարձակ էին և ձգվում էին մինչև Բաքու և Սումգայիթ,
Գանձակ, Գետաշեն և Դաշտային Ղարաբաղի տարածքով մեկ:

Չնայած գրական հայերենի մեծ ազդեցությանը՝ Ղարաբաղի

¹⁰ Տե՛ս Կ. Դավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Ե., 1966:

¹¹ «Արարատ» (ամսագիր), Ս. Էջմիածին, 1899, էջ 394:

բարբառն այսօր իսկ պահպանում է իր կենսունակությունը: Այդ բարբառով այժմ խոսվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, Հյուսիսային Կովկասի և Միջին Ասիայի որոշ տարածքներում, Չարենցավանում, Աբովյանում և այլուր: Ղարաբաղի բարբառի խոսվածքներից են Տավուշի, Իջևանի, Կարմիրի խոսվածքները, որոնցով այսօր խոսում են 200-300 տարի առաջ Ղարաբաղից վերաբնակված արցախցիները: Ընդհանրապես բնակության այլ վայրեր ընտրած ղարաբաղցիները սիրում են իրենց բարբառը և միմյանց հետ հաղորդակցվում են մայրենի բարբառով: Վերոնշյալ սահմանները նկատի ունենալով՝ կարելի է ասել, որ այժմ Ղարաբաղի բարբառը Արարատյան բարբառից հետո ամենաշատ խոսողներ ունեցող բարբառն է:

Սյունիքի մարզում տարածագործառական առումով գերակայում է Ղարաբաղի բարբառը՝ Միսիանի, Գորիսի, Կապանի խոսվածքներով: Ղարաբաղի բարբառի հաղթարշավի մասին վկայում է Է. Աղայանը՝ գրելով. «Մեղրու բարբառով խոսել են Մեղրու շրջանի բոլոր գյուղերը և Կապանի հարավը, բայց ենթարկվելով Ղարաբաղի բարբառի ազդեցության՝ այդ շրջանի բոլոր գյուղերի խոսվածքները վերածվել են Ղարաբաղի բարբառի՝ պահելով իրենց մեջ մայրենի բարբառի մի շարք գծեր»¹²:

*Ղարաբաղի բարբառի Միսիանի խոսվածք*¹³.- Միսիանում, բացի բնիկներից, կան Ղարաբաղից, Նախիջևանից, Պարսկահայքից եկածներ, 20-րդ դարավերջին՝ Ադրբեջանից տեղահանված հայեր, որոնց խոսվածքներն իրենց ուրույն կնիքն են դրել շրջանի հարավփոփոխ լեզվի վրա: Այս մասին «Ազգագրական հանդեսում» կարդում ենք. «Հայերի փոքրագոյն մասը բնիկներ են և բնակում են Միսիանու Բոնակոթ, Ախլաթեան և Բնունիս, ինչպես և Լորաձորի Շնաթաղ, Լոր և Դարաբաս գիւղերում: Բնիկ են համարում նաև տաթևացիները, իսկ միւս, մեծագոյն մասը գաղթականներ են, որ գլխաւորապէս եկել են Պարսկաստանից 1828-29 թուի ռուս-պարս-

¹² Ս. Ս. Ղարիբջան, նշվ. աշխ., էջ 234:

¹³ Մինչև 20-րդ դարը Միսիանի խոսվածքների և բնակիչների տեղաշարժերի մասին տեղեկացել ենք Ե. Լալայանի «Միսիան, Նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար» աշխատանքից (տե՛ս «Ազգագրական հանդես», Գ հատոր, հմ. 1- 2, Թիֆլիս, 1898, էջ 105-270), ներկայիս լեզվական տվյալները՝ անձամբ կատարած հարցումների հիման վրա, մեզ տրամադրել է Միսիանի բնակիչ պատմաբան Լ. Գրիգորյանը, որին հայտնում ենք մեր շնորհակալությունը:

կական պատերազմների միջոցին: Սրանցից Գերմալիները բռնել են Ալելու, Անգեղակոթ, Ռուշի-թագա քենտ և Ուզ, Մագրա, Բալաք, խոյեցիները՝ Շադատ, Լծեն, սալմաստցիները՝ Ղարաքիլիսա վերջին ժամանակներս սրանցից մի մասը տեղափոխուեց Ղալաջըղ և նրան վերակոչեց երկրորդ կամ նոր Ղարաքիլիսա»¹⁴:

Ըստ Լ. Գրիգորյանի տրամադրած նորագույն տվյալների՝ Ղարաբաղի բարբառի խոսվածքներով, մասամբ նաև բարբառային հատկանիշներով հարուստ խոսակցական հայերենով հաղորդակցվում են Սիսիանի հետևյալ բնակավայրերը. 1) *Շենաթաղ* (Լեռնաշեն), - 17-18-րդ դդ.-ից հիշատակվող այս վայրում հաստատվել են արցախցիներ, նաև պարսկահայեր և գողթնեցիներ: «(Շենաթաղցիները բնիկ են համարում), խօսելիս վերջին խօսքը երկարացնում են: Սրանք միւս գիւղացիների համեմատութեամբ քաղաքավարի և ունևոր են», - գրում է Ե. Լալայանը¹⁵: *Քաղաքավարի* բառից կարելի է ենթադրել, որ գրական հայերենի տարրեր են ներթափանցել բարբառային խոսքի մեջ: 2) Բռնակոթ՝ հարակից Բնունիսով, Ախլաթյան, Լոր, Անգեղակոթ, նաև Շաքի՝ Անգեղակոթի վերաբնակներով, - հիմնականում Ղարաբաղից եկածներ են, կան նաև Խոյ-Սալմաստից ներգաղթածներ, սակայն հաղթել է Ղարաբաղի բարբառի Սիսիանի խոսվածքը: 3) Դարաբասը (Դարբաս), Եաիճին, - բնիկներով բնակեցված հին բնակատեղիներ են, որտեղ գործածվում է Գորիսի խոսվածքին մոտ մի լեզվաճյուղ:

Գորիսի ենթաբարբառ. Ա.Մարգարյանը գրում է. «Գորիսի բարբառը՝ իր ընդգրկած որոշակի սահմաններով, պատմական Սյունիքի լեզվի կամ բարբառի օրգանական շարունակությունն է և, իբրև այդպիսին, ոչ թե ստորադասվում է Ղարաբաղի կամ Արարատյան բարբառին, այլ ունի տեղական բարբառներին բնորոշ իր յուրահատուկ հնչյունական համակարգը, բառային ֆոնդն ու քերականական կառուցվածքը և ամենայն իրավամբ էլ մի ինքնուրույն ու ինքնատիպ բարբառ է»¹⁶: Ապա անվանի լեզվաբանը հավելում է, որ «Գորիսի բարբառը սովորաբար Ղարաբաղի բարբառի մեջ է առնվել և դիտվել իբրև դրա ենթաբարբառներից մեկը: Նման մո-

¹⁴ «Ազգագրական հանդէս», Գ հատոր, հմ. 1- 2, էջ 194:

¹⁵ «Ազգագրական հանդէս», Գ հատոր, էջ 161:

¹⁶ Ա. Մարգարյան, նշվ. աշխ.:

տեցման համար հիմք են ծառայել այն մեծ ընդհանրությունները, որ իրոք գոյություն ունեն այդ երկու բարբառների միջև: Սակայն դրանք միաժամանակ երևան են հանում նաև մի շարք էական տարբերություններ, որոնք դրսևորվում են թե՛ հնչյունական, թե՛ ձևաբանական և թե՛ բառապաշարային համակարգերի մեջ»¹⁷:

Ե. Լալայանը «Ձանգեգուրի գավառ» ուսումնասիրության մեջ Գորիսի բնակիչներին բնիկ չի համարում:

1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով Գորիսում հաստատվել են նաև պարսկահայեր, որոնց բարբառները մոռացվել են՝ բառային-քերականական որոշակի հատկանիշներ թողնելով գորիսեցիների լեզվում:

Գորիսի տարածաշրջանի գրեթե բոլոր գյուղերի խոսվածքները՝ բարբառագիտական ծանուցումներով, գրի է առել ծնունդով գորիսեցի բարբառագետ Ժ. Միքայելյանը: Անտիպ նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում և հասանելի են ուսումնասիրողների համար:

Այսպես, Ժ. Միքայելյանը նշում է, որ Վերինշեն (կոչվել է նաև Հին Գորիս, Կյորես), Բռուն, Խոտ, Կորնիձոր, Տաթև, Սևարանց, Տանձատափ և այլ գյուղերի բնակիչները հիմնականում բնիկներ են, որոնց խոսվածքները շատ քիչ են տարբերվում Գորիս քաղաքի խոսվածքից: Ավանդության համաձայն՝ խնձորեսկցիները եկել են Պարսկաստանից և նախապես բնակվել քարայրերում, հետագայում մոռացել են իրենց բարբառը: Տաթևացիների վկայությամբ 1828 թթ. իրենց գյուղ են ներգաղթել պարսկահայեր, հիմնականում Սալմաստից: Սակայն այժմ խոսվածքային տարբերությունները վերացել են, և ողջ գյուղը խոսում է մեկ ընդհանուր խոսվածքով:

Կապանի տարածքում հիմնականում պահպանված են Ղարաբաղի բարբառային հատկանիշները (Ներքին և Վերին Խոտանան, Արծվանիկ և այլն): Ըստ Ա. Ղարիբջանի՝ «Կապանում կան գյուղեր, որոնք խոսում են Հաղրութի բարբառով (Եղվարդ, Ծավ, Ագարակ, Հանդ, Բերդ, Շիշկերտ և այլն)¹⁸: 19-րդ դարի վերջին Մարտակերտի Առաջաձոր գյուղից մի քանի ընտանիք տեղափոխվել է Կապանի տարածաշրջան, հիմնել է համանուն գյուղ, որտեղ շարունակել է

¹⁷ Նույն տեղում, էջ 7:

¹⁸ Ա. Ս. Ղարիբջան, նշվ. աշխ., էջ 233:

խոսել մայրենի խոսվածքով¹⁹:

բ) *Բարբառային տարրերով հարուստ ժողովրդախոսակցական լեզու*: Սյունիքում տարածքային-գործառական առումով երկրորդ դիրքում է խառը տիպի՝ 2-3 բարբառների համադրությամբ և գրական հայերենի ազդեցությամբ ստեղծված ժողովրդախոսակցական լեզուն: Արարատյան, Հին Նախիջևանի, Ջուղայի, Խոյի, Մարաղայի, Ղարադաղի բարբառները՝ համադրված Ագուլիսի, Ղարաբաղի, Հաղրութի, Մեղրիի բարբառային բառաշերտով, հնչյունական և քերականական տարբեր հատկանիշներով, որպես ժողովրդախոսակցական լեզվի մի տարբերակ, գործածվում են Սիսիան և Մեղրի քաղաքներում, Ագարակում, Քաջարանում, Սիսիանի Շամբում, Տոլորսում և այլուր: Տոլորսի խոսվածքը միջանկյալ դիրք է գրավում Գորիսի խոսվածքի և գրական լեզվի միջև:

Այդպես նաև՝ Սիսիանի Գետաթաղը, որի բնակիչները եկել են Հին Նախիջևանից: Բարբառը պահպանվել է մասամբ, գերակշռող է խոսակցական հայերենը: Սիսիանի Որոտանում և Աղիտոտում ներկայումս բնակվում են Բաքվից և Ադրբեջանի այլ վայրերից տեղահանվածներ, որոնք շրջակա բնակավայրերի և գրական հայերենի ազդեցությամբ հաղորդակցվում են խոսակցական հայերենով: Բարբառով խոսում են տանը կամ միայն հայրենակից տեղահանվածների հետ: Մուցք-Բարձրավանում, Լձենում, Բնունիսում, Ախլաթյանում, Գորայքում տիրապետող է բարբառախառն խոսակցականը: Գորայքը աչքի է ընկնում մոլոկանների բառապաշարից կատարած փոխառություններով: Ախլաթյանից, Տաթևից, Լձենից վերաբնակեցված Նորավանում նախապես տիրապետող Ախլաթյանի խոսվածքին հաղթել է բարբառախառն խոսակցական հայերենը:

գ) *Պարսկահայ խոսվածքներ*: Բարբառակիրները ներգաղթել են 1828-1829 թթ. Խոյի Մահլազան, Ղորուղ և այլ գյուղերից, Մալմաստի Շորիկ, Ճուկեղան, Գոլոզամ, Ասլանիկ, Հմբանա, Մավրա, Սումա, Ենգիջա, Փայաջիկ, Աղբակ, Առաշգիրան, Հաֆթվան, Մարամետ և այլ գյուղերից, որոնք, տարբեր բնույթի որոշակի փոփոխություններով հանդերձ, պահպանել են իրենց տարածքի մայրենին:

Ըստ այսմ՝ Բալաք և Շաղաթ միավորված գյուղերի՝ Նոր Ջու-

¹⁹ Տեղեկությունն ըստ նույն գյուղում ծնված Բ. Գ. Թ., դոց. Լ. Գ. Թեյլանի:

ղայից և Սալմաստից եկած բնակիչները, Աշոտավանի, Ղարաքիլիսա-Միսիանի, Թասիկի, Լծենի, Ծղուկի, Սալվարդի պարսկահայերը բարբառախոս են: Բարձրավան-Մագրայի բնակիչները եկել են Խոյի Ղոխ (Կըռըս) գյուղից: «Գիւղում, Բագուի ազդեցութեամբ, կայ փոքր-ինչ կրթուած երիտասարդութիւն, որ ընկերակցութեամբ ստանում է հայ լրագիրներ և գրքեր», - հիշատակում է Երվանդ Լալայանը²⁰:

1810-20 թթ. հայ բնակչությունից գրկված Անգեղակոթ հնագույն բնակավայրը 1828-ին բնակեցվել է Թավրիզի Ղարա Քյոֆշան գյուղից եկած պարսկահայերով: Շաղաթ գյուղ եկել են Մարաղայից, Խոյից, Սալմաստից: Հացավան գյուղը հիմնադրել են մոտակա գյուղերից, Նախիջևանից եկածները, որոնց լեզուն Խոյի բարբառի Վայքի խոսվածքն է:

Պարսկաստանի Գյարմարի (Թավրիզի մոտ) մահալի Ուզումչի գյուղից եկածներով բնակեցված Ույծի խոսվածքը տեղացիները բաժանում են 2 տեսակի՝ կլանների՝ փափկախոսների, և կոռների՝ շնչեղախոսների:

դ) *Գործածության նեղ շրջանակ ունեցող բարբառային կղզյակներ:* Է. Աղայանը «Մեղրիի բարբառը» աշխատության մեջ ավստոսանքով նշում է, որ խորհրդային կարգերի հաստատումից հետո Մեղրիում բարբառով խոսելը համարվել է ամոթալի երևույթ: «Ս» ճյուղի Մեղրիի հարուստ բարբառը գոյատևել է մինչև 1900-1920 թթ.: Այն կղզյակային դրսևորում է ունեցել Փոքր թաղում և հիմնականում պահպանվել է փոքրաթիվ մեծահասակների խոսքում: «Փոքր թաղում ամբողջ բարբառն ավելի լավ է պահպանված և ավելի հաճախ է գործածվում, քան Մեծ թաղում: Դա նրանից է, որ Մեղրիում եղած բազմաթիվ օտարների ավելի քան 90 տոկոսը կենտրոնացած է Մեծ թաղում, որի շնորհիվ էլ բարբառն ավելի արագորեն է դուրս մղվել ու տեղի տվել նոր՝ գրականին մոտ խոսակցական լեզվին», - անցյալ դարից այսպիսի տվյալներ է ներկայացնում Է. Աղայանը²¹:

Կղզյակային գործառույթ ունեն դժվարհասկանալի Կարճևանի և Կաքավաբերդի բարբառները: «Վաղ ժամանակներում Կաքավաբերդի բարբառը Մեղրու և Կարճևանի բարբառների հետ մի

²⁰ «Ազգագրական հանդես», Գ հատոր, հմ. 1-2, էջ 184:

²¹ Է. Բ. Աղայան, Մեղրու բարբառը, Ե., 1954, էջ 13:

սերտ միասնություն են կազմել և ճյուղային նույն հատկանիշներն են ունեցել», - փաստում է Հ. Մուրադյանը²²: Մ ճյուղի Կարճևանի բարբառը ընդհանրություններ ունի նույն ճյուղի մեջ մտնող Ղարաֆաղի, Արդվինի, Մեղրու, Հաղրութի, Դգմարի, Քելվան-Շաղախի, Ուրմիայի բարբառների հետ:

Կաքավաբերդի բարբառը, Կուրիս, Գուդեմնիս, Վարհավար և Ագարակ բնակավայրերի խոսվածքները հեռացել են Մ ճյուղի բարբառներից և ձեռք են բերել Ում ճյուղի հատկանիշներ:

Այսպիսով, Սյունիքի տարածքի բնակիչների գերակշիռ մասը բնիկ է. կան նաև Պարսկահայքից և Հայաստանի այլ վայրերից եկածներ: Սյունիքի տարածքային լեզվական հիմնական տարբերակը պատկանում է բարբառների արևելյան խմբակցությանը: Այն ներառում է Ղարաֆաղի, Հաղրութի, Կարճևանի, Կաքավաբերդի, Ագուլիս-Մեղրիի, Խոյ-Մարաղայի բարբառների տարբեր խոսվածքներ: Որոշ վայրերում հաղորդակցության միջոց է նաև Արարատյան և Ղարաֆաղի բարբառների լեզվական հատկանիշներ պարունակող խոսակցական հայերենը:

Ключевые слова: Диалект и говор, территориальные варианты, Карабахский диалект, Сисианский говор, Горисский поддиалект, разговорный язык, говоры армян в Персии, диалектные островки.

А. О. Месропян. Общая картина диалектов Сюникской области. Большинство жителей Сюника - коренные жители, а небольшая часть - выходцы из Персармении и других мест Армении. Исходная языковая версия этого района принадлежит к восточной фракции диалектов, в которую входят различные диалекты Карабаха, Гадрута, Какаваберда, Карчевана, Агулис-Мегри, Хой-Мараги. В некоторых местах используются разговорные варианты с особенностями араратского и карабахского диалектов.

Key words: dialect and subdialect, regional variants, dialect of Karabakh, subdialect of Sisian, subdialect of Goris, spoken language, subdialects of Armenian in Iran, islets of dialects.

Н. Н. Mesropyan. The general picture of the dialects of the Syunik region. Most of the inhabitants of Syunik are natives, and a small part came from Persarmenia and other places of Armenia. The original language version of that area belongs to the Eastern faction of dialects, which includes different dialects of Karabakh, Hadrut, Kakavaberd, Karchevan, Agulis-Meghri, Khoy-Maragha. In some places, colloquial versions with the features of the Ararat and Karabakh dialects are used.

²² Հ. Դ. Մուրադյան, Կարճևանի բարբառը, Ե., 1960, էջ 8:

ՆԵՐԿԱՅԻՍ ՍՈՑԻԱԼՑԵՐՈՒՄ ԼԱՏԻՆԱՏԱՌ ՀԱՅԵՐԵՆ ԳՐՈՒԹՅԱՆ ՍԽԱԼ ՁԵՎԵՐԻ ՄԱՍԻՆ

Բանասիր. գիտ. թեկնածու Տ. Վ. Մաֆարյան

Բանալի բառեր. համացանցի սխալ, տառադարձություն, լատինատառ հայերեն, համակարգչային խորհրդանիշ, միացյալ գրություն, կետադրության բացակայություն, մայրենիի անադարտություն:

Լեզուն մտածողության և հաղորդակցության միջոց է, և բառապաշարային, շարահյուսական ու այլ հնարավորությունների ճիշտ օգտագործումը խոսում է ոչ միայն նրա նկատմամբ ճիշտ վերաբերմունքի, այլև գրագիտության և կրթական մակարդակի մասին: Մարդկային հարաբերությունները, տնտեսական, քաղաքական և սոցիալական առնչություններից բացի, մշակութային բնույթ ունեն, ուստի իրենց կնիքն են թողնում տվյալ լեզվամտածողության վրա: Հիշենք այսօր հայերենում շատ տարածված օրինակներ, որոնք պատճենում կամ հարմարեցում են այլ լեզուների համարժեքների, փոխանակ հիմքում ընկած բովանդակության ինքնուրույն ձևակերպման կամ արտահայտման. դրանց տարբեր ժամանակներում նվիրվել են զեկուցումներ, հոդվածներ, նույնիսկ գրքեր: Եվ քանի որ լեզուն կենդանի հաղորդակցման միջոց է, ուստի նման միավորների գործածությունը գրեթե անխուսափելի է, ընդ որում ոչ միայն հայերենում, այլև ուրիշ լեզուներում:

Որպես կենդանի հաղորդակցման միջոց՝ լեզուն կարող է նաև խոսակցականից եկող կամ խոսքիմասային նմանաբանությամբ կայունացող ձևեր ընդունել և գոյության իրավունք տալ սխալին: Դրա հաստատումն է, օրինակ, «ոչ ոք» ժխտական դերանվան կրկնօրինակմամբ «ոչ մեկ» սխալի կայունացումը (ճիշտ է «ոչ մեկը»): Լեզվական բոլոր մակարդակներում սխալների ներմուծման լայն հնարավորություն է բացվել վերջին տարիներին, երբ հաղորդակցության միջոցների մեջ ակնհայտ գերակայություն ունի համացանցի լեզուն: Դրանք այնքան բազմազան են և դրսևորման տարբեր ձևեր ունեն, որ թվում է՝ դժվար է խմբավորել ըստ օրինաչափությունների: Սակայն հետազոտական դիտարկումներից

պարզ է դառնում, որ անհրաժեշտ է դասակարգել սխալները, իսկ տրված բացատրությունները կօգնեն հնարավորինս խուսափել դրանցից (այդ ուղղությամբ քայլեր արվում են):

Համացանցի լեզվի մեջ սխալների զգալի մաս են կազմում գրագիտության պակասի հետևանքով առաջ եկած սխալները, որպիսիք կան միշտ և ամենուր, և անհատական բնույթ ունենալով, դժվար է ասել, թե ինչ կտա դրանց անդրադառնալը: Պարզապես բերենք մի քանի օրինակներ. «Այ սենց երեքիտ կարելի է սովետաշենի զիբիլանոց շպրտել», «Բա, որ թալանում ու չեր թողնում մարդկանց գործերը առաջ գնալ, ուր էիք էտ ժամանակ չէիք տեսնում՝ թե ահը սրտներունտ էր», «Փորցում է հանձնել Ամուլսարը... Թոնելու էս պաշտոնիցդ սենց քայլերի համար» և այլն:

Որոշակի օրինաչափությամբ կրկնվող համացանցի սխալների մեծ մասը կապվում է լատինատառ շարադրանքի հետ կամ նկատելի է լատիներենից (նաև ռուսերենից, ավելի շուտ՝ ռուսաց լեզվի ազդեցությամբ) հայերեն տառադարձության ժամանակ: Այս տիպի սխալներից շատերը բխում են լատինական այբուբենի չիմացությունից կամ առաջանում են տվյալ տառը անգլերեն ընկալելու պատճառով, և այն ունի բավականին ենթատեսակներ:

Այսպես՝ «ժ» հնչյունը նշում են «յ» տառով և «sh» կապակցությամբ. «*Shoxovrdi shaher pashtpanek ev verj*», «*Joxovurt heriqe menak der masin mtaceq*»: Տառադարձության անորոշությունը կամ սխալները նկատվում են «ք» հնչյունը «զ» և «կ» տառերով նշելու ժամանակ ևս. «*Senkeri baker@ kexti mej korac*», «*Mi hat uski ekeK*», «*Xelq-nert lriv gcel eQ*»:

Հաճախադեպ են «չ» և «շ» հնչյունների խառը գրությունները, ոչ միայն անգլերենի նմանությամբ՝ «ch», «sh», այլև «c», «s», անգամ «z» տառով. «... hangist cunena», «*Sat lave arel...*», «*Inz vat mardik kan, jox jan mi kiz bari exek, herike irar banbasek, dyk mtazek zer hokseri masin*» (Նույն «z» տառը նշում է «յ», «ծ», «ձ» հնչյունները):

«C»-ն դառնում է նաև «ճ» և «ջ» հնչյունների գիրը. «*Davaԅan talanciner minceժ verԅ uzum eq erkire qandeq*», «*Karantinn paԅare mard petke ira berani cap gitena*»: Այն հաճախ գործածվում է որպես «ծ» և, իհարկե, շատ ավելի մեծ չափով՝ որպես «ց» հնչյունների նշան. «*Mer varkern duk kmuԅek menk i vichaki chenk chanahparnern chek baԅum mer gorԅan el drsum e poc(k)vi me hogim bankiԅ anhangstaԅni*», «*tan@*

unen~~c~~ erku anchapahas plus dran~~c~~er toshakaru von~~c~~ drank haskans~~k~~
vortanel mi hogia ashxattum uchi has~~c~~num mu~~c~~u» («...դրանք հասկա-
նան, որ տանն էլ մի հոգի է աշխատում ու չի հասցնում մոծի»):

Ընդհանրապես ինքնատիպ սխալների օրինաչափություններ են դիտվում «ձ», «ծ», նաև «ց» հնչյունների լատինատառ գրության ժամանակ, որտեղ որոշակի դեր խաղում է այլ լեզվուների միջ-
նորդությունը, օրինակ՝ «ձ - дз», «ծ - g- тс» անցումներով: Համա-
ցանցում «ձ - dz» տառադարձումից բացի («Duk *dzer* talanchi tereric
patmek»)՝ հանդիպում ենք «ձ - z» («mysylman@ glyx e barzrazrel»,
«Naxanze erum mejnert»), նաև ուղղակի «ձ - d» («*der* masin mtaceq») փոխարկումները:

Իսկ «ծ - ց»-ի մոտ հնչողությունը հիմք է տալիս գրել «c» տա-
ռով («Ura xextven satken pr~~c~~enenq vojinj te jury ji pxtorvi zato
kpr~~c~~enenq». ակնհայտ է վատ վերաբերմունքին համահունչ ոչ գրա-
գետ լինելը), երբ, ինչպես տեսանք, այն ոչ միայն լատինական բուն
«ց» հնչյունի գիրն է, այլև նրանով են նշում «ջ - ճ - չ» հնչյու-
նախումբը («Ambox~~c~~ kaxakne ed vicakum»):

Նկատելի է տառադարձման հետ անուղղակիորեն առնչվող մի
ոչ սովորական օրինաչափություն (դա կարող է կապված լինել
համակարգչային տեխնիկայի նրբերանգների հետ)՝ նշանների կամ
խորհրդանշանների օգտագործումը: Խնդիր է առաջացնում, օրի-
նակ, հայերենի «ը» որոշիչ հոդը, որը համացանցի հայտնի լեզու-
ներում չկա: Շատ են այն օրինակներ, որոնցում կան «ը»-ի փոխա-
րեն «e»-ի օգտագործման դեպքեր, այլև հայերենի որոշյալ առումը
նշվում է «a» տառով. «Sepakanutan iravunk stanalu vkaiyakanneri
harcha (հարցը) veranaek 100 t. aprum en gnel en baich(բայց) chunen
sepakanutian vkaiyakan»:

Ոչ միայն որոշյալ առման, այլև գաղտնավանկի և բառասկզբի
«ը»-ի փոխարեն շատ է գործածվում @ «շնիկ» նշանը, ընդ որում
տառադարձի տարբեր կարգի սխալներով. օրինակ՝ «Joxovurd@ durs
kga cuyci», «Ptugh@ tsaric heru chi @nkni»: «Nra cav@ (ցավը) qo selfie
hafes@ hangist nsti text entex vichsk@ (վիճակը) shat aveli lurja» և
այլն:

Հանդիպում են նաև որոշյալ առման «y»-ով դրսևորումներ.
օրինակ՝ «inz tvum e ajn lratvamijocnery ovqer kexc lurer en taracum
dati tak»: «Na ahavora arden chaperyancel» և այլն:

Այնուհետև, «չ» հնչյունի գրության տարբեր ձևերի կողքին նշանի ուրույն գործածության օրինակ է «4»-ի նշումը «չորս» թվի ձևով. օրինակ՝ «Henc es pahin, garejur 4oracrac (c = g, ծ) dzkov, hameceq»: Ինքնօրինակ նշանով կիրառություն է «ծ - &» փոխարկումը. օրինակ՝ «Dzer kar&iqov um hramannen katarum vostikan-ner@?: Iskays mardik, irenc hayreniq@ en pashtpanum: Mer naxniner@ mezjarangecin hpart hayreniq, pahpana& hayreniq»: Բերված հատվածը կարծես գրագիտության պակաս չունեցող չունեցող շարադրանք է, սակայն հանդիպում է համացանցի սխալների օրինաչափությունների մի որոշակի մասը, այն է տեխնիկական սխալների ներառում հայերեն նախադասության մեջ: Ընկալելի տառադարձությունների կողքին կան խորհրդանշանային «&»-ն «@» գրերը, նաև շարահյուսական բնույթի վրիպումներ, երբ, օրինակ, օժանդակ բայ-հանգույցը գրում են նախորդ բառի հետ միասին՝ «hramannen, gayle» և այլն:

Ահա համացանցում տարածված սխալներից մեկը այդպիսի շարահյուսական կազմությունների մեջ է, երբ բառի հետ միասին են գրվում օժանդակ բայերը, վերաբերականները, շաղկապները, կապերը և այլն. «Hima pox chunecoxn e/varkov tune arnum»: «Mi dez naye q te in4eqarel ... gone mi xosaceq»: «Ko pes miamitnerin chiste/kanen patvasten sarqen hnazand zombi»: «Karo xa halamulaye/ xaxa xi mard chi»: «Sahman baceq mardik karanan gnan artagna ashxatanqi mexken»: «Vonc haskanakvortanel (որ տանն էլ) mi hogia ashxattum uchi hascnum»: Միայն գրությունների նման առատության մեջ կարող է, օրինակ, ածականի գերադրական աստիճանի «ամենա» մասնիկը գրվել առանձին. «Papikyan@ amena lav ashxatox naxararne, hame kargin txae»:

Ի վերջո, օտար գրերով համակարգչային տեքստերի գրությունների ամենից բնորոշ երևույթներից մեկը կետադրական սխալներն են: Խոսքը չի վերաբերում դերբայական դարձվածի կամ բացահայտչի՝ կանոնի նրբերանգներ ունեցող կետադրությանը, կամ ենթակայի փոփոխության դեպքում «և» շաղկապից առաջ դրվելիք ստորակետին և այլն: Այստեղ մեծ մասամբ կետադրական նշաններ չեն դրվում՝ ո՛չ ստորակետ, ո՛չ անգամ վերջակետ: Նշենք նման սխալներով լեզուն հետևյալ նախադասությունը. «Hetaqrqirh vorna vor amen texh lragrox nkarich ka xi vor es mardh biznesmena

kamel naxkinum patgamavor piti hangist cunena lava anum aroxch
aprelakerpa parapen mnacel lragroxner»:

Լատիներեն կամ ռուսերեն տառադարձությամբ հայերենի լեզ-
վամտածողական խաթարումները, քերականական սխալները հա-
մացանցում երբեմն ցույց են տրվում բառափոխանցումների զավեշ-
տալի օրինակներով: Եվ նման դեպքերում է, որ ասում են, թե ծի-
ծաղը ևս կարող է բուժել: Հումորային վիճակ հաճախ ստեղծվում է
օտար գրերով շարադրանքում շնչեղ բաղաձայնները պարզ խուլի
վերածելով. «-Du im hamar tank es. - Դու էլ իմ համար տրակտոր»:
Այստեղ «թ - տ» փոխարկումը «թանկ ես» ձևը դարձնում է «տանկ ես»
և պատասխանի մեջ՝ «տրակտոր ես», և խոսքի կոմիզմի օրինակ է
առաջանում: Այդպես և «վիրակապված թաթիկ» կապակցության
մեջ լատինատառ գրությունը՝ «virakapvac tatik», «թաթիկը» դարձ-
նում է «տատիկ»: Այդպես նաև՝ «anteri-անթերի» անցումը. «-Anteri
tesq uneq gegeckuhi. -Անտերը դու ես»: Կամ էլ՝ լատինագիր «ռ»-ի
փոխանեն հայերեն «ո» գրությունը. «-Դի՛ր: -Дредем. -Դոե՛լ չես, լրիվ
պերֆերատոր ես, ասի հայատառ գրի»:

Անընդհատ նկատելի է վերջակետերի բացակայությունը, և
ընդհանրապես՝ անփույթ կետադրությունը: Զավեշտալի վիճակներ
են ստեղծվում՝ գաղտնավանկի «ը»-ի հետ կապված. օրինակ՝ «-
Xndrum em shans ktas indz? - Քո շունը իմ մոտ չի»: Խոսքի կոմիզմի
հիմքն այս դեպքում «շանս - հնարավորություն» բառի ընթերցումն է
ը-ով՝ «շանըս» ձևով:

Պարզ խուլ - շնչեղ բաղաձայնների, ինչպես նաև գաղտնա-
վանկի «ը»-ի շփոթը առաջ է բերում այսպիսի զավեշտալի իրավի-
ճակ. «-Bnavorutyunovt toshni hort es nmanvum. - Հորթը դու ես». Առ-
կա է «հորըդ - հորթ» անցման սխալ ընկալման հումորային դրսևո-
րումը:

Օտարագիր փոխանցումներով համացանցի սխալները, ցա-
վոք, իշխող են դառնում նաև հայատառ շարադրանքներում, և այս-
տեղ ևս որոշակի դեր խաղում են վերոնշյալ օրինաչափություն-
ները: Իհարկե, որոշիչը գրագիտության պակասն է, որը փոխապա-
մանավորվում է համակարգչային գրությամբ: Այս երկկողմանի
գործոնների արդյունքում կարող են փոքրատառով գրել հատուկ
անունները:

Ավելի ընդգծված է դառնում բառերի անհարկի միասնական

գրությունը (այնքան, որ դժվար է դա համարել, այսպես կոչված, տեխնիկական վրիպակ), որը կայուն օրինաչափություն է մանավանդ «ա» ձևով օժանդակ բայի դեպքում. օրինակ՝ «Մարտությանն եր պայքարում այն բաների դեմ ինչը հիմա ինքնա անում», «ձեռքներդ գրիչա ընկել ինչ ուզեք կանեք»:

Հաճախադեպ է «էլ» վերաբերականի միացումը նախորդ բառին. օրինակ՝ «Ուժեղի մոտ միշտ *էլ* թույլն *է* մեղավոր»: «Հետևից *էլ* ջուր լից *էնքան* լավ *էն* պահել որ երկրորդը հետևիցա գալիս»: «Ընկել էք *էտ* երկու կտոր երկաթի հետ *էլից* ու *մի* հատ *էլ* թեմա սարքել» և այլն: Ինչպես նկատում ենք, կայուն սխալ է դառնում ոչ միայն բառերի միացումը, այլև «է»-ի փոխարեն «ե»-ի գրությունը: Լատինատառ գրությունից փոխանցվող սխալ գրության օրինաչափություն է դառնում «դ» հոդի գրությունը «տ» տառով. «Bolorit bari lyis»: «Երեքի *տ* կարելի է շարտել»: «Եթե հնարավորություն ունենաիր կյանք *տ* փոխել լիովին...»:

Քիչ են հանդիպում, բայց սկսում է զգալի դառնալ բառերի սխալ գործածությունը, մանավանդ հայերենին լիովին չտիրապետողների խոսքում. «Կե *տ*ցե հզոր բանակը»:

Ամենատարածված սխալը, որտեղ ևս կարող են օտարագիր փոխարկումները դեր խաղացած լինել, կապվում է կետադրության հետ, որն ուղղագրական և քերականական ավելի ցայտուն սխալների կողքին, թվում է, կարող էր աննկատ մնալ: Մինչդեռ կետադրական նշանը խոսքին ոչ միայն հնչերանգային կամ տրոհման իմաստ է հաղորդում, այլև ամբողջացնում է շարույթի բովանդակային ընկալումը: Երբեմն ուղղակիորեն մոռացվում է հայերենի հարցական նշանը. օրինակ՝ «-Դրա գոմբիններից ինչ կա ? ? -Հըր իրանց էշենն առաջ տանում ?»: Եվս մեկ-երկու օրինակ, որը զավեշտ է առհասարակ. -Գիտես ես խի եմ չայնիկը քնելուց միշտ կռավատիս կողքը դնում? -Չե, խի ? -Իմ չայնիկը չի, ուր ուզեմ կդնեմ»: «- Ինչ հիվանդություն ունեք ? - Սկոբելոգ. -Հասկանալի յա...»

Այսպիսով, պարզվում է, որ ներկայիս համացանցի լեզվական սխալների ընդհանուր օրինաչափությունները մեծ մասամբ տեղի են ունենում օտար գրերով հայերենի տառադարձության ժամանակ: Հաճախ են օգտագործվում հայերենին անհարիր տարբեր խորհրդանշաններ՝ @, & և այլն, նկատվում են բառերի ոչ ճիշտ

գրություններ, կետադրական նշանների անտեսում և այլն, որոնց հետևանքով խախտվում է արդի հայերենի գրական կանոնակա-նությանը, անտեսվում է մայրենի լեզվի անադարտությունը: Ինչ-պես ամեն մի լեզվի, այնպես էլ գրական հայերենի կանոնական իրողությունների ամեն մի խախտում կամ անտեսում մերժելի է և պատշաճ հոգաժության պայմաններում հաղթահարելի:

Ключевые слова: ошибки соцсети, замена букв, армянский на латинице, компьютерные символы, слитное писание, отсутствие пунктуации, правильность речи.

Т. В. Сафарян. Неправильные формы армянского писания на латинице в соцсетях и их влияние на армянский язык. Ошибки соцсети, вместе с недостатком грамотности, связаны с неправильной заменой букв (транслитерацией). Например; звуки չ [čʰ], շ [ʃ] равно пишутся [ch], [sh], [c]: с превращается также в знак звуков ճ [č], ծ [c], չ [cʰ] (davačan talančiner). Языковая неразбериха создается от использования компьютерных символов @, & (Ptugh@ tsaricheruchi @nkni, mta&eq). К слову соединяются союзы, вспомогательные глаголы и так далее, кроме того вместо է [ē] используется ե [e] даже տ [a]: կարո՞ւ ա [karox a], ճիշտ է [chisht el], а также միհատ ե [mihate], թույլ ե մեղավոր [tʰuyln e meľavor]. Часто встречается использование вопросительного [?] знака, а также вообще отсутствие знаков препинания (Չոմբիներից ինչ կա՞ [zombinericʰ inčʰ ka], « ...Հետևից ել ջուր լից ենքան լավ են պահել որ երկրորդը հետևից ա գալիս » [hetewicʰelʃur licʰ enkʰan lav en pahel or erkrordə hetevicʰ a galis]. Это, получающее опасное распространение, явление должно быть предотвращено также на уровне научно-аналитического вмешательства – с целью сохранения чистоты родной речи.

Key words: internet mistakes, transliteration, Armenian with Latin letters, computer symbols, joint writing, syntactic composition, lack of punctuation, purity of the native language (Armenian language).

T. V. Safaryan. The erroneous writings of Armenian in Latin characters in social networks and their influence on Armenian language. Language mistakes on Internet, alongside with a lack of literacy, are routinely transmitted from Armenian written with Latin letters. Most of the mistakes are related to incorrect spelling, for instance, the sound ղ [t] is written equally with the letters [ch], [sh], [c] is transferred to these signs of the sound ճ [č], ծ [c], չ [cʰ] (‘davačan talančiner’). Linguistic confusion is created with the use of the computer symbols, such as @, & (‘Ptugh@ tsaric heru chi @nkni’, ‘mta&eq’). The conjunctions, auxiliary verbs, connections, modal words are connected to word, moreover, the letter ե [e] is used instead of է [ē] even letter տ [a] կարո՞ւ ա [karox a], ճիշտ է [chisht el], as well as մի հատ ե [mihate], թույլ ե մեղավոր [tʰuyln e meľavor]. Not only the use of this ‘?’ question mark is frequent, but also the lack of punctuation in general (Չոմբիներից ինչ կա՞ [zombinericʰ inčʰ ka], « ...Հետևից ել ջուր լից ենքան լավ են պահել որ երկրորդը հետևից ա գալիս » [hetewicʰelʃur licʰ enkʰan lav en pahel or erkrordə hetevicʰ a galis]. This dangerous phenomenon must be prevented by scientific-analytical intervention in order to preserve the purity of the native language (Armenian language).

**ԳԵՂԱՐՎԵՍՏԱՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ
ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ**

Բանասիր. գիտ. թեկնածու Ա. Վ. Գալստյան

Բանալի բառեր. գեղարվեստական վավերագրություն, բառապաշար, բառակազմական կաղապար, վերջնաբաղադրիչ, ոճ, բնութագրական միավոր, զուգադրում, հարադրություն:

Բառակազմությունը լեզվի բառապաշարի հարստացման կարևորագույն միջոց է: Հայտնի է, որ բառակազմության առանցքային միավորը բառն է, իսկ ուսումնասիրության գլխավոր առարկան՝ բաղադրյալ բառը, որի կաղապարի մեջ տարբերակվում են միջուկային և առմիջուկային բաղադրիչներ: Ըստ այդմ էլ բաղադրության տեսակները որոշվում են այդ բաղադրիչների բնույթով:

Գեղարվեստական վավերագրությունը՝ որպես ժանր, աչքի է ընկնում փաստավավերագրական և գեղագիտական-գեղարվեստական տարողությամբ: Ուսումնասիրելով այդ ժանրի լեզվատիրույթը՝ նկատելի է, որ լայն կիրառություն ունեն երկբաղադրիչ իսկական կամ բուն բարդությունները: Հուշագրային բնագրերում հաճախադեպ գործածվում են *տուն, պետ, մայր, հայր, հայ, գիր, սեր, հանդես* և այլ վերջնաբաղադրիչներով մասնակաղապարներ¹:

Ներկայացնենք համապատասխան օրինակներ. Բաֆֆու ուղեգրությունների, Պ. Պոռշյանի և այլ հեղինակների հուշերի բառակազմական կաղապարները քննելիս հստակ նկատելի է *տուն, պետ* վերջնաբաղադրիչով կաղապարների գերակայություն:

ա) *Տուն* վերջնաբաղադրիչով բաղադրություններ:

Արևելահայ հուշագրության լեզվում շոշափելի թիվ են կազմում

¹ Լեզվական կաղապարների մասին տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, 228-229: Լ. Ս. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Ե. 1987: Վ. Գ. Համբարձումյան, Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., Ե., 1990: Լ. Ս. Խաչատրյան, Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Ե., 2011:

տուն վերջնաբաղադրիչով կազմությունները²: Նման կազմությունները վկայված են հայերեն դեռևս առաջին գրավոր հուշարձաններում: Դիտարկենք *տուն* վերջնաբաղադրիչով կաղապարներ՝ բնագրային օրինակներով: *Ժամատուն* - «Հայաբնակ գյուղում օտարականի իջևանն է... *Ժամատան* գավիթը» (ԲԵԺ, 62), *վարժատուն* - «Այստեղ վարժատուն էլ է եղել» (ԲԵԺ, 28), *հրատարակչատուն* - «Հաջորդ օրը երևում էր *հրատարակչատանը*» (ՌԶՀ, II, 270), *գրքատուն* - «Նա տարավ ինձ յուր *գրքատունը*» (ԲԵԺ, 118), *մառանատուն* - «Եվ ի՞նչ սիրով էի որոշյալ ժամին մտնում *մառանատուն*» (ՊՊԵԺ, 99-100), *զանգակատուն* - «Նա կանգնած էր *զանգակատան* կամարի ներքո» (ՊՊԵԺ, 62): Աշխույժ գործածություն ունի *սեղանատուն* կազմությունը. «Դու գնա Բոյաղչոնց տանը կա՛ց, միայն ճաշի՛ր մեր *սեղանատանը*» (ՊՊԵԺ, 66), «*Սեղանատանը* կերակուրները պետք էր նրա ձեռքից ընդունել» (ԲԵԺ, 240), *ղիվանատուն* - «Մատաթյանը մի ամառ յուր *ղիվանատնով* ապահովության էր եկել Աշտարակ» (ՊՊԵԺ, 159), *վարչատուն* - «Խեղճ մարդն այնպես էր հոգնում *վարչատան* աշխատանքից, որ այլևս գրելու-թարգմանելու ո՛չ ցանկություն, ո՛չ էլ տրամադրություն էր մնում» (ՍԶՀԳ, 81), *ախոռատուն* - «Դուրս էր գալիս *ախոռատան* գավիթից» (ԲԵԺ, 23), «Նա, իրոք, հատուկ *ախոռատանը* երկու գոմեշներ էր պահում» (ՎՎԸԲԵՎԵ, 314), *հարսանքատուն* - «Իրար հաղորդեցինք նորության մասին և դիմեցինք *հարսանքատուն*» (ՎՎԸԲԵՎԵ, 5), *սրճատուն* «Բազմում էին... հորս *սրճատան* պատվավոր անդամ հաճախորդները» (ԴԴԵԺ, 516), *զանձատուն* - «Առանձնապես հետաքրքիր են հիշատակված *զանձատան*... քանդակները» (ՎՀԱՃ, I, 16), *տապանատուն* - «Մի կողմում դեպի *տապանատուն* բացվող դուռն է» (ՎՀԱՃ, II, 24), *մանկատուն* - «Հաջորդ օրը ամուսինները գնացին *մանկատուն*» (ՀԱՕԻՀ, 174):

«Ավետիք Իսահակյանը ժամանակակիցների հուշերում» գրքում *տուն* վերջնաբաղադրիչով բառերը նույնպես գերակշռում են: Այսպես՝ *մենատուն* - «Տրամադրեցին Գևորգ և Սարիբեկ եղբայրների կանաչապատ ու ծառապատ *մենատունը*, որ գտնվում էր քաղաքի անաղմուկ փողոցներից մեկում» (ԱԻԺՀ, 84-85), *առանձնատուն* - «Պոետը միայնակ նստել էր *առանձնատան* այգում» (ԱԻԺՀ, 14), «Մի

² *Տուն* բաղադրիչով կազմությունների մասին տե՛ս Դ. Ս. Գյուրջինյան, «Տուն» վերջնաբաղադրիչով բաղադրությունները // «Պատմա-բանասիրական հանդես», 1991, 2, էջ 153-162:

քանի տարի անց...բանաստեղծի համար կառուցվեց *առանձնատուն*» (ՌԶՀ, I, 143), *գինետուն* - «Մետեխի բերդի տակ՝ Քոի ափին, մի *գինետուն* կա» (ԱԻԺՀ, 112):

Որբատուն, նկարչատուն և *պարետատուն* կազմությունները գործածված են Գ. Ջանիբեկյանի «Իմ աշխարհից» հուշերի գրքում. «Երեկոյան ժամը 7-ին մենք հավաքվելու ենք դիմացի *որբատան* կողքի շենքում» (ԳՋԻԱ, I, 66), «Մի կողքից «Լիոն» *նկարչատունն* էր...» (ԳՋԻԱ, I, 32), «-Դե, գնանք, գնանք, դարձավ բոլորիս ու առաջ ընկավ դեպի *պարետատուն*» (ԳՋԻԱ, I, 144):

Ս. Կապուտիկյանի ուղեգրության լեզվում գործածվել են *վաճառատուն, խաղատուն, հացատուն, մաքսատուն* - «Նշանավոր *վաճառատունի* մը մեջ գանձապահուհի կաշխատիմ...»: «Հետագայում եղա Մոնտե-Կառլոյի...նշանավոր *խաղատանը*»: «Վարագա սարի՞ց էր արդյոք այդ շողը, Վանա լճի վրա փռված արևածագի՞ց, թե՞ *հացատան* երդիկից»: «Ես ներկայացնում եմ փաստաթղթերը... . *մաքսատան* պաշտոնեուհիները դրանք աչքի են անցկացնում» (ՍԿԽՀԵՎՔԳ, 41, 259, 207, 11), Վ. Փափագյանի հուշերում՝ *հանրատուն* - «Նրա արժանավայել հորաքույր Աղավնի հանմը մի մասնավոր *հանրատուն* էր բաց արել» (ՎՓՀՀ, I, 240): Փ. Թերլեմեզյանի հուշերում՝ *թոնրատուն* - «*Թոնրատան* հատակը հող էր՝ խսիրով ծածկված» (ՓԹԿՀ, 66):

Հաճախ *տուն* վերջնաբաղադրիչով կազմությունները կարող են լինել հեղինակի ասելիքի հիմնաբաղադրիչներ: Այդ են վկայում Ս. Խանգաղյանի «Հորս հետ և առանց հորս» ինքնակենսագրական վիպակում գործածվածները՝ *բերդատուն, տոհմատուն, գլխատուն, քարատուն, այրատուն* և այլն:

բ) *Պետ* վերջնաբաղադրիչով բաղադրություններ:

Եպիսկոպոսապետ - «*Եպիսկոպոսապետը* ընտրվում է միշտ միևնույն տունից» (ԲԵԺ, 117), *բժշկապետ* - «Ես ձեզանից շնորհակալ եմ, պարո՛ն *բժշկապետ*» (ԲԵԺ, 50), *մաքսապետ* - «Ես զարմացա՝ հայտնելով *մաքսապետին*, թե դրանք աղքատ մարդիկ են» (ԲԵԺ, 8), *վարժապետ, գրադարանապետ, հանդերձապետ* - «Ամեն ինչ էր վերջինս դպրոցի համար՝ *վերակացու, վարժապետ, գրադարանապետ, հանդերձապետ* և այլն» (ՊՊԵԺ, 93), քարվանապետ - «*Քարվանապետը* մի հսկա էր» (ՊՊԵԺ, 350), գավառապետ - «Գրել էին մեր *գավառապետին*, և նա էլ մեր տանից պահանջել էր 15 մանեթ»

(ՊՊԵԺ, 386), *զանձապետ, վարդապետ* - «Վերջին անգամ ես տեսա նրան *զանձապետ* Ստեփան Սամվելյանցի սենյակում» (ՊՊԵԺ, 67), «Հենց նույն երեկոյին *զանձապետ* Ներսես *վարդապետ* Խուդավերդյանը... եկավ մոտս» (ՊՊԵԺ, 445), *տպարանապետ* - «-Նա կլինի ձուլարանի վարպետ, դու տպարանի, իսկ ես կլինեմ իբրև կառավարիչ կամ *տպարանապետ*» (ՊՊԵԺ, 425):

«Հուշիկներ»-ում բնորոշներին ներկայացնելու համար գործածական են *պետ* բաղադրիչով այլ կազմություններ՝ *տիրապետ, գորապետ, տասնապետ, հիսնապետ, հարյուրապետ, հազարապետ, հայրապետ, նահապետ*³ և այլն:

Պետ վերջնաբաղադրիչով կազմություններ հաճախ գործածվում են նաև գեղարվեստական վավերագրության այլ բնագրերում⁴: Ժամանակաշրջանի պատկերը ներկայացնելու համար Պ. Պոռշյանի «Հուշեր»-ում, Ե. Շահագիրի «Պերճ Պոռշյանցը» հուշագրությունում, Վ. Վաղարշյանի «Ընկերներս, բարեկամներս և ես» հիշողությունում գործածված է *նահանգապետ* կազմությունը. «Տարվեցանք մենք *նահանգապետի* մոտ» (ՊՊԵԺ, 255): «Պետերբուրգից հրաման է եկել *նահանգապետի* վրա» (ԵՇՀԵՎԴ, 56): «*Նահանգապետի* ներկայացուցիչը թույլատրեց իր հետ քարայր բարձրանալ ինձ և մի վարպետի» (ՎՎԸԲԵՎԵ, 191): *Խմբապետը* գործածված է Լեոյի «Հիշողություններ Հովհաննես Թումանյանի մասին» հուշագրության մեջ. «Այդպես էլ աշխատում էին... դաշնակցական շրջիկներն ու խմբապետները» (ԹԺՀ, 61): *Դասակապետը* գործածված է Ե. Չարենցին նվիրված հուշերում (ՀԵՉՄ, 106):

Ս. Զորյանի «Հովհաննիսյան» հուշ-դիմանկարում գործածված է *կայարանապետ* բառաձևը. «*Կայարանապետն* անձամբ գնում, տոմսեր է բերում բանաստեղծի ամբողջ ընտանիքի համար» (ՍԶՀԳ, 79): *Կրոնապետը* գործածված է Կ. Զարյանի «Միացյալ Նահանգներ» ուղեգրության լեզվում. «Մեծ շուքով նրան տարին պատմական մայրաքաղաքը, մտցրին *կրոնապետի* շքեղ պալատը, որ կառուցված էր

³ *Նահապետ* (նախապետ) - ցեղապետ, նախահայր, պապ. իրանական փոխառություն է. nāfapet > nāfa «ընտանիք» + pet, pat հայ. «պետ»: Հմմտ. Գ. Բ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 560:

⁴ *Պետ* վերջնաբաղադրիչով կազմությունների ակտիվություն է նկատվում նաև արևմտահայ հուշագրության լեզվում: Ա. Ծառուկյանի «Հին երազներ, նոր ճամբարներ» (ՊԷրույթ, 1960) ստեղծագործության մեջ արձանագրել ենք *սպարապետ, դիվանապետ, արարողապետ, խոհարարապետ* կազմությունները:

թանկագին մարմարներով» (ԿԶՄՆ, 283): *Մայրապետը* նույն հեղինակի «Սպանիա» ուղեգրության բառամիավորներից է. «*Մայրապետների* վանքն է և դպրոցը, որ ամառվան եղանակին փակ է» (ԿԶԵԵՎԱՍ, 99): *Բանտապետ* բարդությունը գործածված է Գ. Մահարու «Չարենց-նամե»-ում. «Ի՞նչ ասաց *բանտապետը*՝ մնաց գաղտնիք» (ԳՄԵԺ, 480): *Ուսուցչապետ* բարդությունը գործածված է Հ. Ղանալանյանի «Հուշ-դիմանկարներ»-ում. «*Ուսուցչապե՛տ*, Դուք գիտե՞ք, որ Թաջ Մահալը հայ վարպետների ձեռքով է կառուցված» (ՀՂՀԴ, 159), Ս. Կապուտիկյանի հուշագրության մեջ՝ *ատենապետ* - «Ծխական խորհրդի *ատենապետը* հիսունին մոտեցող ներկայանալի մի տղամարդ է» (ՍԿԽՀԵՎՔԳ, 25): Ա. Շիրվանզադեի հուշերում՝ *ավագակապետ* - «Գիշերը իջնանում է մի *ավագակապետի* տանը» (ԱՇԿԲ, 465): Մ. Ղուկասյանի «Անվերնագիր... 1915» հուշագրության մեջ առկա են *դահճապետ* և *դպրապետ* կազմությունները. «Ինչպե՞ս,- զարմացած կհարցնես դու: - *Դահճապետերին* բարոյապես և նյութապես սպասավորելու միջոցով»: «Հայ եկեղեցու *դպրապետ* էր» (ՄՂԱ, 26): *Սեղանապետ, սենեկապետ, ուստիկանապետ* կազմությունները գտնում ենք Գ. Ջանիբեկյանի հուշագրությունից. «Դարձա սափրիչ..., թղթախաղի *սեղանապետ*» (ԳԶԻԱ, II, 193): «Սկզբում ես իմ *սենեկապետից* փոքր-ինչ խրտնում էի» (ԳԶԻԱ, II, 34): «Հանկարծ այդ *ուստիկանապետը* գոռում է մեզ վրա» (ԳԶԻԱ, II, 86): *Քաղաքապետ* և *պանդոկապետ* կազմությունները գործածված են Վ. Փափագյանի «Հետադարձ հայացք»-ում. «Թատրոնի բարեկամ և ջերմ մեկենաս Ռեշատ Ռըտվանը...Պոլսո *քաղաքապետի* որդին էր» (ՎՓՀՀ, 1, 208): «Երկար տարիներ վարել էր մի ինչ-որ ավստրիացի *պանդոկապետ*» (ՎՓՀՀ, 1, 67): Զ. Բալայանի «...Զիմ Կիլիկիա» ճամփորդական նոթերում գործածված են *նավապետ* և *ղեկապետ* կազմությունները. «Պահանջվում է *նավապետի* և *ղեկապետի* վարպետությունը» (ԶԲԶԿ, 32): *Սպարապետը* գործածված է Վ. Սյունու հուշագրության մեջ. «Ներսէս վրդ. Մելիք Թանգեան Գարեգին Նժդեհին *սպարապետի* կոչում շնորհեց» (ՎՍՀՅՄԱ, 98):

Հուշագրության լեզվում աշխույժ կիրառություն ունեն *մայր, հայր, հայ, գիր, սեր, հանդես, խումբ, ձև, նավ* վերջնաբաղադրիչով բառերը:

գ) *Հայր,մայր, եղբայր* վերջնաբաղադրիչներով բաղադրություններ:

Պ. Պոռշյանի հուշագրության մեջ գործածված է *աշակերտահայր* կազմությունը. «Մի ժողով արի *աշակերտահայրերից*» (ՊՊԵԺ, 155): Բաֆֆու ուղեգրություններում գործածական են *հայր, մայր* վերջնաբաղադրիչներով կազմություններ. «Ես այն առավոտ ժամանակ չունեցա տեսնվելու *վանահոր* հետ» (ԲԵԺ, 18), «Սուրբ *Աստվածամոր* անունով զանազան տեղերում շինված վանքերն ու տաճարներն ունեին ... զանազան գորություններ»: Օրինակներ այլ բնագրերից՝ *աստվածամայր* - «Ամեն կողմ գիրք՝ աթոռների վրա, սեղանի վրա. մի պարզ անկողին՝ սնարին *Աստվածամոր* պատկերը» (ԱԲԵԺ, 9), *վանահայր* - «Արդեն մութն էր, որ հասանք *վանահայր* վարդապետի բնակարանը» (ԹԺՀ, 14), *տիրամայր* - «Դռան մօտ դուրս ելլելէ առաջ, *տիրամայրը* նշան կ'ընէ ինձի, որ մօտը երթամ» (ԱՕՀԵՆՃ, 55), *խոստովանահայր* - «-Ի՞նչ մեղք, որդի՛, - հարցրուց *խոստովանահայրն*», *աբբահայր* - «Ես անմիջապես սկսեցի խոսել հայերեն և հարցրի, թե կարո՞ղ եմ արդյոք տեսնել աբբահորը» (ԱԺՀ, 18), *կնքահայր* - «Մորս *կնքահայրն* էր մեծանուն կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանը» (ՀԱՕԻՀ, 39), *քերթողահայր* - «Ինձի այնպես կերևա, թե *քերթողահայրն* Մովսես այս օրերին համար է գրել...» (ԱԲԵԺ, 19), *գրչեղբայր* - «Հարգելի *գրչեղբայրս* չէր ինձ Լաս-Վեգաս հրավիրողը» (ՍԿԽՀԵՎՔԳ, 256), *մորեղբայր* - «-Ես նրան հավատացրի, -ասաց օրիորդը, - որ դուք իմ *մորեղբայրն* եք» (ԱՇԿԲ, 378):

դ) Հայ բաղադրիչով բաղադրություններ:

Հուշագրության լեզվում գործածության հաճախականության առումով ակտիվ են *հայ* բաղադրիչով հավաքականությունն արտահայտող միավորները՝ *պոլսահայություն* - «Տպավորությունը, չնայած անցած քսանից ավելի տարիներին, դեռևս թարմ էր մնացել *պոլսահայության* հիշողության մեջ» (ՎՓՀՀ, 1, 229), *կանադահայություն* - «*Կանադահայության* հիմնական զանգվածը կուտակված էր Մոնրեալում» (ՍԿԽՀԵՎՔԳ, 33), *ամերիկահայություն* - «*Ամերիկահայության* ամենամեծ թերացումը ժամանակին ամենօրյա վարժարան չհիմնելն էր» (ՍԿԽՀԵՎՔԳ, 32), *ստամբուլահայություն* - «Մոնրեալի պոլսահայ միությունը հիմնվել է *ստամբուլահայության* այս կողմերում հաստատվելու տարիներին» (ՍԿԽՀԵՎՔԳ, 39), *լիբանանահայություն*, *արցախահայություն*, *հունահայություն*, *սփյուռքահայություն* և այլն: Հուշագրության լեզվում գործածության հաճախականություն ունեն նաև *հայ* վերջնաբաղադրիչով որևէ տեղի բնակիչ

մատնանշող կազմությունները՝ *կանադահայ* - «Ստվարացած *կանադահայ* գաղութը մտնում է կյանքի մի նոր փուլ» (ՄԿԽՀԵՎՔԳ, 32), *եզիպտահայ, պոլսահայ, լիբանանահայ* - «Կար նաև *եզիպտահայի, պոլսահայի, լիբանանահայի...* ու նորեկների խնդիրը» (ՄԿԽՀԵՎՔԳ, 33-34), *հունահայ* - «Հետաքրքրվում են հայրենիքով,... պատմում *հունահայ* համայնքի մասին» (ՎՀԱՃ, I, 15), *պարսկահայ* «Հիսունին մոտեցող, աշխույժ, *պարսկահայի* ծորուն առողջանությամբ խոսող ու ժպտացող մարդ էր Գուրգեն Ասատրյանը» (ՄԿԽՀԵՎՔԳ, 178), *սփյուռքահայ, արևելահայ, ֆրանսահայ, իրանահայ, ամերիկահայ, վիրահայ, ռուսահայ, ռումինահայ, մաճառահայ* (հունգարահայ), *թուրքահայ (թրքահայ), տաճկահայ, ալեքսանդրահայ, թբիլիսահայ, կովկասահայ, գաղութահայ, սովետահայ*: Գործածական են նաև *հայակերտ, հայասեր, հայախոս, հայապահպանում, հայապատկան, հայակնիք, հայաշատ, հայաբնակ, հայաբույր, հայագետ, հայանկար, հայամերժ* կազմությունները:

Ե) Գիր վերջնաբաղադրիչով բաղադրություններ:

Հեռագիր - «Այն ժամանակ ո՛չ *հեռագիր* կար և ո՛չ կանոնավոր հաղորդակցություններ» (ՊՊԵԺ, 110), *մահարձանագիր* - «Պապիս՝ Տեր-Առաքելի *մահարձանագիրն* է» (ՊՊԵԺ, 36), *տապանագիր* - «Դանիելի քրոջ *տապանագիրն* է» (ՊՊԵԺ, 36), *վկայագիր* - «Ստանում է Էջմիածնի այն ժամանակվան բարձրագույն հոգևոր կառավարությունից *վկայագիր*» (ՊՊԵԺ, 37), *երդմնագիր* - «Քահանան կարդում էր *երդմնագիրը*» (ՊՊԵԺ, 110), *որդեգիր* - «Հարկավոր էր զարթեցնել բոլոր *որդեգիրներին*» (ՊՊԵԺ, 111), *արագագիր* - «-Գերի հո չե՞մ, - ասացի,- ինձանից ավելի *արագագիրները* կան» (ՊՊԵԺ, 111), *նշանագիր* - ««Կռապաշտի գրեր» ասելով՝ հասկանում էր հայր սուրբն ոչ թե պարսկերենը, այլ հին և անվերժանելի *նշանագրերը*» (ԲԵԺ, 19), *կալվածագիր* - «Ախա՛ր դրանք վանքի դաբալաներն (*կալվածագրերն*) են» (ԲԵԺ, 21), *գրչագիր* - «Ցույց են տալիս քեզ հին *գրչագիր* Ավետարաններ» (ԲԵԺ, 22), *հանրագիր* - «Այս բարեմադրական *հանրագիրը* խորապես հուզեց ամեն սրտեր», *ձայնագիր* - «Ո՛չ *ձայնագիր* ունիմ քովս, ո՛չ լուսանկարիչ գործիք» (ԱԺՀ, 53), *հրապարակագիր* - «*Հրապարակագրի* կյանքիս մեջ շատ անգամ առիթ ունեցած եմ խոսիլ Վենետիկյան հիշատակներուս վրա» (ԱԺՀ, 75), *ազդագիր* - «Կարդալով տարբեր *ազդագրերից* վերցրած վերոհիշյալ տողերը՝ մի տեսակ ցավ ես զգում», *ինքնագիր* - «Ծերունին

ցույց տվեց մեծադիր լուսանկարը և *ինքնագիրը*» (ՄԿԽՀԵՎՔԳ, 230, 63), *հայտագիր* - «Հանդեսի *հայտագրերի* կազմին ...տեսա երեխաների երեք ձեռքերով գծած նկարները» (ՄԿԽՀԵՎՔԳ, 232):

զ) *Սեր* վերջնաբաղադրիչով բաղադրություններ:

Սեր վերջնաբաղադրիչով կառույցներ գործածված են Պ. Պոռշյանի, Բաֆֆու, Դ. Աղայանի, Գ. Ջանիբեկյանի և Վ. Վաղարշյանի հուշերում՝ *քրիստոսասեր, փառասեր, հարցասեր, ուսումնասեր, արհեստասեր, կրոնասեր, ուխտասեր, արծաթասեր, հաճոյասեր, հյուրասեր, զվարճասեր, արդարասեր, ջանասեր, ինքնասեր* և այլն: *Ժամասերը* և *պճնասերը* գործածված են Պ. Պոռշյանի հուշերում. «Հայ ժողովուրդը *Ժամասեր* է»: «Ի բնե Վեհապետյան Գեորգ արքեպիսկոպոսը *պճնասեր* մարդ էր» (ՊՊԵԺ, 119, 105): *Հոսասերը*՝ Դ. Ալիշանին նվիրված հուշերում. «Չգիտեմ, ժամանակի հա՞րգն էր, որ ինքը մենավոր և *լոսասեր* ըրավ, թե՛ յուր մենասիրությունն էր» (ԱԺՀ, 103-104): *Ռուսասերը, գրուցասերը* և *գրականասերը*՝ «Թումանյանը ժամանակակիցների հուշերում» գրքում. «Հայ ժողովուրդն ամբողջովին *ռուսասեր* է, ռուս պետության նվիրված»: «Դա ամենից ավելի հարմար էր *գրուցասեր* և կանոնավոր պարապմունքներից խրտոող Թումանյանին»: ««Վերնատունը» հյուր էին գալիս... լեզվաբաններ կամ *գրականասեր* մարդիկ»: (ԹԺՀ, 9, 27, 12): *Ընթերցասերը, իմաստասերը* և *հեզնասերը* գործածված են Ա. Շիրվանզադեի «Կյանքի բովից» հուշագրության մեջ. «Պետք է ասեմ, որ իմ մորաքրոջ զավակները զարմանալի *ընթերցասեր* էին»: «Քաղաքագետ, *իմաստասեր*, պատմագետ. նա փիլիսոփայորեն քննում, վերաքննում էր ազգերի...վիճակը»: «Բաֆֆին հանգստացավ, և այնուհետև երևան եկավ մի *հեզնասեր*, նույնիսկ սրամիտ մարդ» (ԱՇԿԲ, 32, 66, 443): *Տիրասեր* կազմությունը վերցրել ենք Ա. Իսահակյանին նվիրված հուշերից. «Շատ խելացի ու *տիրասեր* կենդանի է» (ԱԻԺՀ, 84): *Պատվասեր* բաղադրությունը հանդիպել է Ս. Կապուտիկյանի ուղեգրության լեզվում. «Այդպես է վրացին. *պատվասեր*, լայնսիրտ» (ՄԿԽՀԵՎՔԳ, 148): *Տուտբոլասերը* գործածված է Վ. Հարությունյանի «Աշխարհի ճամփաներով» ուղեգրության մեջ. «Միլանցիները հայտնի *ֆուտբոլասերներ* են» (ՎՀԱՃ, I, 53): *Կատակասերը*՝ Հ. Աբեղյանի հուշերում. «Աշխատանքի ընդունվեց... մի աղջիկ՝ ժպտերես ու *կատակասեր*» (ՀԱՕԻՀ, 408): *Խաղասերը*՝ Հ. Հովհաննիսյանի

հուշերում. «Կյանքիս հետագա տարիներին ես էլ չկարողացա հասկանալ *խաղասերների* մոլուցքը» (ՀՀՀԵ, 15):

Մեր վերջնաբաղադրիչով կադապարների գործածությունը միևնույն նախադասության մեջ որոշակի ոճավորում է ստեղծում. «-Ախալցխան լավ քաղաք է, *հյուրասեր, գրասեր ու հայրենասեր* մարդիկ են հայրենակիցներդ» (ՀՂՀԴ, 53): «Որքան *ծնողասեր*, նույնքան *զավակասեր* էր Սիլվան» (ՄԿՄՀԵՎԽ, 180): «Գիտե՞ք ինչ, հայրենիքից հեռու մարդ ավելի *հայրենասեր* ու *ազգասեր* է դառնում» (ԱԻԺՀ, 87):

Է) *Հանդես* վերջնաբաղադրիչով բաղադրություններ:

Կոմիտասին նվիրված հուշերում *հանդես* արմատով առկա են *երգահանդես, նվագահանդես, սգահանդես* կազմությունները, Ա. Իսահակյանին նվիրված հուշերում՝ *տոնահանդես*, Ա. Ահարոնյանի հուշագրության մեջ՝ *գորահանդես*, Վ. Իսահակյանի «Հայրս» երկում՝ *դիմակահանդես, պարահանդես, ցուցահանդես, հաղթահանդես*, Ա. Շիրվանզադեի «Կյանքի բովից»-ում և Ռ. Ջառյանի «Հուշապատում»-ում՝ *պատկերահանդես* բառամիավորները: *Պատվահանդես* կազմությունը գործածված է Ս. Ջորյանի հուշերում. «Այնուհետև Թումանյանին հրավիրեցինք մի երեկոյի, որը թեև նվիրված էր արևմտահայ մի պոետի, բայց փոխվեց Թումանյանի *պատվահանդեսի*» (ԹԺՀ, 122):

ը) *Խումբ* վերջնաբաղադրիչով բաղադրություններ:

Մասնախումբ կազմությունը քաղել ենք «Ալիշանը ժամանակակիցների հուշերում» գրքից. «Այս գրե վերջ *մասնախումբի* կողմե ներկայացուցիչը կարդաց... բարեմադրության գիր» (ԱԺՀ, 51): *Մասնախումբ* բառամիավորը գործածված է նաև Ա. Շիրվանզադեի «Կյանքի բովից» երկում. «Պատվավոր կարգապահության համար քաղաքն ընտրել էր մի *մասնախումբ* «նշանավորներից»» (ԱՇԿԲ, 147): Վ. Իսահակյանի «Հայրս» ստեղծագործության մեջ գործածական են *նվագախումբ, երաժշտախումբ, թատերախումբ, սավառնակախումբ* բառամիավորները, Ս. Կապուտիկյանի հուշագրության լեզվում՝ *երգչախումբ, հանձնախումբ* - «Հաջորդ օրը սուրբ Սահակ և սուրբ Մեսրոպ եկեղեցու գլխավոր երեկոյին բեմ բարձրացավ «Քնար» *երգչախումբը*»: «...Երգ ու խոսքով լեցուն երեկո էր այդ երեկոն, որին նախորդել էր տիկնանց *հաճնախմբի*...հյուրասիրությունը»: (ՄԿԽՀԵՎՔԳ, 177, 39): Վ. Փափազյանի «Հետադարձ հայացք»-ում՝

կառախումբ կազմությունը. «Տեղափոխվեցինք մի այլ *կառախումբ*» (ՎՓՀՀ, 1, 176): Մ. Կապուտիկյանի և Վ. Հարությունյանի ուղեգրության մեջ՝ *արձանախումբ*ը. «Ծառապատ բացատներում բարձրացրած *արձանախմբերը*... համադրություններ էին» (ՄԿԽՀԵՎՔԳ, 109): «Նրանց հիշատակը հավերժացրել է այս սրտաճմլիկ *արձանախմբով*» (ՎՀԱՃ, I, 52): *Աշխարհախումբ* միավորը տեղ է գտել Մ. Արամյանի ուղեգրության մեջ. «Ուխտավորների *աշխարհախումբ* բանակը մեծ էր» (ՄԱՃՄԴԷ, 95):

թ) Վայր վերջնաբաղադրիչով բաղադրություններ:

Սրանք տեղի իմաստ արտահայտող բառամիավորներ են՝ *պաշտոնավայր* - «Սրա առիթը եղել էր *պաշտոնավայրում* կատարված մի դեպք» (ԹԺՀ, 280), *աշխատավայր* - «Հիմնարկը...մի տեսակ մտել է իմ առօրյայի մեջ, համարյա դարձել *աշխատավայր*», *զվարճավայր* - «Մոնրեալի «Հին Սյունիսեն» գարեջրատունը իմ տեսած ամենազվարթ, ամենամիամիտ, ամենամանկական *զվարճավայրն* էր *աշխարհում*», *ընտրավայր* - «Նոյեմբերի 4-ի երեկոյան... գնացինք *ընտրավայր*» (ՄԿԽՀԵՎՔԳ, 51, 141, 142):

ժ) Ձև վերջնաբաղադրիչով բաղադրություններ:

Սրանք նմանության հարաբերություն արտահայտող հարաբերական (որոշ դեպքերում որակական) ածականներ են՝⁵ *խոյաձև* (ԲԵԺ, 95), *սեպաձև* (ԲԵԺ, 19), *կտցաձև* (ԲԱՎ, 35), *աստղաձև*, *աղեղնաձև*, *խաչաձև*, *երկայնաձև*, *ձմերուկաձև* (ԱՇԿԲ, 28, 44, 51, 84, 33), *դուլլաձև*, *մարմնաձև*, *վարչաձև*, *նորաձև*, *այլաձև* (ՄԿԽՀԵՎՔԳ, 71, 126, 165, 172, 266), *նույնաձև*, *օղակաձև* (ՎՀԱՃ, I, 24), *ծավալաձև*, *եռանկյունաձև* (ՎՀԱՃ, I, 29), *տարաձև* (ՎՀԱՃ, I, 51) և այլն:

Ժա) Նալ վերջնաբաղադրիչով բաղադրություններ⁶:

Թիանալ, *առագաստանալ*, *մոտոռանալ*, *շոգենալ*, *դիտանալ*, *սուզանալ*, *հաճանալ*, *ռազմանալ*, *գրոսանալ*, *ջերմանալ*, *մարզա-*

⁵ Մ. Է. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 2002, էջ 131-132:

⁶ Հուշագրության լեզվում զգալի ակտիվություն են ցուցաբերում *նալ* սկզբնաբաղադրիչով բառաձևերը, այսպես՝ *նավահանգիստ*, *նավավար*, *նավամատույց* միավորները քաղել ենք «Այիշանը ժամանակակիցների հուշերում» գրքից, նաև՝ *նավակ*, *նավաստի* (*նավաստի-բժիշկ*), *նավատեր*, *նավապետ*, *նավարկել*, *նավատորմ*, *նավատորմիդ*, *նավախուց*, *նավախցիկ*, *նավակայան*, *նավասենյակ*, *նավամատյան*, *նավամբար*, *նավապահեստ*, *նավախոհա-նոց*, *նավագնացություն*, *նավաբեկություն*, *նավարկություն*, *նավեզր*, *նավակող*, *նավակայք*, *նավառաջք*, *նավաշինարար*, *նավաշինություն* և այլն (օրինակները հիմնականում քաղել ենք Զ. Բալայանի «...Զիմ Կիլիկիա» ճամփորդական նոթերից):

նալ, ցոկանալ, փոխադրանալ, օղանալ, փրկանալ և այլն:

Փաստագրության՝ հայերի տեղահանման նկարագրություններում գործուն են *շոգենալ* և *նավահանգիստ* կազմությունները, որոնց կիրառությունները, ժամանակաշրջանով պայմանավորված, պատճառաբանված են. «*Շոգենավերից* մեկով երկու քույրերը՝ Ալմաստը և Մարինոսը, հասել են Բաթումի»: «Եվ այդպե՛ս հասել Սև ծովի Բաթումի *նավահանգիստ*» (ՄՂԱ, 35): Վ. Հարությունյանի «Աշխարհի ճամփաներով» ուղեգրության մեջ գործածական են *ջերմանալ, զրոսանալ, գետանալ, մոտոռանավակ* կազմությունները (ՎՀԱԸ II, 102, ՎՀԱՃ, I, 215, 192, 26):

Գեղարվեստական վավերագրության լեզվում նկատելի է մի հանգամանք. դա այն է, որ հեղինակները, ելնելով իրենց մասնագիտությունից, գործածում են համապատասխան ոլորտին բնորոշ բառամիավորներ: Այսպես. ճարտարապետ Վ. Հարությունյանը հաճախ գործածում է *կամար* բաղադրիչով բառեր՝ *կամարաձև, կամարակապ, կամարասրահ, կամարաշար, կիսակամար, հաղթակամար* և այլն:

Հուշագրության տվյալ ժամանակաշրջանի պատկերը ներկայացնելու համար հեղինակներն օգտագործում են բնութագրական միավորներ: Այսպես. 19-րդ դարի 90-ական թթ. պատկերը նկարագրելու համար հաճախադեպ գործածվում են *նավթ* բաղադրիչով բառեր՝ *նավթահանք, նավթաշխարհ, նավթարդյունաբերական* և այլն. «...*Նավթ, նավթահանք*. բոլորն էլ ձգտում էին գնալ *նավթաշխարհ*՝ հողեր ձեռք բերելու, *նավթարդյունաբերական* ձեռնարկներ սկսելու» (ՂԱԺՀ, 286):

Բնորոշների աշխատանքային գործունեությունը, կենցաղը ներկայացնելու համար գործածվում են *սենյակ* վերջնաբաղադրիչով բաղադրություններ. *առանձնասենյակ* «Երկու-երեք օր հետո իր *առանձնասենյակի* մեջ անիմաստ վեճ մը ծագեցավ» (ԹԺՀ, 164), *աշխատասենյակ* «Աշխատասենյակը բավականին մեծ էր, ընդարձակ. այդտեղ են իր արխիվը, ձեռագրերը» (ԱԻԺՀ, 69), *ճաշասենյակ* «Տիկին Բիանքան վարձու էր տվել մեզ տան կեսը՝ վերևի երկու սենյակը, իսկ ներքևում՝ խոհանոցն ու *ճաշասենյակը*» (ՎԻՀ, 111), *ննջասենյակ* «Լևոնյանը նետվում է նրա *ննջասենյակը*» (ՍԶՀԳ, 98), *վերնասենյակ* «Յոթվերքի եկեղեցու *վերնասենյակում* էր» (ԵՎՀ, 18):

Առաջադիր հուշագրության լեզվում զգալի կշիռ ունեն *կրկնավոր*

հարադրությունները, որոնք իրենց բաղադրիչ բառի համեմատությամբ ունեն բազմակիության, սաստկության, բաշխականության իմաստային երանգներ. այսպես՝ «Վանքի բակը *ածու-ածու* բաժանված մի գեղեցիկ բուրաստան էր ներկայացնում մեր աչքին» (ՄԱՃՄԴԷ, 94): «Ուխտավորները, *խումբ-խումբ* (բաշխականություն) բաժանված, զվարճանում էին իրենց երկրի սովորության տարագով» (ՄԱՃՄԴԷ, 94): «Ուխտավորների աշխարհախումբ բանակը առանց այն էլ մեծ էր, բայց դարձյալ *նոր-նոր* (բազմակիություն) գունդերով ստվարանում էր մոտակա գյուղերից և Երևանից եկող ուխտավորներով» (ՄԱՃՄԴԷ, 95): «Երկնքով մեկ կլոր գոտու նման *սև-սև* (սաստկություն) ամպեր էին դիզվել» (ԱԻԺՀ, 63):

Հայտնի է, որ զուգադրական կիսահարադրական բառերը, ըստ խոսքիմասային արժեքի, բաժանվում են երկու խմբի՝ անվանական և բայական: Անվանական կիսահարադրական (կամ կցական) բարդ բառեր են կազմվում իմաստով իրար առնչակից գոյականներից, որոնց գործածությունը գեղարվեստական վավերագրության լեզվում նկատելի է: Այդպիսի բարդությունների բաղադրիչներն իմաստով մոտ են և մերձավոր հասկացություններ են արտահայտում: Այդպիսի բարդություններում երկու բաղադրիչները համագոր են և հավասարապես են մասնակցում տվյալ կազմությանը⁷: Օրինակ՝ «Մեր պաշտպանական շրջանը *զենք-զինամթերք* առգրավեց» (ԱԾԲԻԼ, 76), «Այդ *նամակ-գրությամբ* մենք դուրս եկանք Գրողների միությունից» (ԱԻԺՀ, 9), «Բժիշկ Բաբուլյանը... փողոցում հանդիպել է Արմեն Տիգրանյանին, որն Իսահակյանի պես փոքրիկ *բեղ-մորուք* ուներ» (ԱԻԺՀ, 22), «Նա տեսնում է գեղեցիկ տաճարը, ճոխ *գրադարան-մատենադարանը*, տպարանը, թանգարանը...» (ԱԻԵԺ, 13), «Մի *հրաման-կոնդակ* է ստանում ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանից», «Հայրս իր առինքնող ձայնով երգում էր նրա հանրահայտ «Մայրիկիս» *երգ-բանաստեղծությունը*» (ՀՂԳԵ, 3), «Սպենդիարյանը խորամուխ եղավ մեր ժողովրդական *երգ-երաժշտության* ուսումնասիրությանը» (ՀՄՄ, 46), «Ես Բեսարաբիայի խորքերում հանդիպում եմ երևի ամենատարիքավոր հային, որ ապրում է *աշխարհ-մոլորակի* վրա» (ՎՊԸԵ, I, 528) և այլն:

⁷ Հ. Ս. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման միջոցները, Ե., 1982, էջ 162:

Զուգադրական կիսահարադրականները լինում են նաև բազմաբաղադրիչ. «Քարտաշ-որմնադիր-ուստա բանվոր եմ» (ՄԽՀՀԵՎԱՀ, 173), «Զիվանու տղան՝ Գարեգին Լևոնյանը, լավ *հնագետ-ազգագրագետ-գրականագետ-արվեստագետ-մամուլագետ* է» (ԱԻԺՀ, 50):

Հականիշ բաղադրիչներով կազմված անվանական հարադրությունները կարող են արտահայտել ամբողջականության իմաստ. «Որսորդական շունը *գիշեր-ցերեկ* քնած էր ծերության պատճառով» (ՎԱԶՏ, 103):

Բառերի կիսահարադրության սկզբունքով ածականներից սերվում են ածականներ՝ բաղադրիչների առնչակից, հոմանշային հարաբերությամբ. «Այստեղ են հավաքվում մեծ մասամբ *անտուն-անտեր* գործիչները» (ԱՇԿԲ, 459): «*Անթիվ-անհամար* հայկական երգեր լսեց» (ՀՍՄ, 95): «Ամեն տեղերի հայերի ... աչքերը դարձնել է տալիս դեպի *ազգային-եկեղեցական* ընդհանուր կենտրոնը» (ՄԱՃՄԴԷ, 95):

Գեղարվեստավերագրական բնագրերում առկա են նաև հատվածական բաղադրություններ, որոնք կազմվում են առաջին անդամի կա՛մ հոմանիշ, կա՛մ նույն ածանցի կրճատումով. «Մենք թերևս խորապես չէինք գիտակցում, թե *կուլտուր-պատմական* ինչ նշանակալի երևույթ է նվագախմբի ստեղծումը» (ՄԱՃՄԴԷ, 42): «Համերգի ծրագրում տեղ էին գտել... *վոկալ-գործիքային* երկեր և այլ ստեղծագործություններ» (ՀՍՄ, 43): Բառագիտության մեջ հաճախ են հանդիպում *-ական, -ային* վերջածանցներով ձևավորված հատվածական բարդություններ: Հուշագրական բնագրերում, սակայն, գործածված է նաև որևէ տեղի բնակիչ ցույց տվող ցի (*-եցի, -ացի*) ածանցով ձևավորված հատվածական բարդություն, որը հեղինակային ինքնատիպ գործածություն է. «Եղեռնը *վան-վասպուրականցիների* հուշերում» (ԵՎՀ):

Բայական կիսահարադրական բարդությունները կազմվում են՝

1) համանիշ կամ իմաստով մոտ բայերի զուգադրումով. «Մի ամիս է *աղաչում-պաղատում եմ*՝ են սուրճը տար աղա» (ՎՊԸԵ I, 246), «Խոսքը վերաբերում է Պարույրի պես վիճող, *ասող-խոսող*, բոնկուն բնավորությանը» (ԼՀՊ, 3), «Կույր երաժշտի նվագը ... մի ողջ ժողովրդի *անցած-գնացած* ցավատանջ կյանքի վերհուշն է» (ՀՍՄ, 47), «Հուլիսյան զարհուրելի նահանջը Վանից և ուրիշ տեղերից

հարյուր հազարներով հայեր էր *քշել-բերել* մեր կողմերը», «Մարդիկ *խոսում-գրուցում* են մի ժամի չափ»: «Մարդուն միանգամից *գերում-հափշտակում* են բնության ընտրյալ տեղի բազմաթիվ հմայքները» (ԹԺՀ, 96, 128, 91), «Այսպես *գուզվեց-պճնվեց*, մեզ հավաքեց գլխին ու սկսեց մեկ-մեկ հիշել մեր ազգատոհմի *անցած-գնացածներին*» (ՄԽՀՀԵՎԱՀ, 150):

Գործածված են նաև երեք բայ բաղադրիչների զուգադրումով բայական հարադրություններ. «Նույնությամբ վերակենդանացնում է քո առաջ անցյալ այդ պահը, օդի մեջ վաղուց *հնչած-մարած-անհացած* խոսքը» (ՄԿԽՀԵՎՔԳ, 69):

2) Հակառակ բայերի զուգադրումով. «Երկար *գնալ-գալուց* հետո ինձ առաջարկություն բերողները համաձայնվեցին, որ թերթը լինի միանգամայն անկուսակցական» (ԹԺՀ, 68): «Շաբաթը երկու անգամ էջմիածնից Երևան էր *գնում-գալիս*» (ԿԺՀ, 19): «Ես գրողների տանն էի՝ Թոփչյանի առանձնասենյակում, որի դուռը մշտապես բաց էր *գնացող-եկողի* առաջ» (ԼՀՊ, 149):

Ամփոփենք: Գեղարվեստական վավերագրության լեզվում հաճախադեպ են *տուն, պետ, մայր, հայր, հայ, գիր, սեր, հանդես* և այլ վերջնաբաղադրիչներով մասնակաղապարները: Ըստ խոսքիմասային պատկանելության՝ բնութագրական են գոյական + գոյական, մասնակի դեպքերում՝ ածական + գոյական կաղապարները: Գործածված է որևէ տեղի բնակիչ ցույց տվող *ցի (-եցի, -ացի)* ածանցով կազմված հատվածական բարդություն (*վան – վասպուրականցի*): Հուշագիրները իրականության լեզվական պատկերը ներկայացնում են այսպիսի մասնակաղապարներով որոնք պայմանավորված են թեմատիկայով, ժանրային առանձնահատկությամբ, ժամանակաշրջանի բներանգով:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԺՀ - Ալիշանը ժամանակակիցների հուշերում, Ե., 1974, ԱԻԵԺ - Ա. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 5, Ե., 1977, ԱԻԺՀ - Ավետիք Իսահակյանը ժամանակակիցների հուշերում, Ե., 2006, ԱԾԲԻԼ - Ա. Ծառուկյան, Բարև, ինչպե՞ս եք, լա՞վ եք... , Հուշեր Մոնթեի մասին, Ե., 2007, ԱԾՀԵՆՃ - Ա. Ծառուկեան, Հին երազներ, նոր ճամբաներ, Պեյրուք, 1960, ԱՇԿԲ - Ա. Շիրվանզադե, Կյանքի բովից, Հուշեր, Ե., 1982, ԳՄԵԺ - Գ. Մահարի, Երկերի ժողովածու հինգ հատորով, հ.5, Ե., 1989, ԳՋԻԱ, II - Գ. Ջանիբեկյան, Իմ աշխարհից, գիրք II, Թատրոնի հետ, Ե., 1980, ԵՎՀ-

Եղեռնը վան-վասպուրականցիների հուշերում, Ե., 2003, ԵՇՀԵՎԴ - Ե. Շահագիզ, Հիշողություններ և դիմաստվերներ, Ե., 1980, ԶԲԶԿ - Զ. Բալայան, ...Զիմ Կիլիկիա, Էսսե, ճամփորդական նոթեր, Ե., 2005, ԹԺՀ - Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Ե., 1969, ԼՀՊ - Լ. Հախվերդյան, Պարույրը, Խոհագրություն, Ե., 1987, ԿԶԵԵՎԱՍ - Կ. Զարյան, Երկրներ և աստվածներ: Սպանիա, Ե., 1999, ԿԶՄՆ - Կ. Զարյան, Միացյալ Նահանգներ (Երկրներ և Աստվածներ), Ե., 2002, ԿԺՀ - Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, Ե., 2009, ՀԱՕԻՀ - Հ.Աբեղյան, Օրերս ինձ հետ են... , Ե., 2014, ՀՀՀԵ - Հ. Հովհաննիսյան, Հուշերի երեկո, Ե., 1996, ՀՂԳԵ - Հ.Ղանալանյան, Գիտության երախտավորները (Հուշ-դիմանկարներ), Ե., 1982, ՀՂՀԴ - Հ. Ղանալանյան, Հուշ-դիմանկարներ. Անմարելի անուններ, Ե., 1987, ՀՍՍ - Հուշեր, կազմ.՝ Մ. Օթարյան, Տ. Սարգսյան, նվիրվում է Ա. Սպենդիարյանի ծննդյան 140-ամյակին, Ե., 2012, ՂԱԵԺ - Ղ.Աղայան, Երկերի ժողովածու չորս հատորով, 4-րդ հատոր, Ե., 1963, ՂԱԺՀ - Ղազարոս Աղայանը ժամանակակիցների հուշերում, Ե., 1967, ՄԱՃՄԴԵ - Մ.Արամյան, Ճանապարհորդություն Սալիանից դեպ Էջմիածին, «Էջմիածին» հանդես, 2008, սեպտեմբեր, էջ 92-101, ՄՂԱ - Մ. Ղուկասյան, Անվերնագիր... 1915, Ե., 2011, ՊՊԵԺ - Պ.Պռոշյան, Երկերի ժողովածու, հատոր յոթերորդ, Ե., 1964, ՌԶՀ, I, II - Ռ.Զարյան, Հուշապատում, Գիրք I, Ե., 1975, 1977, ՍԶՀԳ - Ս. Զորյան, Հուշերի գիրք, Ե., 1991, ՍԽՀՀԵՎԱՀ - Ս. Խանգաղյան, Հորս հետ և առանց հորս (ինքնակենսագրական վիպակ), Ե., 1986, ՄԿԽՀԵՎՔԳ - Մ. Կապուտիկյան, Խճանկար հոգու և քարտեզի գույներից (ուղեգրություն), Ե., 1985, ՄԿՄՀԵՎԽ - Միլվա Կապուտիկյանը մեր հուշերում և խոհերում, Ե., 2008, ՎԱԶՏ - Վ.Արամյան, Զարմանալի տարիներ, Ե., 1985, ՎԻՀ - Վ. Իսահակյան, Հայրս, Ե., 2000, ՎՀԱՃ, I, II - Վ. Հարությունյան, Աշխարհի ճամփաներով, Ե., 2000, ՎՊԸԵ, I - Վ. Պետրոսյան, Ընտիր երկեր, 2 հատորով, հ. 1, Ե., 1983, ՎՍՀՅՄԱ - Վ. Սիւնի, Հայրենի յուշեր մօտիկ անցեալից, Սէն Ռաֆայել, 1987, ՎՎԸԲՎԵ - Վ.Վաղարշյան, Ընկերներս, բարեկամներս և ես, Ե., 1959, ՎՓՀՀ, 1 - Վ. Փափազյան, Հետադարձ հայացք, գիրք 1, Ե., 1979, ԲԱՎ - Բաֆֆի, Արծիվ Վասպուրականի, Թիֆլիզ, 1893, ԲԵԺ - Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատոր իններորդ, Ուղեգրություններ, պատմական երկեր, Ե., 1987, ՓԹԿՀ - Փ. Թերլեմեզյան, «Կյանքիս հուշերը», Ե., 2017:

Ключевые слова: художественная документалистика, словарный запас, слово-образовательные шаблоны, конечные компоненты, стиль, описательный компонент, параллелизм, сочетание.

А. В. Галстян-Словообразовательные модели художественно-документальных текстов. Исследуя язык художественно-документального жанра, замечаем, что широкое распространение имеют двухкомпетентные реальные сложности. В

мемуарах часто используются шаблоны с конечными компонентами как *unnû* [tun], *uṭun* [{pet}], *uṣun* [mayr], *huṣun* [hayr], *huṣ* [hay], *qḥn* [gir], *uṭn* [ser], *huṭnku* [handes] и др.

Употребляются также слова данного исторического периода. Некоторые мемуаристы используют слова, типичные для определенных профессий. В языке мемуаров большое место занимают также сочетания.

Keywords: documentary fiction, vocabulary, word-formation patterns, final component, style, characteristic, comparison-parallelism.

A. V. Galstyan. Word-formation patterns of the vocabulary of authentic documentary- fiction texts. The study of the linguistic aspect of documentary-fiction genre has detected that the authentic texts of the subject-matter genre appear to contain in abundance units of bicomponent compounding proper. In the authentic texts of the memoir genre, the words with such final components as *unnû* [tun], *uṭun* [{pet}], *uṣun* [mayr], *huṣun* [hayr], *huṣ* [hay], *qḥn* [gir], *uṭn* [ser], *huṭnku* [handes], etc. are high-frequency word-formation patterns.

The lexical units typical of the given time are also recurrent. Some memoirs, due to the scope of professional or specific interests, contain professional terms of the sphere given. At the same time, the language of memoirs tends to contain reduplications in considerable proportion.

TEACHING ESP VOCABULARY BY MEANS OF PURPOSIVE- THEMATIC DIAGRAMMS AND CROSSWORD PUZZLES (On the example of legal english)

PhD in Philological Sciences G. Grigoryan, O. Zakaryan

Keywords: English for Specific Purposes, Legal English, vocabulary, purposive-thematic diagrams, crosswords, teaching process, Lexical approach, methods, techniques.

Introduction.

In our globalized world, a lot of means are used to broaden the area of international law to strengthen its influence and role in international relations. Among the many ways to reach this goal in the 21-st century as an era of humanity, the best way is soft power. Nowadays, the leading tool of soft power is language.

English has been keeping its leading role through centuries until now. If we focus on the importance of English, we will realize, that English is not only a conventional means of communication but also a great resource of information as the dominant majority of books, conferences, even movies, etc. are in English. The English language has different classifications and definitions (lingua franca, and according to its application and functions such as Academic, General English(GE), spoken, etc.). We have tried to highlight one of the most popular roles that are realized for the purpose of teaching/learning English, which is the so-called ESP or English for specific purposes.

In other words, English for what? English for whom? Or even what English?

As for a broader definition of ESP, Hutchinson and Waters theorize, "ESP is an approach to language teaching in which all decisions as to content and method are based on the learner's reason for learning"¹.

Almost every linguist will agree that it is not an easy task to learn/teach foreign languages, especially for a specific purpose. And it is no doubt that the essential component in every language is vocabulary. There

¹ Hutchinson T., Waters A., "English for Specific Purposes: a learning-centred approach", Cambridge University Press, 1987, p. 19.

are many approaches, which offer new methods of facilitating learning new vocabularies: one of them is the Lexical approach, coined by Michael Lewis in his book "The Lexical Approach" published in 1993. According to him, it is a unique way of lexis-based teaching. Also, in this approach, he puts words at the centre of language².

Origins of ESP.

English for Specific Purposes (ESP) has emerged as a single field in the 1960s. The emergence of ESP has resulted from many occurrences like the Second World War in 1945, the rapid growth of science and technology, the increased use of English as the international language of science, technology and business, the increased economic power of certain oil-rich countries and increased numbers of international students studying in the UK, USA, and Australia³.

According to Hutchinson and Waters, there are three reasons common to the emergence of all ESPs: a) the demands of a Brave New World, b) a revolution in linguistics, and c) a focus on the learner's needs.

Hutchinson and Waters note that two key historical periods breathed life into ESP. First, the end of the Second World War, and second, the Oil Crisis of the early 1970s resulted in Western money and knowledge flowing into the oil-rich countries. All the factors mentioned above told on the spread and the increase of the English language significance.⁴

Why is ESP different from EGP?

The specific needs emerged in connection with new approaches to language teaching and learning as a result of top-level requirements on behalf of the managers, business companies, diplomatic meetings and conferences, translating activities to produce context-bound terms and language level to be able to cover the tasks at work. Hutchinson and Waters state "If language varies from one situation of use to another, it should be possible to determine the features of specific situations and then make these features the basis of the learners' course"⁵.

² Supardi, "ESP English For Specific Purposes: Teaching Legal English Using Lexical Approach", Universitas Jember, Indonesia, p. 348.

³ Momtazur R., English for Specific Purposes (ESP): A Holistic Review // *Universal Journal of Educational Research*, 3(1): 24-31, 2015, p. 25 <http://www.hrpub.org/download/20150101/UJER4-19503020.pdf>

⁴ Hutchinson T., Waters A., "English for Specific Purposes: a learning-centred approach", Cambridge University Press, 1987, p. 7.

⁵ Ibid, p. 7.

According to Kennedy, C. & Bolitho, R. if English is taught as a second language along with other subjects for educational purposes as some useful subject to the learners in the future, then this is EGP. In this type of learning, there is generally no immediate requirement for the learners to use English for any real communicative purposes. In contrast, if English is taught for specialized learners with some specific vocational and educational purpose in mind, then this is ESP. ESP is learning and learner-oriented, with conception and preference for communicative competence⁶.

The choice of methodology as a significant attribute in the ESP learning process

The choice of the methodology of learning/teaching ESP is considered to be a crucial point because it might influence the effectivity of the learning process, especially when language learners have different purposes while learning the language and these purposes are closely related to their personality and occupation.

Ignacio M. Palacios Martinez believes that learners possess their own set of strategies, methods and there is no need for imposing on them a particular strategic system which may not be in keeping with their personality, cultural background, cognitive style, age, etc.⁷.

Another aspect why methodology is essential in the language learning process is that ESP courses aim to develop linguistic skills relating to particular spheres of activity, and in this process, not only the nature of the linguistic items introduced, but the ways in which they are introduced and how they are practised, are highly significant. Interestingly, the skills and linguistic items learned will not be useful only in the ESP context. Some of them will be readily transferable to other contexts⁸. What matters in teaching ESP is the learning-centred approach. The instructors need to be creative enough to develop class activities following the adopted methodology while focusing on the aims of the particular ESPs.

⁶ Mohammed Mizel Tahir, "English for specific purposes(ESP) and syllabus design", p. 98, <https://www.iasj.net/iasj?func=fulltext&aId=45953>

⁷ Ignacio M. Palacios Martinez, "The Importance of Language Learning Strategies in Foreign Language Teaching", p.109, https://www.researchgate.net/publication/28203603_The_importance_of_language_learning_strategies_in_foreign_language_teaching

⁸ Chris Wright, "The Benefits of ESP", <http://www.camlang.com/art001.htm>.

What is Legal English (LE) or the so-called English for legal purposes, and why is it so difficult for an ESP student?

LE is a technical language, and, naturally, LE vocabulary and terminology is particularly challenging. Typically, it is complicated for international students to learn LE as an ESP subject. They face at least two difficulties while studying LE vocabulary. First, LE has its distinctive vocabulary, and people even with advanced knowledge in GE might find it difficult to understand and explain LE terms. The second difficulty is that some LE terms are also found in GE, and this fact can make law students confused to choose the exact meanings as very often dictionaries, among multiple connotations, do not provide the word as a field-bound term as well.

The word “party”, which has lots of definitions is explained as follows in LE: “The person who is directly involved or interested in any act, affair, contract, transaction, or legal proceeding; opposing litigants.”⁹ Unlike LE, this word has an entirely different meaning in GE, particularly Cambridge Dictionary defines this word as follows:

Definition 1: Party(celebration) a social event at which a group of people meet to talk, eat, drink, dance, etc., often to celebrate a special occasion

Definition 2: Party (political groups) is an organization of people with particular political beliefs that competes in elections to try to win positions in local or national government¹⁰.

Also, LE is rich in terms and collocations. Sentences are long and often have peculiar word order. Latin adoptions(often used as such in almost all the languages) are sometimes used instead of English phrases (e.g., *contra legem* for *against the law*, *de jure* for *according to*, *de facto* for *in fact*, etc.) LE uses archaic phrases formed with the prefixes *there-* and *here-* (e.g., *hereinafter* for *from now on*, *therefore* instead of *for that*, etc.), French Anglo-Norman origin endings of the words are frequently met (e.g., *lessee*, *trustee*, *employee*) and unusual set phrases are quite common (e.g. trial de novo, so that a writ of error will lie, etc.¹¹

⁹ The free Dictionary by Farlex: <https://legal-dictionary.thefreedictionary.com/Parties>

¹⁰ Cambridge Dictionary: <https://dictionary.cambridge.org/dictionary/english/party>

¹¹ Reports of Cases Argued and Determined in the Supreme Court of Judicature: And in the Court for the Trial of Impeachments and the Correction of Errors in the State of New-York, Vol; 12, p 35 https://books.google.am/books?id=5_8aAAAAYAAJ&pg=PA35&lpg=PA35&dq=a+write+

According to M. O. Lojko, when legal English is taught to English second language students “there are at least two language-related challenges. The first language-related challenge is the peculiarities of its vocabulary and sentence structure, whereas the second one is the cultural differences between that of the specific national common law jurisdiction and the English second learners. Such cultural differences may require a different approach in the methodology of teaching legal English to foreign learners”¹². Roxana-Petruta Goga-Vigaru recognizes that “Legal English learner should have at least intermediate level of English”¹³. But in practice although students should have at least intermediate level of English, there are many situations when they have different language levels and achieving their common aim of learning legal terminology and familiarizing it in English becomes a big challenge for teachers¹⁴. Here the teacher plays a significant role in finding creative ways and efficient methods to meet the needs and competence of students.

Different approaches concerning the methods of teaching LE vocabulary

According to Harmer in learning a foreign language, vocabulary plays an important role. It is the element that links the four language skills of speaking, listening, reading and writing altogether. It provides the vital organs and fleshes to the language, so students should acquire an adequate number of words and should know how to use them accurately in context. How the students can master as many as possible words as to use them in appropriate context can be a difficulty for them. Whereas, they have to do it in order to be able to have ability in all of the language skills¹⁵.

Teaching vocabulary as any other activity requires adequate preparation and planning, and first and foremost great motivation on behalf of

of+error+ will+lie&source=bl&ots=WofyFhrUdc&sig= ACfU3U2UD hqHpOGL3 jOyPKU gmk Mh2
GPhig&hl=hy&sa=X&ved=2ahUKEwjghdi78cXqAhVnyqYKHcCmAMAQ6AEwCXoECAYQ
AQ#v=onepage&q=a%20write%20of%20error%20will%20lie&f=false

¹² Lojko, M. O. “Teaching Legal English to English Second Language Students in the US Law”, 2011, <https://elib.grsu.by/katalog/161452-345805.pdf>

¹³ Roxana-Petruta Goga-Vigaru, “Challenges in teaching legal English and efficient methods of evaluating Romanian students at the Faculty of Law and Public Administration”, “Spiru Haret” University, Romania, 40 [http://files.jolace.webnode.sk/200001244-42f3344e8c/CLEaR2015%20Conference %20 Proceedings%20-%2005.pdf](http://files.jolace.webnode.sk/200001244-42f3344e8c/CLEaR2015%20Conference%20Proceedings%20-%2005.pdf)

¹⁴ Ibid., p40.

¹⁵ Jeremy Harmer, *The Practice of English Language Teaching*, (New York: Pearson Education Limited), 2007.

students. Teachers need not only to ensure that their students learn the words properly but also clarify the goals for vocabulary learning and make their students aware of these goals. It is also important for teachers to use an approach that will help their learners develop a comprehensive knowledge of the target words, and to measure vocabulary learning in the course¹⁶.

Among the approaches concerning the methods of teaching LE vocabulary, the Lexical approach is one of the most valuables. Lexical approach is a way of analyzing and teaching language based on the idea that it is made up of lexical units rather than grammatical structures. The units are words, chunks formed by collocations, and fixed phrases. A simple activity to incorporate the lexical approach is to encourage learners to identify and record lexical chunks and fixed phrases in the texts they read¹⁷.

Another efficient method of teaching Legal English vocabulary is using images. The use of visual materials in teaching LE to Law students has proven to be an effective way of dealing with a learning impasse. For instance, the cartoons are the best expression of such method. The essence is that learners are prompted to identify characters or objects in the cartoon and then invited to link them to concepts they are learning in the Legal English course¹⁸. In the 21st century, the development of technologies and the Internet can positively promote the development of education, improve the instruments used in the sphere. In particular, the Internet is an irreplaceable tool in LE teaching. Warschauer presents his approach by the following list of the reasons of using the Internet for teaching: it provides authentic language materials; it enables the student to interact with native and nonnative speakers for 24 hours on end; it makes the learning process lively, dynamic, and interesting¹⁹ helping them digest the most complicated materials.

It is worth mentioning that there are considerable differences in the legal systems of different countries, and this fact makes the learning process

¹⁶ "Teaching Vocabulary", Stuart Webb, Paul Nation, https://www.academia.edu/32102031/Teaching_Vocabulary

¹⁷ Teaching English, "Lexical approach", <https://www.teachingenglish.org.uk/article/lexical-approach>

¹⁸ Elsa Liebenberg, "Using Images as an Effective Tool to Facilitate Teaching Legal Concepts", <https://journals.openedition.org/apliut/2260?lang=en>.

¹⁹ Dr Supardi, M. Pd., Developing Materials for Teaching Legal English Vocabularies with the Internet Use // "International Journal of English and Education", https://www.researchgate.net/publication/301767511_Developing_Materials_for_Teaching_Legal_English_Vocabularies_with_the_Internet_Use

of Legal English vocabulary harder. Thus teaching methods should match the cultural identity of learners as well when delivering texts on law, court and justice.

Purposive-thematic diagrams and crosswords as a useful tool for ESP learners and teachers

The use of diagrams as a method of learning language is already a commonly accepted approach. As G. Grigoryan mentions, "Diagrams make the material clear and the students usually enjoy drawing them. If through their instruction students learn to speak, read and write with competence and confidence, they gain an understanding and love of the English language, thus developing a curious and inquiring attitude toward language. Their schooling, in this case, serves them well. They will be well prepared for using language in everyday life and will be prepared for whatever more advanced linguistic study they undertake in the future"²⁰.

Another useful website resource, which is called "ESL Teacher Resources for Elementary Education" elucidates Realia, which is the use of objects or pictures to show students the meaning of a word and helps motivate them to expand their background knowledge. The use of objects and visuals can help build schema by making lasting memories through the use of all five senses. Giving students the physical object helps produce greater memories because they are able to use almost all five senses when observing the object, and they can then reflect on these memories when relating the word to the text²¹.

Among linguists and other academic professionals, there is a popular tool called tree diagrams, used to illustrate the material or object, which is explained, in a way that is visible and comprehensible. The essence of tree diagrams is to depicture the content through a tree with branches.

Thus, the first step, from which an ESP learner should start the language learning process, is to grasp the vocabulary, because if a student does not understand the words used in texts, hardly can they understand the text in general.

Highlighting the importance of the vocabulary in the language learning process, we offer a unique, creative method, which will be helpful

²⁰ "Methods of grammar instruction", G. Grigoryan, Collection of scientific articles, Yerevan, 2016, p.325, <http://isec.asj-oa.am/131/1/324.pdf>

²¹ "Building schema(background knowledge) strategies, ESL Teacher Resources for Elementary Education <https://melissablazajak.wixsite.com/esl-teacherresources/schema>

for LE students and why not for any other ESP learners. The essence of this method is to use diagrams and crossword puzzles to facilitate the learning process of LE vocabulary. We call these diagrams purposive-thematic because they can be created for each purpose individually. Below is introduced a sample of LE purposive-thematic diagrams and a crossword puzzle.

Diagram 1 comprises types of crimes, criminals and corresponding action verbs.




Diagram1

In this diagram, it can easily be seen how a suffix, which is one or more syllables added to the end of the word makes a new word or another form of a word. Adding a suffix sometimes changes the spelling of the

word. If the student knows the meaning of the suffix, he can easily guess the meaning and the form of the new word.

Diagram 2 presents a list of people who are usually involved in the trial courtroom.




Diagram 2

Such purposive-thematic diagrams are flexible and beneficial both for ESP teachers and students.

1. Purposive-thematic diagrams are a useful learning tool for visual learners because they enjoy the structure of these diagrams and learn vocabularies easier and faster.

2. ESP teachers can create such thematic diagrams concerning the particular topic to make the vocabulary learning process more exciting.

3. As long as LE students already know the specific subject area, such purposive-thematic diagrams can continuously be used by the ESP students as vocabulary reminders and ready-made templates.

Another useful and visual method of teaching ESP vocabulary is crossword puzzles. Students will have to spell the words correctly and learn the definitions to complete the puzzle. According to Jill Hadfield "Crossword puzzle is an effective teaching tool of terminology, definitions, spelling and pairing key concepts with related names, resulting in greater

retention and memorization of facts.²² The crossword puzzle below comprises the words and definitions from Diagram 2.

Crossword

Across

4. the place or room in which a court of law meets

6. somebody whose job is to allow people to enter or leave a court of law

7. the process of being judged in the court

8. the available body of facts or information indicating whether a belief or proposition is true or valid

Down

1. a person who sees an event, typically a crime or accident, take place

2. a person, esp. a public official who institutes legal proceedings against someone

3. a body of people sworn to give a verdict in a legal case on the basis of evidence submitted to them in court

4. reporter somebody whose job is to write notes of what was said at a trial

5. a public official appointed to decide cases in a court of law

9. an individual, company, or institution sued or accused in a court of law

Courtroom crossword

Solving this crossword puzzle is also beneficial for the student: 1. their ability to memorize the thematic vocabulary list will add to their vocabulary building skills. 2. they learn the spelling of the terms which will enable them to complete the puzzle quickly. 3. finally, teachers can check the students' knowledge of the already learnt terminology by making the testing process less stressful.

Conclusion.

The article comprises the origin, essence, importance, differences, difficulties, choice of methodology and useful tools of ESP approaches to facilitate the process of learning new vocabularies.

Although ESP learners have some background knowledge in English and learn ESP in order to fulfil their vocational purpose, sometimes even they lose their motivation to learn foreign words, expressions, terms and

²² J. Hadfield, *Elementary Communication Games*, Great Britain: Longman Ltd, 1984, p. 5.

what is more complex, to remember all this stuff if the teaching methods are incomplete and not creative enough.

The article highlights the effectiveness of using diagrams and crosswords during teaching ESP thematic vocabularies, which helps the students easily comprehend linguistic impasses. This method will be helpful for visual learners, as they find that information makes more sense when it is explained with the aid of a chart or illustration²³.

These methods are examined on the example of LE, but they can easily be used by other ESP learners/teachers too. The essence of this method is to depicture the content through diagrams or crosswords. Also, thematic vocabulary learning method is very practical and easy to use both by ESP teachers and students. On the one hand, ESP teachers can independently create such diagrams in order to make the vocabulary learning process more exciting. On the other hand, such purposive-thematic diagrams can be effortlessly learnt and used by ESP students, because they already have knowledge about their specific learning area.

Բանալի բառեր. հատուկ նպատակներով անգլերեն, իրավաբանական անգլերեն, բառապաշար, նպատակային-թեմատիկ գծապատկերներ, խաչբառներ, դասավանդման գործընթաց, բառագիտական մոտեցում, մեթոդներ, տեխնիկա:

Գ. Մ. Գրիգորյան, Օ. Զաքարյան. Անգլերենի բառապաշարի դասավանդումը նպատակային-թեմատիկ միջոցներով (Իրավաբանական ոլորտի օրինակով). Հատուկ նպատակներով անգլերենի դասավանդումը տարածված է եղել դեռևս 1960-ական թթ.: Իրավաբանական ոլորտում ևս անգլերենը համարվում է հատուկ նպատակներով ուսուցանվող լեզու, և այս դեպքում ևս կան մեծ թվով մասնագիտական բառեր, որոնք պետք է յուրացվեն: Այստեղ ևս դժվար կլինի ուսուցումը, եթե նրանք չունենան համապատասխան բառապաշար և վերջինիս կիրառման հմտություններ, օրինակ՝ իրավաբանական փաստաթղթեր ընթերցելիս կամ գրելիս, զեկույցներ, նորություններ լսելիս, դատական նիստերի գործ ներկայացնելիս: Այս դեպքում պետք է ուշադրություն դարձնել բառագիտությանը, բառապաշարի ուսուցմանը: Նման մոտեցումը և հնարքները կոյուրացնեն դասավանդման գործընթացը:

Հոդվածում շեշտը դրվում է խաչբառերի, նպատակային-թեմատիկ գծապատկերների կիրառման և իրավաբանական անգլերենի դասավանդման գործընթացում դրանց ներդրման վրա:

²³ “Visual Learning Style: Traits and Study Strategies” <https://www.thoughtco.com/visual-learning-style-p2-1857113>

Ключевые слова и словосочетания: Английский для специфических целей, юридический английский, лексический запас, целевые-тематические диаграммы, кроссворды, процесс обучения, Лексический подход, метод, техника.

Г. М. Григорян, О. Закарян. Преподавание английской лексики с помощью целевых-тематических средств (на примере английского для юристов). Преподавание английского для специфических целей (АСЦ) актуально еще с 1960-х гг. Юридический английский наряду с другими считается языком, изучаемым для специальных целей, и содержит большое количество профессиональных терминов, которые должны усвоить обучающиеся. Изучение будет весьма затруднительно, если у них не будет достаточных знаний и навыков использования лексического запаса юридического английского, к примеру, для чтения или написания юридических документов, чтения или прослушивания докладов, новостей на юридические темы в СМИ, представления дела в зале суда. В этом случае следует обратить внимание на лексикографию, обучение лексике. Такой подход и приемы облегчат процесс преподавания.

В статье особое внимание уделяется использованию кроссвордов и целевых тематических диаграмм в процессе преподавания юридического английского.

ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ
«ԲԱԶՄԱՎԵՊ»-Ի
ԷՋԵՐՈՒՄ (1843-1893 ԹԹ.)

Բանասիր. գիտ. դոկտոր Վ. Գ. Համբարձումյան

vazgengurgeni@mail.ru

Բանալի բառեր. գրաբարի և աշխարհաբարի առնչություն, լեզվի մակարդակ, հնչյունաբանություն, ուղղագրություն, լեզվի ոճերի քննություն, բառապաշար, բառարանագրություն, բնագրի վերլուծություն, լեզուների մասին տեղեկություն:

1. Մեր այս թեմային առնվող նյութերը փոքրիշատե գտնում ենք Մխիթարյան միաբանության «Բազմավեպ» հանդեսի 1843-1893 թթ. էջերում (ճիշտ 50 տարվա մի ժամանակահատված): Այդ նյութերն այստեղ ներկայացնում ենք ակնարկի՝ նախնական վերլուծության ձևով, նկատի ունենալով, որ հետագայում խնդրին անդրադառնալու ենք ավելի լայն քննությամբ՝ թե՛ ժամանակի և նյութի ընդգրկման առումով, թե՛ հայոց լեզվի ընդհանուր պատմության հարցերի առնչությամբ¹:

2. Այս դեպքում առանձնացրել ենք չորսուկես տասնյակ հոդված, որ պայմանական անվանումով կարելի է ներկայացնել հետևյալ խմբերի մեջ²:

ա) Գրաբարի և աշխարհաբարի առնչություն. «Աշխարհաբառ լեզուի վրայ» («*Բազմավեպ*», 1843, Ա, էջ 76-80), «Հայերեն գրաբար լեզուի յստակութեան վրայ» (ն. տ., 1846, Դ, էջ 196-204), «Աշխարհիկ կամ նոր լեզու» (ն. տ., 1878, Զ, էջ 213-228):

բ) Ճարտասանական (ոճական) ոլորտի դիտարկումներ. «Առատաբանութեան ոճ» («*Բազմավեպ*» 1861, ԺԹ, էջ 85-90, 107-

¹ Այդ տարիներին, թերևս տեղին է նշել, հանդեսը խմբագրել են հ. Գաբրիել Այվազյանը (1843-1848 թթ.), հ. Ղևոնդ Ալիշանը (1848-1851 թթ.), հ. Օգսենտիոս Գուրգենյանը (1852-1853 թթ.), հ. Գրիգոր Ճելալյանը (1854-1856 թթ.), հ. Հմայակ Պապիկյանը (1856-1857 թթ.) և ուրիշներ:

² Նյութերը բերում ենք ըստ հանդեսի առանձին լույս տեսած ցանկի՝ մեր խմբավորմամբ (տե՛ս «Ընդհանուր ցանկ նիւթոց յիսնամեայ Բազմավեպաց, Ա-Ծ, 1843-1893», Վենետիկ, 1896):

110), «Սղագրութիւն հայկական» (ն. տ., 1885, ԽԳ, էջ 229-233, նաև 1886, ԽԴ, էջ 34, 103-110) և այլն:

զ) Հնչունաբանություն (ուղղագրություն, տառադարձություն, կետադրություն). «Յաղագս բնիկ հնչման հայկական տառից» («*Բազմավէպ*», 1845, Գ, էջ 361-367), «Հին և նոր անուանց տառադարձութեանը վրայ տեղեկութիւն» (ն. տ., 1846, Դ, էջ 51-54. հեղ.՝ հ. Է. Հյուրմուղյան), «Մեր *n* գրին հնչմանը վրայ» (ն. տ., 1846, ԽԲ, էջ 262-263), «Յաղագս թարգմանութեան Աստուածաշունչ տառից ի հայ լեզու» (ն. տ., 1850, Ը, էջ 212-217, 1851, Թ, էջ 230-236. հեղ.՝ հ. Գ. Զարբհանալյան), «Շեշտ կամ շեշտումն ձայնի» (ն. տ., 1862, Ի, էջ 72-75), «Ուղղագրութիւն *աւէն* բառի» (ն. տ., 1884, ԽԲ, էջ 238-239), «Բացայայտութիւն մեր հայկական տառերու հնչման և գրութեան մասին» (ն. տ., 1886, ԽԴ, էջ 192-199. հեղ.՝ հ. Ա. Տիրոյան), «Տեսութիւն տառադարձութեան խնդրոյն և հայերէն նշանագրաց վրայ» (ն. տ., 1889, ԽԵ, էջ 21-42, 97-103, 129-134, 161-170. հեղ.՝ հ. Բ. Սարգիսյան), «Հայ լեզուի կետադրութիւնք» (ն. տ., 1890, ԽԸ, էջ 167-1970. հեղ.՝ հ. Ա. Տիրոյան):

դ) Բառարանագրություն. բառարաններ. «Տեսութիւն ի գանձ լեզուի Հայոց կամ Ստեփանեան բառարան» («*Բազմավէպ*», 1852, Զ, էջ 86-95. հեղ.՝ հ.. Ղ. Ալիշան), «Նոր բառգիրք հայ-անգլիարէն» (ն. տ., 1879, ԼԷ, էջ 190-192³):

ե) Հայերենի ձևաբանական միավորներին անդրադարձ. «Մեր աշխարհաբառին մէջ մտած քանի մը օտարազգի մասնիկներու վրայ» («*Բազմավէպ*», 1847, Ե., էջ 165-168. հեղ.՝ հ. Գ. Այվազյան), «Ռամկական լեզուին մէջ գործածուած *կը* կամ *կու* մասնիկին վրայ» (ն. տ., 1849, Է, էջ 104-106. *ը*-ով գրությունը բնագրինն է. - Վ. Հ.)⁴, «*Ե՞ր*, թէ *է՞ր*» (ն. տ., 1890, ԽԸ, էջ 394):

զ) Հայ բնագրագիտություն, բանասիրություն, լեզվի ուսուցում և կրթական-ուսումնական գործունեություն. «Ազգային լեզուն պա-

³ Այս բաժնի. եթե ոչ այդ տարիների «Բազմավէպի», լավագույն հոդվածներից մեկն է «Ճառ ընթերցեալ ի հայկական ճեմարանից: Տեսութիւն ի Գանձ լեզուին Հայոց կամ Ստեփանեան բառարան» վերտառությամբ աշխատանքը (հեղ.՝ հ. Ղ. Ալիշան)՝ բանասիրական, բնագրագիտական և բառագիտական յուրօրինակ դիտարկումներով և արժանավոր գնահատությամբ: Ավելի մանրամասն տե՛ս Վ. Գ. Համբարձումյան, Ակնարկներ հայ բառարանագրության պատմության (X-XVII), հ. 2, Ե., 2015, էջ 65-91:

⁴ Երևանի Մաշտոցյան Մատենադարանի Լ. Խաչիկյանի անվան հայագիտական սրահի օրինակում սույն հոդվածը բացակայում է:

հելուն վրայ» («*Բազմավէպ*», 1843, Ա, էջ 76-80), «Տարերք հայերէն քերականութեան դպրատանց տղոց համար» («*Բազմավէպ*», 1847, Ե, էջ 29-31), «Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց» (ն. տ., 1852, ԺԶ, էջ 181-182), «Մատենագիրք ցնորորդ դար» (ն. տ., 1861, ԺԹ, էջ 31-32), «Մեսրոպեան դար հայկական լեզուի» (ն. տ., 1875, ԼԳ, էջ 7-16), «Արևելեան կենդանի լեզուաց մասնաւոր դպրոց ի Փարիզ» (ն. տ., 1890, ԽԸ, էջ 352-360) և այլն:

է) Թարգմանական գրականության բնագրի լեզվի վերաբերյալ դիտարկում. «Թարգմանութեան վրայ» («*Բազմավէպ*», 1873, ԼԱ, էջ 321-333. հեղ.՝ հ. Է. վ. Հյուրմյուզյան), «Հելլենաբանութիւն և հելլենաբան թարգմանիչք հայկական լեզուի (դար Զ-Ժ)» (ն. տ., 1875, ԼԳ, էջ 118-126), «Ընդհանուր տեսութիւն մը նախնեաց թարգմանութեանց վրայ դատաստան ընելու» (ն. տ., 1875, ԼԳ, էջ 352-357):

ը) Բառաքնություն և ծագումնաբանություն, փոխառություններ. «Նորահնար բառերու վրայ» («*Բազմավէպ*», 1845, Գ, էջ 267-271), «Նաբոլէոն անունը» (ն. տ., 1874, ԼԲ, էջ 42), «Հայ անուան վրայ» (ն. տ., 1846, էջ 18-20. հեղ.՝ հ. Գ. Այվազյան),

թ) Այլ լեզուների վերաբերյալ գիտելիք (լատիներեն, չինարեն և այլն). «Լատին լեզուն» («*Բազմավէպ*», 1855, ԺԳ, էջ 47-48, 110-112), «Տեսութիւնքի լատին բարբառ, և որ ինչ ի վարժից նորին շահ» (ն. տ., 1855, ԺԳ, էջ 21-24), «Չինաց լեզուն» (ն. տ., 1856, ԺԴ, էջ 105-106):

ժ) Հայոց լեզվի և լեզվաբանության պատմություն. «Հայերէնագէտ եւրոպացիք» («*Բազմավէպ*», 1845, Գ, էջ 59-62), «Լեզուագիտութիւն» (ն. տ., 1849, էջ 258-263, 292-298. հեղ.՝ հ. Ղ. Ալիշան), «Ներքովթ և աշտարակն լեզուաց» (ն. տ., 1890, ԽԸ, էջ 432-445), «Սկիզբն հայկական լեզուի և Դիոնեսիոսի Թրակացոյ քերականութիւն» (ն. տ., 1877, ԼԵ, էջ 97-103. հեղ.՝ հ. Ա. Սուքրյան) և այլն:

Մեկ տասնյակ խմբով (համապատասխան ձևակերպմամբ) առանձնացումը, ցույց է տալիս առհասարակ լեզվի, մասնավորաբար հայերենի վերաբերյալ ժամանակին հուզող հարցերի շրջանակը: Հոդվածների հեղինակները իրենց հնարավորության սահմաններում տվել են այդ հարցերին լուծումներ, մասամբ մատնանալով դրանց վերջնական լուծման ուղիներ: Առանձնացվող խմբերում ընդգրկվող հոդվածները քանակի և ծավալի առումով ևս տարբեր են:

Հանդեսի էջերում համեմատաբար լայն ուշադրության առար-

կա են եղել հայերենի հնչյունաբանությանը (այն է՝ ուղղագրություն, տառադարձություն, կետադրություն), բառապաշարին և ձևաբանությանը վերաբերող հարցերը, ընդ որում դրանց քննարկումն ավելի շատ ունեցել է գործնական բնույթ, իսկ տեսական, առավել ևս այլ լեզուների, ինչպես նաև դրանց՝ հայերենի հետ ունեցած կամ հանդես բերվող առնչությունների հարցերը բավականին քիչ, կարելի է ասել աննշան տեղ են զբաղեցնում:

Եվ հայերենի ծագման բնույթին անմիջական առնչվող հոդվածներ գրեթե չկան (առանձնացվող շուրջ չորսուկես տասնյակից, թերևս, մի քանիսը), մանավանդ որ այդ ժամանակաշրջանում (1840-1890թթ.) հայ բանասիրության, հայերենի համեմատական ուսումնասիրության բնագավառներում կատարվում էին շրջադարձային քայլեր, իսկ այդ ամենը գրեթե չենք գտնում ամսագրի լեզվագիտական բաժնի հոդվածներում, և դա այն դեպքում, երբ եվրոպացի հայագետների զգալի մասը, որ հայերենի վերաբերյալ տպավորիչ ծառայություն էր բերում, վերջինիս իմացական վարկը դնում ժամանակի առումով գիտական բարձր պատվանդանի վրա, իրենց նախնական կրթությունը այս կամ այն խորությամբ ձեռք էին բերել Մխիթարյան միաբանության միջավայրում:

3. Այս շրջանում, ինչպես հայտնի է, եվրոպական հայագիտությունը գտնվում էր հարաճուն զարգացման պայմաններում, արևելյան լեզուների մեջ մասնագիտացող աղբյուրագետ-լեզվաբաններից շատերը (Պետերման, Լագարդ, Հյուբշման և ուրիշներ) լուրջ հետաքրքրություն էին հանդես բերում հայերենի նկատմամբ՝ համապատասխան գիտելիքներ ձեռք բերելով հայագիտական տարբեր հաստատություններում, ի մասնավորի Մխիթարյան միաբանության միջավայրում:

Այնինչ, այս մասին հիշյալ տարիներին լույս տեսնող «Բազմավեպ»-ի էջերում չենք գտնում այդ կարևոր փաստին վերաբերող որևէ անդրադարձ: Ուստի կարելի է ասել, թե Մխիթարյանները այս շրջանում ավելի շուտ գործնական, քան տեսական խնդիրների են ձեռնամուխ լինում՝ հայերենի գրական կանոնարկում, լեզվի տարածմանը հետամուտ կոնկրետ միջոցառումներ(լեզվի ուսուցում և այլն), հին մատենագիրների ձեռագրերի տպագրություն, լեզվի բառագանձի բառարանային ամբարում, աշխարհի լուսավորական

անցուդարձի տեղեկացում ազգին և այլն, որ ժամանակի քաղաքակրթական առումով հրատապ էր և նպատակային:

4. Վերը խմբավորված հոդվածներից ունենք այն ընդհանուր տպավորությունը, որ դրանք այս կամ այն չափով արձագանք են հայերենի վերաբերյալ ժամանակին հուզող հարցերի, ուստի գրված են եղել հրապարակային քննարկման նպատակով: Եվ ըստ այդմ՝ նկատում ենք, որ դրանք, լինելով մամուլում լույս տեսած աշխատանքներ, հիմնականում ակնարկային բնույթի են՝ հրապարակային ոճին բնորոշ շեշտով: Ուստի արծարծվող հարցերի քննությունը մեծ մասամբ հեռու է տեսական լինելուց, ըստ այդմ՝ մասամբ կարևոր հայոց լեզվի պատմությունն ավելի իրական ձևով ներկայացնելու տեսանկյունից:

Ուստի դրանցից առաջին հերթին թերևս առանձնացնելի են հ. Արս. Բագրատունու «Հայերեն գրաբար լեզուի յստակութեան վրայ» (1846, թ. ԺԶ, էջ 196-204), հ. Ղ. Ալիշանի «Լեզուագիտութիւն» (1849, Է, էջ 258-263, 292-298), ինչպես նաև հ. Արս. Սուքրյանի «Սկիզբն հայկական լեզուի և Դիոնեսիոսի Թրակացոյ քերականութիւնը» (1877, թ. ԼԵ, էջ 97-109) բավականին ուշագրավ հոդվածները, որոնք ընդհանուր տեսականից բացի ունեն որոշակի կարևորություն հալածիտության համար:

5. Նկատի ունենալով տեղի սղության հանգամանքը՝ ստորև անդրադառնում ենք վերը նշված հոդվածներից մի քանիսին, որոնք հայերենի ուսումնասիրության առումով այսօր ևս արժանի են ուշադրության:

Շ. Արս. Բագրատունին «Հայերեն գրաբար լեզուի յստակութեան վրայ» հոդվածում նախ՝ տարբերում է երկու կարգի՝ մեռած և կենդանի լեզուներ, որոնք պայմանավորված են այդ լեզուները կրող ժողովուրդների գոյության և զարգացման իրողությամբ, այնուհետև՝ անդրադառնում է հին գրական հայերենի ներսում ոճական, ինչպես նաև առհասարակ թարգմանական տարբերություններին, մասամբ՝ տեղ գտած տերմինային երկվություններին (տարբերակումներին)⁵: Այս մոտեցմամբ խմբավորումը, ի դեպ, այլ է, քան նրա՝ հետա-

⁵ Շ. Արս. Բագրատունի, Հայերեն գրաբար լեզուի յստակութեան վրայ // «Բազմավէպ», 1846, ԺԶ, էջ 196-204: Նկատի ունենալով հարցի կարևորությունը՝ մենք նախատեսում ենք այն քննարկել առանձին, իսկ այստեղ ներկայացնում ենք ուրվագծորեն:

գայում կատարած դասակարգումը (իմա՝ «ոսկի դար», «արծաթի դար», «պղնձի դար» և այլն)⁶:

Այդ հոդվածում հեղինակը կատարում է գրական հուշարձանների դասակարգում («դասերի» առանձնացում)՝ հիմնված լեզվական կողմի վրա, որը, ըստ էության, առաջին անգամ է կատարվում հայագիտության մեջ⁷: Հայ հին (գրաբար) մատենագրական երկերը բաժանում է երեք խմբի՝ վերջինի մեջ տեսնելով երկու ենթախումբ. «Հայերեն գրականությունն իսթարգմանչաց առենին ինչակ ԺԲ կամ ԺԳ դարը աղէկ քննելու որ ըլլանք, իրեք տեսակ այլ և այլ մատենագրութիւն կը գտնենք»⁸.

1-ին «դաս» Աստվածաշունչ, Պատարագամատույց, Մաշտոց, Շարական⁹, այնուհետև՝ Ագաթանգեղոս, Բուզանդ, Կորյուն, Եզնիկ, Եղիշե, Մանդակունի, Փարպեցի, Խորենացի («Պատմութեան մէջ շատ տեղ»), Լուսավորիչ («Յաճախապատումը»), Ոսկերեան («մի մեկնութիւնը»), Բարսեղ Կեսարացի («Վեցօրեայք»), Սեբերիանոս («Ճառերը»), Կյուրեղ Երուսաղեմացի («Կոչումն ընծայութեան»)¹⁰:

2-րդ «դաս» («գաւառական կամ ինքնահնար ոճով գրքեր»)՝ Խորենացի (Պատմության 1-ին գիրքը, Ճառերը, մանավանդ Պիտոյից գիրքը՝ «թէ որ անորն է»), այնուհետև Օձնեցի, Հովհաննէս կաթողիկոս, Մագիստրոս¹¹,

3-րդ «դաս»՝ երկու ենթախմբով. ա) ասորական թարգմանություններ, որ «թէպէտ բառերն ու ասացուածքն ընտիր առջի դասի պէս, բայց ասորիի ծանր՝ դանդաղ և ճապաղ կամ ըսենք երկայնախօս ձանձրալի ոճն ու դարձուածքն առեր են». Եվսեբիոս («Եկեղեցական պատմություն»), Մծբնացի («Զգոն» գիրքը), Եփրեմ և այլն, բ) այլ թարգմանություններ, «որիտմէ (լատին.- Վ. Հ.) թարգ-

⁶ Հ. Արս. *Բագրատունի*, Հայերեն քերականություն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 630-632 և այլն:

⁷ Նույն տեղում, էջ 201:

⁸ Նույն տեղում, էջ 200:

⁹ «Ասոնք ազգային գրքեր ըլլալուն՝ երկբայութիւն չկայ, և ապա ասոնք կ'ըլլան մեզի օրինակ բուն ազգային լեզուն և ոճը ճանչնալուն ընդունելու» (ն. տ., էջ 201):

¹⁰ Բագրատունին այս դասի մեջ դնում է նաև հետագա հեղինակների (Շիրակացի և այլն), այսինքն՝ ունի «բուն ազգային լեզվի և ոճի» առանձնացման իր ճիշտ պատկերացումը, որ տեսական առումով հեռանկարային է լեզվի պատմության համար:

¹¹ Այս կետում նշվում է նաև՝ «Եւ կամ տաճկական և արաբական դպրոցին ազգին մէջ մտնելէն՝ ասիական ճոռոմութիւն մը ու փարթաւութիւն մը ոմանց փառաւոր երևալէն եղած կրնայ ըլլալ, ինչպէս է ընդհանրապէս Օձնեցիին ոճը, Յովհաննէս կաթողիկոսին, Մագիստրոսին և այլն» (ն. տ.):

մանած ըլլալով, կամ թէ և քովէ շարադրած, բայց թարգմանչին յունասիրութենէն ըսեմ, չէ նէ հայերէնի խամութենէն, յունաբանութիւն կը հոտին»¹²:

Այնուհետև, այս դասի երկրորդ ենթախումբն, իր հերթին, տրոհվում է երեքի. նախ («որ հայու ականջ մը բնաւ ամեննին բան չը հասկնար»)՝ Դավիթ Անհաղթ (թարգմանությունները), այնուհետև («որ իրաւ շատ յունաբան էն, բայց հայերէն աղէկ գիտցողը աշխատանօք կրնայ քիչ մը բան հասկնալ»)՝ Դավիթ Անհաղթ («Սահմանք»), Փիլոն Եբրայեցի («շատ տեղերը»), Պլատոն («քանի մը գործքերը»), վերջապէս («որ շատ աւելի մօտ է ազգային ոճին և հասկանալի հայու ականջին»)՝ Եվսեբիոս («Քրոնիկոն», «Աղէքսանդրի պատմութիւն»), Նյուսացի, Նազիանզացի («թէպէտ ասոնք ալ շատ հեռու են առջի դասի յատկութենէն») և այլն¹³:

Այդ դասակարգումն, անշուշտ, նկատի են առել հետազայում (Ա. Այտընյան, Թ. Թոռնյան, Ն. Բյուզանդացի, Հ. Աճառյան և այլք), սակայն տարբեր կերպ են մոտեցել հարցի լուծմանը՝ առաջին հերթին նկատի ունենալով հին հայերէնի (միայն 5-րդ դ.) «արտադրանքը»՝ այն խմբավորելով իբրև ոճական «դասեր», մյուս հերթին՝ առանձնացումը մշտապէս կատարվում է այդ «արտադրանքի» ինքնուրոյն կամ թարգմանական բնույթի լինելու նկատառումով¹⁴: Իսկ սա նշանակում է, որ բնավ ընդունելի չէ, ավելին՝ գիտական փաստի առումով սխալ է գրաբարի լեվառճական խմբերը («դասերը») ներկայացնել ուշ շրջանի հեղինակների (օրինակ՝ Հ. Աճառյանի և այլն) անունով, որ նկատվում է վերջին տարիներին լույս տեսնող աշխատանքներում, հատկապէս դասագրքերում: Պետք է նկատի ունենալ, որ Աճառյանը լիովին հիմնվում է իր նախորդի՝ Ն. Բյուզանդացու դասակարգման վրա, իսկ վերջինիս համար, ինչպէս բարեխղճորեն նշում է նա իր աշխատանքում, հիմք է եղել իր նախորդի՝ վիեննական մխիթարյան դպրոցի բանասեր Թ. Թոռնյանի

¹² Նույն տեղում, էջ 202:

¹³ Նույն տեղում, էջ 201-202:

¹⁴ Տե՛ս Ա. Այտընյան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, էջ 54-64: Թ. Թոռնյան, Հատընտիր ընթերցուածք ի մատենագրութեանց նախնեաց, Վիեննա, 1891: Ն. Բիւզանդացի, Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք, Տիփլիս, 1900, էջ 18-20: Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս II, Ե., 1951, էջ 77-83: Հարցին մանրամասն անդրադառնալու ենք մեր մեկ այլ աշխատանքում:

կողմից կատարված դասակարգումը¹⁵:

Բագրատունու մյուս կարևոր աշխատանքը վերաբերում է հայերենում տեղ գտած նոր («նորահնար») բառերին¹⁶: Հեղինակը քննության է առնում գիտական լեզվի մեջ մուտք գործող տերմինների գործածությանը՝ ամենից առաջ նկատի ունենալով դրանց կազմության նպատակահարմարությանը, որ նշանակում է, թե լեզվի կանոնարկման առումով բառապաշարի այդ մասը նույնպես պիտի լինի բնական, զերծ այլ լեզուներից եկող՝ հայերենին խորթ հատկանիշներից:

Բ. Հ. Ղ. Ալիշանը հանդեսի էջերում բավականին ուշագրավ հոդված է նվիրել Ստ. Ռոշքայի բառարանին, որը մինչ այդ եղել է նրա մի բանախոսության թեման¹⁷:

Հեղինակը նախ՝ պարզում է Ռոշքայի անձի վերաբերյալ շփոթը (բառարանի հեղինակը Ստեփանոս Կամենիցացին է, ոչ թե Ստեփանոս Լեհացին), այնուհետև անդրադառնում է այն առարկություններին, թե բառարանի ստուգաբանական մասը անհավաստի է, այլև բառարանում բերվում են հեղինակների անուններ, որոնք անհայտ են առհասարակ, խոսվում է այն առավելության մասին, որ բառարանում նշվում են օտար հեղինակներ (մատենագիրներ՝ Պլինիոս, Կիկերոն, Սենեկա և այլք), որոնց երկերի թարգմանությունները հարստացնում են հայերենի բառապաշարը նոր բառերով:

Այնուհետև, ըստ Ալիշանի՝ Ռոշքայի բառարանի շնորհիվ հայտնի են դառնում «գլխաւորք ի պատմչացս ըստ պատուականութեան հնութեան և ճոխաբանութեան» (իմա՝ Հովհաննէս, Մեսրոպ, Մատթէոս, Մխիթար և այլն անուններով պատմիչներ), որ այլ աղբյուրներում չեն նշվում, այլև բառարանում իբրև վկայություն բերված բնագրային հատվածների բաղդատությամբ ճշգրտվում է տվյալ երկի հեղինակային պատկանելությունը¹⁸:

Առավել ուշադրություն է դարձվում այն հանգամանքին, որ

¹⁵ Ն. Բիւզանդացի, նշվ. աշխ., էջ 20:

¹⁶ Հ. Արս. Բագրատունի, Նորահնար բառերու վրայ // «Բազմավեպ», 1845, Գ, էջ 267-271:

¹⁷ «Տեսութիւն ի գանձ լեզուի Հայոց կամ Ստեփանեան բառարան» // «Բազմավեպ» (ամսագիր), 1852, Զ, էջ 86-95: Այս հոդվածի մասին ավելի մանրամասն տե՞ս Վ. Գ. Համբարձումյան, Ակնարկներ հայ բառարանագրության պատմության (X-XVIII դդ.), Ե., 2015, էջ 69-74:

¹⁸ Նույն տեղում, էջ 89-93:

Ռոշքայի այդ գործը բառերի քանակի առումով կանխում է հետագա ամենածավալուն բառարաններին. «Իսկ ի կնիք բանիցս ի պարծանս հեղինակի Բառարանին արժան համարիմ յիշել և զճոխութիւն բառիցն, զոր թեպէտ ոչ արկի ի թիւ, այլ ոչ շատ պակաս քան զմերոյս մեծի բառարանի, իցեն իբրև 4500 կամ 5000 բառք նորագիտք ի նմա, զի իմ 4200 բառս նշանակեալ է անտի յիմում Առձեռն օրինակիս»¹⁹ :

Ըստ այսմ՝ կարելի է կարծել, որ Ռոշքայի ձեռագիր բառարանի հրատարակումը անհրաժեշտ է, որպիսով այն կդառնա լայն ուսումնասիրության առարկա՝ մեծապես նպաստող հայերենի բառապաշարի ընդհանուր պատմության վերաբերյալ առավել ստույգ տեղեկանալու գործին:

Շ. Ղ. Ալիշանը հետագայում ևս հեղինակում է հոդվածներ, որոնք ուշագրավ են հատկապես լեզվի ընդհանուր տեսական հիմունքի առումով: Այդպիսին է նրա համեմատաբար ծավալուն «Լեզուագիտութիւն», որում առավելաբար շոշափվում են հայոց լեզվի ուսումնասիրության պատմությանը վերաբերող հարցեր, ըստ այդմ արվում կարևոր դիտարկումներ²⁰:

գ. Հանդեսի էջերում լույս տեսած բանասիրական-լեզվաբանական լավագույն հեղվածներից մեկն էլ հ. Արս. Ղազիկյանի վերը նշված՝ «Սկիզբն հայկական լեզուի և Դիոնեսիոսի Թրակացոյ քերականութիւնը» վերնագրով աշխատանքն է:

Հայտնի է, որ Թրակացոյ քերականության թարգմանությունը եղել է 5-րդ դ. առաջին կեսին, ուստի օրինակ՝ դասական հայերեն թարգմանության: Վերջինիս լեզվի վերաբերյալ եղել են տաբեր կարգի ուսումնասիրություններ: Նրանում տեղ գտած նյութերին, մանավանդ հայերենի և հունարենի հնչյունական համարժեքներին, բազմիցս են անդրադարձել (Թ. Թոռնյան, Շ. Աճառյան և ուրիշներ): Շ. Աճառյանը, օրինակ, իր «Հայոց գրերը» և մյուս աշխատություններում, քննության առնելով սկզբնավորման շրջանի հայերենի բաղաձայների հարցը, ի թիվս այլ հնարքների, դիմում է նաև Թրակացոյ քերականության տվյալներին, նաև ըստ այդմ անում եզրակացություններ (ձայնեղների դիմաց ձայնեղներ, խուլերի դիմաց խուլեր և այլն):

¹⁹ Նույն տեղում, էջ 95:

²⁰ Տե՛ս «Բազմավեպ» (ամսագիր), 1849, Է, էջ 258-263, 292- 298:

Հ. Արս. Ղազիկյանի սույն հոդվածը (1877, ԼԵ, էջ 97-103) ժամանակի առումով կանխում է նախորդ ուսումնասիրողների արածը, որպիսով, կարելի է ասել, թե այն հիմք է հանդիսացել մյուսների համար:

Այս հոդվածին մենք անդրադառնալու ենք մեր հետագա աշխատանքներում, այստեղ միայն նշենք ամենակարևորները:

Նախ՝ կատարվում է հունարենի և հայերենի հնչյունների արտասանության գուգադրում, որ արել էր Ս. Պարթևը («Ս. Սահակին առաջին գործն եղաւ հայ գրերն յունին դիմաց կարգաւորել»), և բերվում է այդ տախտակը, ասելով՝ «սա է մեր այժմու տառադարձութիւն կոչածն, կամ փոխանակութիւն տառից»²¹:

Այնուհետև հեղինակն անդրադառնում է հարցի բանասիրական-լեզվական կողմին, շոշափվում են հարցեր (նախամեսրոպյան հայ գրի գոյություն, հունարենի հետ հայերենի այբուբենի աղերսներ, հունաբան մասնիկների փոխառություն և այլն), որոնք կարևոր են հայագիտության համար՝ թե՛ ժամանակի, թե՛ նաև հետագայի առումով, սակայն ոչ այնքան շոշափելի լուծումներ են պարունակում²²:

Հայոց գրերի արտասանության հարցը ինչպես այլ դեպքերում, այնպես էլ Թրակացու քերականության թարգմանության նյութի հետ կապված գրեթե մշտապես եղել է քննարկման առարկա, որպիսին հանդիպում ենք նաև այս հանդեսի տարբեր տարիների էջերում²³:

Հ. Արս. Ղազիկյանի սույն հոդվածը, իրոք, չի կորցրել իր արդիականությունը, որովհետև կան հետաքրքիր դիտարկումներ, որոնք կարևոր են հայոց լեզվի պատմական հնչյունաբանության լայն ուսումնասիրման համար:

Կան նաև այլ կարգի հոդվածներ, որոնց վերը շարադրվածի ընդդիմաբ անդրադառնալը մեզ շատ հեռուն կտարներ մեր սույն աշխատանքի համար հնարավոր սահմաններից:

²¹ Նույն տեղում, էջ 100:

²² Տե՛ս «Բազմավեպ» (ամսագիր), 1877, ԼԵ, էջ 97:

²³ Հմմտ. Յաղագս բնիկ հնչման հայկական տառից // «Բազմավեպ», 1845, Գ, էջ 361: «Ո գրին հնչման վրայ» // «Բազմավեպ», 1846, ԽԲ, էջ 238: «Յաղագս թարգմանութեան Աստուածաշունչ տառից ի հայ լեզու» // «Բազմավեպ», 1950, Ը, էջ 212, 1851, Թ, էջ 230: «Բացայտութիւն մեր հայկական տառերու հնչման և գրութեան մասին» // «Բազմավեպ», 1889, ԽԵ, էջ 21, 27, 129, 161 և այլն:

Այդպիսին է, օրինակ, «Աշխարհիկ կամ նոր լեզու» («Բազմավեպ», 1878, Զ, էջ 213-228) անստորագիր հոդվածը՝ գրված այն ժամանակաշրջանում, երբ արդեն աշխարհաբարը լիովին տիրապետող էր՝ ի համեմատություն գրաբարի²⁴։ Այդպես նաև հանդեսի լավագույն հոդվածներից մեկը՝ վերնագրված «Մեսրոպեան դար հայկական լեզուի» (1875, ԼԳ. էջ 7-16), որում անդրադարձ կա իր ժամանակի համար հուզող, այսօր ևս հետաքրքրություն ներկայացնող որոշակի հարցերի, եթե խնդրին մոտենալու լինենք նոր հայեցակետից։

Կարևոր ենք համարում սեղմ ներկայացնել հանդեսի լավագույն հոդվածներից մեկը՝ «Թարգմանության վրայ» («Բազմավեպ», 1873, ԼԱ, էջ 321-333) վերտառությամբ, որի հեղինակ հ. է. Հյուրմյուզյանը բավականին հստակ վերլուծությամբ, դիպուկ և հիմնավոր օրինակներով անդրադառնում է հայերենի մեջ թարգմանության բերումով տարբեր ժամանակներում տեղ գտած նախ՝ լատինատիպ անհամար նորամուծություններին, որոնք, ինչպես գիտենք, ժամանակին հաղթահարվում են՝ շնորհիվ Մխիթարյանների գործադրած հետևողական ջանքերի²⁵։

Այդպես էլ նա քննում է համեմատաբար նոր ժամանակներում ֆրանսերենից կատարված թարգմանությունների հետ կապված հայերենում նկատվող անհարիր շատ ձևեր, նույնպիսի կազմություններ, նույնիսկ իմաստային անճիշտ գործածություններ, որոնք բերվում են զուգահեռաբար, վերլուծվում և գնահատվում։

Հեղինակն իր տեսական ճիշտ մոտեցումն ունի, որ պատկերավոր ձևով տալիս է հոդվածի հենց սկզբում. «Թարգմանութիւն ըսածնիս լեզուէ լեզու բան մը անցընելն է. և ինչպէս դեսպանն իր թագաւորին խօսքը ուրիշի որ կը տանի, այնչափ բառերուն չի կապուիր՝ որչափ իմաստիցը, ասանկ ալ թարգմանիչն պիտոր ջանայ թարգմանած խօսքին իմաստն նոյն ուժով քան թէ նոյն բառերով բացատրել։ Ուր որ կարելի է բառերն ու ոճերը ալ պահել, լաւագոյն կ'ըլլայ թարգմանութիւնը, բայց ամեն տեղ չի յաջողիր այս կերպը»²⁶։

²⁴ Ավելի մանրամասն տե՛ս Վ. Գ. Համբարձումյան, Գրաբարի գործառնությունը որպէս գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., Ե., 1990, էջ 56-61։

²⁵ Հմմտ. Վ. Գ. Համբարձումյան, Լատինաբան հայերենի պատմություն (14-18-րդ դդ.), Ե., 2010, էջ 317-337։

²⁶ Նույն տեղում, էջ 321։

Փաստալից և տեսական ուժ պարունակող այս ուսումնասիրությունը, ինչպես գիտենք, նման աշխատանքների թվում խաղացել է իր էական դերը հայերեն թարգմանությունների սկզբունքների որոշման և հետևողական գործածության հարցերում:

Հայ թարգմանության արվեստի տեսանկյունից թերևս նույնպիսի կարևոր մի աշխատանք է «Հելլենաբանութիւն և հելլենաբան թարգմանիչք հայկական լեզուի (դար Զ-Ժ)» հոդվածը (ն. տ., 1875, ԼԳ, էջ 118-126), որն ավելի մատենագիտական-բանասիրական բնույթի է, քան զուտ թարգմանության տեսական հմտությունների վերաբերող, որպիսին, օրինակ, վերը նշած աշխատանքը:

Ուշադրության արժանի աշխատանք է «Ընդհանուր տեսութիւն մը նախնեաց թարգմանութեանց վրայ դատաստան ընելու» (ն. տ., 1875, ԼԳ, էջ 352-357) հոդվածը նույնպես արժանի է բանասիրական-բնագրագիտական մանրամասն քննության:

Հանդեսում լույս էին տեսնում նաև, այսպես կոչված, «մանր հոդվածներ», մանավանդ բառամեկնողական բնույթի, որոնք, առանձնապես հիմնված լինելով տարբեր կարգի վիմագիր կամ այլ արձանագրությունների վրա, փորձում են տալ այս կամ այն բառի ճշգրիտ ծագումը, այլև կատարել իմաստային մեկնաբանություն, որ երբեմն «հնարանքի» ձև է ստանում:

Այդպիսին է, օրինակ, հանդեսում տպագրված «Նաբոլէոն անունը» (ն. տ., 1874, ԼԲ, էջ 42) վերնագրով կարճառոտ հոդվածը, որի վերջում կարդում ենք. «Այն անձինք որ կը զուարճանան ծննդաբաշխ աւուրց գուշակութեամբ և բառից խաղարկութեամբ, գտան որ Նաբոլէոն անունը չորս մասն բաժանելով, կ'ելլայ յունական լեզուաւ իմաստ մը որ կը նշանակէ «Նաբոլէոն լինելով առիժ՝ կործանիչ քաղաքաց. (Ναπόλεον, ών, λεών, απολεών, πολεών): Ինչպիսի եզական նախագուշակութիւն». այդ է հոդվածագրի եզրակացությունը, քանի որ վերը արդեն նշված էր, որ «գիտեն յունագէտք, որ *Նաբոլէոն* անունն նոյնպէս ձևացած է ինչ որ *Տիմոլէոն*-ը, և թէ նշանակէ *առիժ հովտի* (napos, հովիտ, leon, առիժ)»²⁷:

Այսպիսով, ինչպես հասարակական, տնտեսական, մշակութային, առավել ևս կրոնական-եկեղեցական կյանքի բնագավառներ-

²⁷ Նույն տեղում, էջ 42: Ի դեպ՝ այս զվարճախոս բառամեկնությունը բերում է Հ. Աճառյանն իր «Լիակատար քերականություն» աշխատության (հ. 6) տողատակում:

րում, այնպես էլ լեզվի առումով Միհրթարյան հայրերի ջանքերով հրապարակ բերված «Բազմավեպ» հանդեսը լիովին իրագործել է իր նպատակը՝ սկզբնավորումից առ այսօր լինելով ժամանակին համընթաց, հայոց կյանքը դարձնելով հասկանալի, սատարելով նրա կենսունակությանը:

Ключевые слова: Взаимоотношение древнеармянского и новоармянского языков, уровень языка, фонетика, орфография, изучение стилей языка, лексика, лексикография, анализ текста, сведения о языках.

В. Г. Амбарцумян. Вопросы армянского языка, исследованные на страницах журнала «Базмавеп» (1843-1893 гг.). На страницах журнала «Базмавеп» (1843-1893 гг.), в течение упомянутых годов были изданы более пятидесяти статей по армянскому языку, которые нами здесь классифицируются по десяти группам, относящиеся как структуре языка и его историю, так и некоторым экстралингвистическим факторам его развития, как средство общения, т. е. функционирования в разные периоды его истории. Далее, некоторые из них, более значительные и более актуальные (статьи А. Багратуни, Г. Алишана, А. Сукряна и др.), нами анализируются и оцениваются как важные вехи развития арменоведения в свое время, однако не потерявшие интерес до сих пор, особенно для более подробного исследования армянского языка в новое время развития лингвистической науки.

Key-words: The relationship between Grabar (Old Armenian) and Ashkharabar (New Armenian), the level of the language, phonetics, orthography, the study of language styles, vocabulary, lexicography, text analysis, information about languages.

V. G. Hambardzumyan. Issues of Armenian language studies covered in the publication in the periodical “Bazmavep” (1843-1893). The review “Bazmavep”, during the mentioned years, published over fifty articles on the Armenian language studies which in this paper are classified into ten groups – covering both the Armenian language structure and history, as well as some extra-linguistic factors of the evolution of the language as a means of communication – more precisely, different periods of its development. Moreover, we have made a special reference to some more considerable and relevant articles published in the above-mentioned periodical (for instance, the papers by A. Bagratuni, Gh. Alishan, A. Sukryan, etc.), with the aim to analyse and evaluate the most significant phases of development of Armenian Studies in the respective periods of development which have not lost their relevance yet, especially, for modern researches on the Armenian language within the framework of contemporary linguistic theories.

**ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ՝ ՆՎԻՐՎԱԾ
Ա. Ա. ԱՔՐԱՀԱՄՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ**

Մեծ է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Արսենի Աբրահամյանի գիտական ներդրումը հայերենի ուսումնասիրության բնագավառում: Անվանի լեզվաբանն իր ողջ կյանքը նվիրաբերել է հայերենագիտության զարգացմանը, թողել լեզվի տարբեր բնագավառներին վերաբերող հարուստ ժառանգություն՝ ժամանակակից հայերենի բայի կառուցվածքի ուսումնասիրություն, գրաբարի բացառիկ դասագրքի ստեղծում, հայ փիլիսոփա Եզնիկ Կողբացու Երկի, Ստեփանոս Օրբելյանի Պատմության գիտական թարգմանություն, առանձին բառերի բնագրային քննություն և ստուգաբանություն և այլն: Այս ամենի մեջ նա ասել է իր հիմնավոր, ըստ ամենայնի համոզիչ խոսքը:

Լույս է տեսել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի գիտական հոդվածների հերթական ժողովածուն («Հանրապետական գիտաժողովի նյութեր՝ նվիրված Ա. Ա. Աբրահամյանի ծննդյան 100-ամյակին», Ե., «Էդիթ-Պրինտ» հրատ., 2020, 224 էջ):

Ժողովածուն ընդգրկում է չորս բաժին՝ «Անվանի հայագետը և մանկավարժը», «Գրական նորմա և կառուցվածք», «Լեզվի պատմություն և բարբառագիտություն», «Լեզվի ուսուցում և մեթոդիկա» վերտառությամբ, որոնցից առաջին երեքը հիմնականում վերաբերում են անվանի լեզվաբանի գիտական ժառանգության այս կամ այն մասի վերլուծությանը և գնահատությանը, իսկ վերջինում կատարվում է անդրադարձ հայերենագիտության զարգացման տարբեր խնդիրների:

Հոդվածների ժողովածուն բացվում է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ.գ.դ. պրոֆ. Ա. Գ. Դուլիսանյանի «Աշոտ Աբրահամյան գիտնականը և մանկավարժը» գիտական հոդվածով, որում անդրադարձ է կատարվում մեծավաստակ գիտնականի գիտամանկավար-

ժական գործունեությանը, վեր է հանվում Ա. Ա. Աբրահամյանի աշխատությունների գիտական արժեքը ժամանակի լույսի ներքո:

Առաջին բաժնում զետեղված են ուշագրավ նյութեր Ա. Ա. Աբրահամյանի և օտարազգի հայագետների (դոց. Ս. Ամիրջանյան), Աբրահամյանի՝ որպես լեզվաբանության բնագավառում փիլիսոփայական դպրոցի ներկայացուցչի (պրոֆ. Յու. Ռ. Դավթյան), անվանի գիտնականի աշխատություններում գրաբարի շարահյուսական իրողությունների ըմբռնման (պրոֆ. Էդ. Ս. Մկրտչյան), քերականական սեռի տեղաշարժերի և կրկնասեռության (պրոֆ. պաշտ. Գ. Խալաթյան), ինչպես նաև արևմտահայերենի դերբայների դիտարկման (դոց. Ս. Ղարիբյան) վերաբերյալ: Նոր իրողությունների այսպիսի հավելումներն ավելի են ամբողջացնում լեզվաբանի գիտական ժառանգության համաձիրը:

«Գրական նորմա և կառուցվածք» բաժնում շոշափվում են հաղորդակցական լեզվաբանության, լեզվաբանական տերմինների, բառակազմական և ձևաբանական կաղապարների հարցեր: Ի մասնավորի դիտարկված են հուշագրության ժանրի կառուցվածքային և ոճական իրողություններ (դոց. Ա. Վ. Գալստյան), «Լեզվական մաքրամոլություն» անվանման (դոց. Հ. Լ. Ջաքարյան), ռուսերենում և հայերենում հունարեն լեզվաբանական եզրույթների պատճենումների (պրոֆ. Լ. Մ. Խաչատրյան), հայերենի բառապաշարի ձևային նկարագրության (բ. գ. թ. Մ. Ա. Սարգսյան), արևելահայերենի և արևմտահայերենի մի քանի տերմինների զուգադիր քննության (դոց. Ս. Տիոյան) հարցեր:

«Լեզվի պատմություն և բարբառագիտություն» բաժնի որոշ նյութեր վերաբերում են V դարի հեղինակների բառապաշարային իրողություններին. «Փ. Բուզանդի «Այծից հայոց արքայ» արտահայտությունը. իմաստաբանություն և տիպաբանություն» (պրոֆ. Վ. Գ. Համբարձումյան), «Կրոնի և հավատալիքների իմաստային դաշտին պատկանող բառերը Ե. Կողբացու «Եղծ աղանդոց» երկում» (դոց. Ն. Հ. Դիլբարյան), «Անձնանունների հոլովման առանձնահատկությունները Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկում» (դոց. Ա. Խաչատրյան): Այս բաժնում տեղ են գտել նաև «Մակուի խոսվածքը Կոտայքի մարզում» (բ. գ. դ. Վ. Լ. Կատվալյան), «Բուսանունները «Հայերենի բարբառագիտական ասլասի նյութերի հավաքման ծրագրում»» (բ. գ. դ. Հ. Հ. Մեսրոպյան), «Ներքին խոսքի դրսևորման

առանձնահատկությունները Գրիգոր Նարեկացու «Մատենանոց քերական» երկում» (դոց. Ա. Յուզբաշյան), «Հովհան Մանդակունու ճառերի բառակազմական և իմաստային առանձնահատկությունները» (դոց. դոց., Ն. Պարոնյան, Ս. Գրիգորյան) ուշագրավ հոդվածները:

«Լեզվի ուսուցում և մեթոդիկա» բաժինը պարունակում է ուսումնական ուշագրավ հրապարակումներ: Հետաքրքրական են և ուսանելի «Ա. Աբրահամյանի կիրառած բառուսուցման մի հնարի մասին» (դոց. Դ. Ս. Գյուրջինյան), ««Հայոց լեզու և բժշկական տերմինաբանություն» առարկայի դասավանդումը ԵՊՀ-ում» (դոց. Հ. Վ. Սուքիասյան) մեթոդական հիմքով գիտական հոդվածները: Այստեղ զետեղված են նաև «Բայական դարձվածային միավորների կառուցատիպերը Ստ. Օրբելյանի «Պատմություն նահանգին Սիսական» երկում» (բ. գ. թ. Ա. Ավետիսյան), «Հետադարձ բառակազմության առանձնահատկությունը անգլերենում և հայերենում» (բ. գ. թ. Ս. Կարապետյան) երիտասարդ լեզվաբանների հաղորդումները:

Անվանի լեզվաբան, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի երկարամյա դասախոս, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի տարբեր տարիների աշխատակից, պրոֆ. Ա. Ա. Աբրահամյանի գիտական վաստակն ուսումնասիրվել է և ուսանելի է եղել սերունդների համար. այն այսօր ևս մնում է իբրև հայերենագիտության էական ներդրում:

Գրախոսվող ժողովածուն մի նվիրաբերում է մեծ լեզվաբանի հիշատակին, հասցեագրված է մասնագետներին և հայերենի նկատմամբ հետաքրքրություն ունեցող ընթերցողներին:

Բանասիր. գիտ. թեկնածու Ա. Վ. Գալստյան

ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ
КНИЖНОЕ ОБОЗРЕНИЕ
BOOK REVIEWS

«Ջահուկյանական ընթերցումներ», ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հայերենագիտական միջազգային առցանց գիտաժողովի նյութեր (Երևան, 2020թ., դեկտեմբերի 17-18), Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2020, 208 էջ + 5 էջ նկ.:

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը այս շրջանում ևս շարունակում է գիտական բարձր մակարդակի վրա պահել իր գործունեության արդյունք հրապարակումները: Լույս են տեսնում հոդվածներ՝ գիտական տարբեր հանդեսներում, մենագրություններ՝ աշխատակիցների առանձին կամ կոլեկտիվ հեղինակությամբ, ժողովածուներ՝ ինստիտուտի և նրան ճառագայթածն առնչվող հայաստանյան և արտերկրի տարբեր մասնագետների ջանքերով:

Իսկ այս անցնող տարին, այնուամենայնիվ, հորեղանակյա էր ինստիտուտի համար. լավ, գիտական ընդգրկման առումով նկատելի ձևով նշվեց ինստիտուտի երկար տարիների տնօրենի՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Բ. Ջահուկյանի ծննդյան 100-ամյակը՝ բեղմնավոր գործունեության հատկանշումով:

Տասնամյակներ առաջ եղած միջոցառումների նման չէր այն (զեկուցումներ՝ տարբեր դահլիճներում, կից այցելություններ և էքսկուրսիաներ, բանկետ, թատերական և օպերային ներկայացումների այցելություն և այլն), սակայն նույնքան՝ կարևոր, նույնպես տեղին: Անվանի լեզվաբանի հորեղանին, որ այս անգամ տեխնիկայի նոր խոսքով էր՝ առցանց եղանակով, հանդես եկան տարբեր սերնդի լեզվաբաններ՝ ինստիտուտից, գիտական այլ հաստատություններից, արտերկրից: Զեկուցումների մի զգալի մասը ուղղակիորեն վերաբերում էր Գ. Ջահուկյանի կյանքին, գիտական ժառանգությանը:

Այս ժողովածուն ներառում է ակադ. Գ. Բ. Ջահուկյանի

ծննդյան 100-ամյակին նվիրված հայերենագիտական միջազգային առցանց գիտաժողովի նյութերը:

Առաջ անցնելով պիտի ասեմ, որ մեծ գործ արած կլինի լեզվի ինստիտուտը, եթե առաջիկայում ձեռնամուխ լինի հրատարակելու անվանի լեզվաբանի տարբեր լեզուներով և առանձին հանդեսներում, ժողովածուներում տպագրված հոդվածները, զեկուցումները և ելույթները, նրա գրքերի վերաբերյալ գրախոսությունները և այլն, դրանով նպաստած կլինի մեծ հայագետի գիտական ժառանգության առձեռն օգտագործմանը:

Ժողովածուի նյութերը վերաբերում են հայագիտության մի քանի բնագավառի.

1. *Անդրադարձ Գ. Ջահուկյանի գիտական ժառանգությանը:* Այս բաժնում ներկայացվում է լեզվաբանի հայագիտության տարբեր բնագավառների վերաբերյալ ուսումնասիրությունների գնահատությունը: Ընդ որում շեշտը դրվում է այն կետի վրա, որ անվանի լեզվաբանը անցյալ դարի 60-ական թթ. ամենամեծ ուսումնասիրողն է եղել, այլև նրա աշխատությունները այսօր ևս ունեն ուղղորդող նշանակություն. մանրամասն ներկայացվում են հայերենի և մյուս լեզուների առջություններին, հայերենի բարբառների տեսությանը, լեզուների համընդհանուր կաղապարի մշակման վերաբերող աշխատանքերը (Վ. Կատվալյան): Սերտ առնչություններ են եղել հայերենի և իրանական լեզուների միջև, ընդ որում պատմամշակութային շփումների ընթացքում հայերենին են անցել առավելապես բառային միավորներ՝ իբրև փոխառություններ, որոնք շարունակաբար քննվում են ըստ ամենայնի (Լ. Հովհաննիսյան): Ջահուկյանը եղել է ոչ միայն մեծություն համեմատական լեզվաբանության, այլև լեզուների ընդհանուր տեսության բնագավառում: Նրա՝ հայ բարբառների վիճակագրական ուսումնասիրության հայեցակետը լեզվաբանական ինքնուրույն արժեք է, որի տեսական հիմունքով անդրադառնալը կարևոր է հետագա աշխատանքների համար (Ս. Սարգսյան), և պատահական չէ, որ անվանի լեզվաբանը տարիների ընթացքում գիտական իր ըմբռնումներն ու սահմանումները պիտի անվաներ ոչ միակերպ, առանց տեղիք տալու, այսպես կոչված, տերմինային հոմանշության. վերջինիս առանջացումն ու վերլուծությունը ևս կարևոր են, և ժողովածուում այն հաջողությամբ իրագործված է (Ս. Սարգսյան):

2. *Բառակազմություն և իմաստաբանություն*: Գեղարվեստական խոսքի վավերագրությունը ամեն մի լեզվի առավել կենդանի հաղորդակցական ոլորտ է, որ ներկայանում է հուշագրական բնագրի լեզվական-մտածողական տարբեր դրսևորումներով (Ա. Գալստյան): Նույնանշությունը հայերենի բառապաշարի իմաստաբանության ուշագրավ ոլորտներից է, որի քննությունը կոնկրետ գրավոր աղբյուրների նյութի հիման վրա, այն էլ՝ տարածամասնակյա կտրվածքում, անհրաժեշտ է հայոց լեզվի պատմության համար. նման միավորները հանդես են գալիս ոչ միայն առանձին-առանձին, այլև իբրև բառակապակցություններ և արտահայտություններ. վերջիններս այս ժողովածուի մեջ ներկայացվում են հայերեն ձեռագիր բառարանների նյութի հիման վրա (Ն. Հովհաննիսյան): Հականիշ բառերի գործածությունը հեղինակային խոսքում, ընդ որում լեզվի տարածամասնակյա կտրվածքում ունի իր հետաքրքիր կողմերը, որոնք ուշագրավ ձևով ներկայացվում են ըստ հայ միջնադարի մեծ ներկայացուցիչ Գր. Տաթևացու երկերի (Ս. Գրիգորյան): Դասական մատենագրության գրեթե ամեն մի գործ, մանավանդ եթե այն նախկինում չի եղել լեզվական հատուկ քննության առարկա, այսօր անհրաժեշտ է հայոց լեզվի ավելի ծավալուն և մանրամասն պատմություն ունենալու համար, ուստի միանգամայն գնահատելի է Մամբրե Վերծանողի լեզվի բառային նորակազմությունների քննությունը, որը տեղ է գտել սույն ժողովածուի էջերում (Ս. Գրիգորյան և Ն. Պարոնյան): Ֆրանսիացի ճանաչված հայագետի ուշագրավ հոդվածը նվիրված է լեզվական շփումներին (հայերենի և այլ լեզուների միջև), որոնք սահմանվում են, ըստ հեղինակի անվանման, «բաց» և «փակ» լեզուների առնչություններ (Ռ. Տեր -Մերկերյան): Արդի հայերենի բառապաշարի համակարգում ևս վերջին տարիներին կատարվում է իմաստային առանձին վիավորների քննություն, ընդ որում ոչ միայն ինքնակա, այլև դարձվածային-իմաստային հարաբերության մեջ. նման հաջողված փորձ է *սիրտ* բառի ուսումնասիրությունը հիշյալ ձևաչափի մեջ (Լ. Տեր-Գրիգորյան):

3. *Բառաքնություն և ստուգաբանություն*: Եթե հեռվից սկսելու լինենք, ապա պիտի նախ նշենք, որ լեզվաբանությունը, իբրև հասարակական գիտություն, ի սկզբանե առանձնացել է իբրև լեզուների համեմատական ուսումնասիրության բնագավառ, ընդ որում հայերենը բավականին վաղ է ընդգրկվել այդ բնագավառում

քննվող լեզուների մեջ: Հայերենի ուսումնասիրության ոլորտում կատարված է հսկայական աշխատանք, սակայն (ըստ Աճառյանի տվյալների) հայտնի է հայերեն արմատների միայն կեսի ծագումը, իսկ մյուս կեսինը առ այսօր մնում է «անստույգ»: Ուստի պատահական չէ, որ գրեթե միշտ այս ոլորտում կատարվում են փորձեր ստուգաբանական-բառամեկնողական բնույթի: Այս ժողովածուի մեջ տեղ են գտել նման հոդվածներ, որոնցից մեկը առավելապես բառաքննական է (Ա. Ամիրխանյան), իսկ մյուս երեքը՝ զուտ ստուգաբանական. հայ. *ձուլել* / *թափել* բայերի իմաստային առնչությունը ներկայացվում է նոր մոտեցմամբ, ընդ որում ավելի շատ գրական նորմավորման հենքի վրա, ժողովրդական լեզվամտածողությամբ ևս հայտնի է *թափել* բայի «որոշակի ձևի՝ կաղապարի մեջ տեք տալ» իմաստը. հմմտ. *մատանի թափել* («ձուլել՝ պատրաստել»), *ականջօղ թափել* («ձուլել. պատրաստել»), (բրբռ.) *պասմա թափել* («գոմաղբը դրսում հարդարել՝ փռել» և այլն), իսկ արմատի վերականգնման հնչյունական նշանակումն այստեղ լիովին հավանական է (Ն. Միմոնյան): Հայերենի բարբառներում, բնականաբար, կա բնիկ կամ հնդեվրոպական ծագման նստվածք, որի ուսումնասիրությունը, Գ. Ջահուկյանի և Ն. Միմոնյանի հայտնի աշխատանքներից բացի, ուրիշ հեղինակների կողմից կատարվածը տարբեր ընդգրկման փորձ է, այնուամենայնիվ՝ նույնպես կարևոր հարցի ընդհանուր լուծման համար: Ըստ այսմ Սյունիք-Արցախի բարբառային ոլորտում կատարվող աշխատանքը պիտի լինի ավելի հստակ՝ ոչ միայն արմատի վերականգնման առումով, այլև իմաստային (թեմատիկ) հիմնավորումների և համաբանության մեջ . *ածիկ* բառի ծագումը, օրինակ, ավելի շուտ կապվում է *հաց* (*հատիկ*) բառի հետ (հմմտ. իսթ. *hatti*-) (Մ. Քումուսնգ): Հայ. *ցատկել*, *ցայտել*, *ժայթքել* բառերի և հարակից միավորների ստուգաբանության փորձը, կարծում ենք, ենթադրում է վերլուծության ապացուցողական մեծ լիցք, մանավանդ որ դասական համեմատաբանության մեջ այդ առումով կա ձեռքբերում (Հ. Ջաքարյան):

4. *Բարբառագիտություն*: Ուշագրավ հոդվածներ են ընդգրկված այս բաժնում: Առանձին ուշադրության առարկա են Ղարաբաղի (Արցախի) բարբառի բառակազմական հնաբանությունները, որոնց ուսումնասիրմանը տրվում է մեծ կարևորություն հայոց լեզվի ընդհանուր պատմության առումով (Լ. Հովհաննիսյան): Ներ-

կայումս լայն ուշադրություն է դարձվում խառը տիպի խոսվածքների ուսումնասիրությանը, որպիսի մի փորձ է Կոտայքի մարզում գործածվող նման բարբառներին անդրադառնալը (Վ. Կատվալյան): Հյուսիսային Գողթնի խոսվածքների ձևաբանական առանձնահատկությունները քննվում են բավական մանրամասն վերլուծությամբ (Ա. Վարդանյան): Համշենի բարբառի բառիմաստային յուրօրինակ զարգացումներին անդրադառնալիս հեղինակը գտնում է, որ «պայմանավորված համշենահայերի յուրահատուկ լեզվամտածողությամբ ու աշխարհընկալմամբ, դրսևորված են բառիմաստային յուրօրինակ ճյուղավորումներով ու զարգացումներով բառանուններ» (էջ 86), և բերվում են տեղին օրինակներ (Հ. Խաչատրյան):

5. *Քերականություն. հնչյունաբանություն.* Բանավիճային բնույթ ունի գրական արևմտահայերենի խոսքի մասերի որոշ քերականական կարգերի ձևաիմաստային դրսևորման յուրահատկությունների հարցը, մանավաղ դպրոցական ուսուցման մակարդակում, որն էլ հատուկ քննության է առնված ժողովածուում՝ դիտարկված մասնավորապես անորոշ ածական/անորոշ դերանուն հարաբերության մեջ (Ա. Ֆիշենկճեան): Ժողովածուի ուշագրավ հոդվածներից է հայերենի ձայնավորներով վերջացող բառերի ձևային նկարագրության վերաբերող աշխատանքը, որի հեղինակները փաստական հարուստ նյութի քննության հիման վրա եզրակացնում են, որ նման աշխատանքը «կարող է նպաստել լեզուների տիպաբանական դասակարգմանն ուղղված աշխատաքներին», «մեքենական թարգմանության լեզվական խնդիրներ կարգավորելիս», նաև «լեզվավիճակագրական հաշվարկներ կատարելիս» (Ռ. Թոխմախյան և Ս. Տիոյան):

Ինչպես նկատում ենք, հայերենի ուսումնասիրության ակադեմիական ոլորտը շարունակում է իր անդուլ գործունեությունը՝ ի նպաստ գիտության առաջընթացի:

«Հայերենը և կելտական լեզուները», Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2020, 272 էջ: Հրապարակի վրա է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի վարիչ, բ. գ. դ. Վ. Գ. Համբարձումյանի հիշյալ վերտառությամբ աշխատությունը, որը տպագրվել է ՀՀ ԳԱԱ

հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

Հայտնի են հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների առավելապես ծագումնային հարցերին վերաբերող աշխատություններ, ընդ որում ոչ միայն իբրև համահավաք (առանձին կամ համահեղինակ) մենագրություններ, այլև տարբեր ընդգրկման հոդվածներ, զեկուցումների թեզեր: Նման բնույթի աշխատություններ մեզանում գրվել են հայերենի և հին հնդեվրոպական լեզուների նկատառումով, այլև հայ-սլավոնական, հայ-իտալյան, հայ-հունական, հայ-հնդիրանական լեզվական առնչություններին վերաբերող, որոնք իրենց ծավալով, մանավանդ թեմատիկ ընդգրկումով էապես տարբերվում են սույն ուսումնասիրությունից: Այս դեպքում մի կողմից՝ քննության շեշտը դրված է զուգադրվող լեզուների և նրանց բարբառային (կելտականում՝ «լեզվական») տարբերակների փոխհարաբերության պարզաբանման վրա, մյուս կողմից՝ քննության առարկա են այդ լեզուների ոչ միայն հնչյունական և բառային զուգադիպումների ընդհանուր ծավալի ներկայացումը, այլև դրանց մշակութային-իմաստային («թեմատիկ») բաշխվածությունը:

Հայ-կելտական ծագումնային և տիպաբանական առնչությունների հարցերի առանձին մենագրական քննություն կատարվում է առաջին անգամ, որ կարող է նմուշ լինել հայերենի և այլ լեզուների նման ուսումնասիրության համար:

Գիրքը վերաբերում է հայերենի և կելտական լեզուների առանձին քննությանը համեմատական-տիպաբանական տարբերակայնության տեսանկյունից, բաղկացած է ներածությունից և տարբեր գլուխներից: Դրանցից առաջին երկուսում բնութագրվում են երկու տիպի լեզուները և նրանց բարբառները, երրորդում՝ քննվում է դրանց ծագումնային առնչությունների հարցը, իսկ մյուս գլուխներում ուշադրության առարկա են հնչյունական և բառային զուգաբանությունները:

Աշխատանքն իր բնույթով զուգաբանական-տարբերակային (վարիատիվ) ուսումնասիրություն է՝ հեղինակի մշակած սկզբունքների կիրառմամբ: Բուն նյութի վերլուծությունը կատարվում է ցեղակից լեզուների հնչյունական համակարգի զուգադրմամբ և բառային միավորների ստուգաբանական վերլուծությամբ՝ իբրև ճյուղային առնչության դրսևորում, որ ենթադրում է ընդհանուր

գծերի վերհանում, տարբերության բացառմամբ մերձավորության աստիճանի նշանակում:

Առանձին քննության առարկա են հնչյունական զուգաբանությունները՝ ըստ ոչ միայն հայտնի ընդհանուր օրինաչափությունների, այլև նոր բացահայտվող կոնկրետ յուրահատկությունների: Իսկ բառային զուգաբանությունները բերվում են որոշակի ճշգրտումներով, ոչ թե աղյուսակներով, այլ ցանկերով, և յուրաքանչյուր դեպքում բառի նշանակման տեսքով, ընդ որում ստուգաբանությամբ, վերջինի հնարավոր նոր գրանցումով և լրացումներով, կատարվում է իմաստային (թեմատիկ) խմբավորում:

Նման աշխատանքի դեպքում կարևոր են այլ լեզուներով ամփոփումները, ուստի վերջում բերվում են ռուսերեն և անգլերեն լեզուներով համեմատաբար ծավալուն ամփոփումներ, որոնք նույնն են իրար հետ և ամբողջովին արտացոլում են ողջ աշխատանքը:

Գիրքն ունի սկզբնաղբյուրների և գրականության ցանկ, տարբեր բնույթի համառոտագրություններ, ամենավերջում՝ անվանացանկ:

Ինչպես նշվում է գրքի անոտացիայում, «աշխատությունը կարող է օգտակար լինել լեզվաբան- համեմատաբաններին, առհասարակ բանասերներին, հնագույն պատմության և մշակույթի հարցերով հետաքրքրվողներին»:

«Լեզու և լեզվաբանություն», Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. 2020, 1 (22), 112 էջ: Լույս է տեսել ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հանդեսի հերթական համարը, որի տարբեր բաժիններում ներկայացվում են ինչպես ինստիտուտի, այնպես էլ հայրենական գիտության այլ հաստատությունների (բուհերի) գիտնական-մասնագետների հոդվածները՝ նվիրված հայերենի և նրա առնչությամբ այլ լեզուների տեսության և գործաբանական քննության հարցերի:

Հանդեսը բացվում է մեր ժամանակների մեծ լեզվաբան, ինստիտուտի երկար տարիների ղեկավար ակադեմիկոս Գ. Բ. Ջահուկյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հակիրճ անդրադարձով, որը տուրք է անձնվեր հայորդու հիշատակին:

Հանդեսի «Հողվածներ» բաժնում քննվում են երկլեզվության (հայերեն և անգլերենի) մեջ հանպատրաստից խոսքի ընդհատումների պատճառները (հեղ.՝ Բ. Գ. Պ. Կ. Աբրահամյան, Բ. Գ. Թ. Կ. Վելյան), հայերենի բարբառներում «խունկ» հասկացության անվանումները (հեղ.՝ Բ. Գ. Պ. Հ. Մեսրոպյան), բառիմաստային համակարգի զարգացման ըմբռնումը (հեղ.՝ Բ. Գ. Թ. Ա. Մարտիրոսյան):

Արդի հայերենի տեսության և լեզվի պատմության առումով բավականին ուշագավ են «Բանավեճ և քննարկում» բաժնի հողվածները՝ նվիրված ստորոգմանը, միակազմ և այլ տիպի ստորոգումների առանջնացման տեսությանը հայ լեզվաբանության մեջ (հեղ.՝ Բ. Գ. Թ. Լ. Թելյան), գրական երկու հուշարձանի (Թադևոս Առաքյալի «Վկայաբանություն» և «Գյուտ նշխանաց») մեջ դարձվածային միավորների գործածությանը (հեղ.՝ Բ. Գ. Պ. Ա. Աբաջյան, Բ. Գ. Թ. Ա. Յուզբաշյան) և քրիստոնեության վարդապետությանը վերաբերող գրաբար բայական կայուն կապակցություններին (հեղ.՝ Բ. Գ. Թ. Լ. Ավետիսյան):

«Հաղորդումներ» բաժնում ընդգրկված հողվածներից մեկը վերաբերում է հայերենում, ռուսերենում և անգլերենում առկա անձի հատկանիշ արտահայտող բայական դարձվածային միավորների կառուցատիպերի քննությանը (հեղ.՝ Բ. Գ. Թ. Մ. Բադաղյան), իսկ մյուսում ստուգաբանվում են հայերեն *այգի* «(խաղողի) այգի» [*<oi-yi(ā)-*], *հալ(անի)* «արու. որձ (գուգընկեր)» (*<g^[h]ab^[h]-*), *սկել* «տքնել. արթուն մնալ և (ուշադիր) հսկել» (*<sek'- / sk'-*) և *ստահակ* «անառակ, ըմբոստ» [*<(s)t^[h]aHi-*] բառերը, որոնք, պարզվում է, բնիկ են, ունեն հնդեվրոպական ծագում (հեղ.՝ Բ. Գ. Պ. Վ. Գ. Համբարձումյան):

«Գրախոսություններ» բաժինը ներառում է Բ. Գ. Պ. Վ. Լ. Կատվայանի «Հայաստանի Հանրապետության բարբառային համայնապատկեր. Գեղարքունիքի մարզ» (Ե., 2018) աշխատության (գրախոս՝ Բ. Գ. Թ. Ա. Վարդանյան) և Բ. Գ. Թ. Ա. Վ. Գալստյանի «Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն (19-րդ դ. 60-ական – 21-րդ դ. 10-ական թթ.)» (Ե., 2020) գրքի (գրախոս՝ Բ. Գ. Թ. Ա. Լ. Սարգսյան) քննությունը:

«Գրքերի տեսություն» բաժնում սեղմ ներկայացվում են լեզվի ինստիտուտի ամենամյա «Ջահուկյանական ընթերցումներ» (Ե., 2019, 224 էջ) ժողովածուն, Վ. Գ. Համբարձումյանի «Լեզվաբա-

նության հիմունքներ» (Ե., 2019, 368 էջ) բուհական ձեռնարկը, հայոց լեզվի պատմության բաժնի կոլեկտիվ «Հայոց լեզվի պատմական ուսումնասիրության արդի խնդիրներ» (Ե., 2020, 227 էջ) ժողովածուն և բառագիտության և բառարանագրության բաժնի կազմած «Նոր բառեր (Ե պրակ)» (Ե., 2020, 176 էջ) աշխատանքը:

Ամսագրի վերջում հայտնվում է ցավակցություն ինստիտուտի երեք աշխատակցի վախճանի մասին:

Վ. Գ. Հ.

Ս.թ. սեպտեմբերի 20-ից մինչև նոյեմբերի 30-ը ԳԱԱ լեզվի ինստիտուտում տեղի է ունեցել «Լեզու և խոսք» խորագրով առցանց գիտաժողով: Գիտաժողովին մասնակցել են ՀՀ գիտակրթական տարբեր հաստատությունների հետազոտող-գիտնականներ:

Նյութերը տեղադրված են ինստիտուտի կայքի (<http://language.sci.am>) «Գիտաժողովներ» բաժնում: Կայքում տեղադրված են նաև ընթերցողների հարցերը և հեղինակների պատասխանները, ինչպես նաև արված դիտարկումները՝ տարբեր հարցերի վերաբերյալ: Գիտաժողովի նյութերի ժողովածուն կհրապարակվի ինստիտուտի էլեկտրոնային կայքում:

Ս.թ. հուլիսի 17-ից օգոստոսի 1-ը լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի աշխատակից, Բ. Գ. Թ. Մ. Սարգսյանը գործուղվել է Օդեսա՝ որպես հրավիրյալ մասնագետ: Նա տեղում անցկացրել է «Հայե-

րենը որպես երկրորդ լեզու դասավանդելու սկզբունքները և չափանիշները» մասնագիտական վերապատրաստման դասընթաց (30 ժամ, 1 կրեդիտ) Օդեսայի Մեսրոպ Մաշտոցի անվան կիրակնօրյա հայկական դպրոցում, մշակել է նույն դպրոցի կրթական ծրագրերը:

Ս.թ. դեկտեմբերի 11-13-ին ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում տեղի ունեցավ «Ապագայի Հայաստան» գիտաժողով-դպրոցը: Գիտաժողով-դպրոցի կազմակերպիչներից էր նաև լեզվի ինստիտուտի գիտաշխատող, Բ. Գ. Թ. Մ. Սարգսյանը: Զեկուցումներով հանդես եկան ՀՀ գիտակրթական տարբեր հաստատությունների երիտասարդ հետազոտողներ, ասպիրանտներ, մագիստրանտներ: Զեկուցումների թեմատիկան շատ լայն էր, անդրադարձ եղավ գիտության տարբեր բնագավառներին: Գիտաժողով-դպրոցի ընթացքում հրապարակային դասախոսություններով հան-

դեւ եկան նաև ՀՀ ԳԱԱ աշխատակիցները: Լեզվի անադարտության, լեզվական սխալներին իր զեկուցումով անդրադարձավ նաև լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժնի լաբորանտ-հետազոտող Ն. Խաչիբաբյանը:

Գիտաժողով-դպրոցը լավ հնարավորություն էր հատկապես գիտության բնագավառում իրենց առաջին քայլերը կատարող հետազոտողների համար:

* * *

Ս.թ. դեկտեմբերի 17-18-ին տեղի ունեցավ մեծն Ավետիք Իսահակյանի ծննդյան 145-ամյակին նվիրված գիտական նստաշրջան, որ կազմակերպել էր մեծանուն բանաստեղծի անվան թանգարանի տնօրինությունը: Մեծ է Իսահակյանի նվիրումն իր ժողովրդի հանդեպ, անասելի մեծ նրա թողած գրական ժառանգությունը, որն ունի արդիականության շեշտեր, մարդկային վեհության ուղիներ: Նա անմահ անուն է, հայ իրականության, հայ գրականության համար:

Նստաշրջանին մասնակցում էին գիտնականներ՝ գրականագետներ, բանասերներ, մշակույթի ներկայացուցիչներ, այլ մտավորականներ, նիստերին ներկա էր բանաստեղծի թոռը՝

անվանի գրականագետ Ավ. Իսահակյանը:

Այդ կարևոր միջոցառմանը մասնակցում էր նաև լեզվի ինստիտուտի բաժնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյանը: Նա հանդես եկավ «Բառի պատկերայնությունը Ավ. Իսահակյանի «Ալագյազի մանիներ» պոեմում» զեկուցումով՝ առանձնապես անդրադառնալով պոեմի գեղարվեստական-բանաստեղծական խոսքի մի քանի յուրահատկություններին՝ բառային, ոճական-արտահայտչական, շարահյուսական, որոնք իրենց ակունքներն ունեն ժողովրդական մտածողության մեջ:

Ըստ զեկուցողի՝ այդ պոեմի խորքում գարնան, բնության զարթոնքի թեման է, որն այնքան կենսունակ է հայկական դիցաբանության մեջ՝ ամենից առաջ իբրև հնդեվրոպական ժառանգություն. բնության և մարդու ներդաշն դրսևորում՝ արթնացման մեջ, առաջինի գեղեցկության և երկրորդի համարժեքության հանդիպադրում՝ երիտասարդ բանաստեղծի խոսքի հյուսվածքի մեջ: Այդ համատեքստում էլ նա քննության առավ հենքային մի քանի բառեր և արտահայտություններ, որոնք երկուստեք՝ բառ-պատկեր հարաբերության

մեջ նշանակում են բնության արթնացում երեվոյթի հնավանդ երանգները, ռիթմը, ծավալումը:

Զեկուցումներն, իրոք, բավականին հաջողված էին, և որոշ հարցերի շուրջ լինում էր տարբեր ծավալի քննարկում, մտքերի փոխանակում:

Լեզվի ինստիտուտում կայացավ տարեվերջյան հաշվետու ժողով, որն ամփոփումն էր անցնող տարվա ձեռքբերումների, մտահոգությունների և անելիքների վերաբերյալ:

Ժողովին մասնակցում էր ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս- քար-

տուղար Յու. Մ. Սուվարյանը: Հաշվետու զեկուցումով հանդես եկավ ինստիտուտի տնօրեն Բ. Գ. Ղ. Վ. Լ. Կատվայանը, որը մանրամասն ներկայացրեց ինստիտուտի բաժինների գործունեությունը՝ ըստ պլանային թեմաների կատարման ուղղությունների, ձեռք բերված արդյունքների:

Հաշվետվության շուրջ եղավ մտքերի փոխանակում, հանդես եկան հայոց լեզվի պատմության բաժնի վարիչ, Բ. Գ. Թ. Գ. Մ. Մխիթարյանը և արդի հայերենի բաժնի վարիչ Բ. Գ. Թ. Ա. Ասոյանը, որոնք ավելի մանրամասն անդրադաձան իրենց բաժինների գործունեությանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Մ. Ա. Սարգսյան. Հայալեզու տեքստերի էլեկտրոնային նոր սրբագրիչի սկզբունքները	3
Դ. Վ. Գյուլգասյան. Հայացք առ լեզվական հորինվածքների կառուցատիպեր (փոփոխական հարաժամանակյա համայնալեզվաբանության հարցեր)	8
Ս. Ա. Միքայելյան. Արաբական փոխառությունները Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ում	22

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հ. Հ. Մեսրոպյան, Սյունիքի մարզի բարբառային ընդհանուր պատկերը	29
Տ. Վ. Սաֆարյան. Սոցցանցերում լատինատառ հայերեն գրության սխալ ձևերի մասին	39

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ա. Վ. Գալստյան գեղարվեստավերագրական բնագրերի բառապաշարի բառակազմական կադապարները	46
Գ. Մ. Գրիգորյան, Օ. Զաքարյան. Անգլերենի բառապաշարի դասավանդումը նպատակային-թեմատիկ միջոցներով (իրավաբանական ոլորտի օրինակով)	62
Վ. Գ. Համբարձումյան. Հայերենի ուսումնասիրության հարցեր «Բազմավեպ» հանդեսի էջերում (1843-1893 թթ.)	74

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ա. Վ. Գալստյան. Գիտական հոդվածների ժողովածու՝ նվիրված Ա. Ա. Աբրահամյանի ծննդյան 100-ամյակին	87
---	----

ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ	90
-------------------------	----

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ	99
---------------------	----

СОДЕРЖАНИЕ

Статьи: *М. А. Саргсян*, Принципы нового электронного корректора армяноязычных текстов - 3. *Д. В. Гюльзатян* – Взгляд на структурные типы языковых композиций-8. **Дискуссии и обсуждения:** *А. О Месропян*. Общая картина диалектов Сюникской области - 29. *Т. В. Сафарян*, Неправильные формы армянского писания на латинице в соцсетях и их влияние на армянский язык - 39. *С. А. Микаелян*, Арабские заимствования в “Толковом словаре армянского языка” Ст. Малхасянца 22. – **Сообщения:** *А. В. Галстян* -Словообразовательные модели художественно-документальных текстов - 46. *Г. М. Григорян, О. Закарян*. Преподавание английской лексики с помощью целевых-тематических диаграмм и кроссвордов (на примере английского для юристов) - 62. *В. Г. Амбарцумян*. Вопросы исследования армянского языка на страницах журнала «Базмавеп» (1843-1893 гг.) - 74. **Рецензия:** *А. В. Галстян*. Сборник научных статей, посвященный 100-летию А. А. Абрамяна - 87. **Книжное обозрение** - 90: **Научная жизнь** 99.

CONTENTS

Articles: *M. A. Sargsyan*. The principles of the new electronic proofreader for armenian-language texts - 3. *D. V. Gulyatyan*. Look at Structural Types of Linguistic compositions 8.- **Discussion:** *H. H. Mesropyan*. Common characteristic of dialects of district of Syunik -29. *T. V. Safaryan*. The erroneous writings of Armenian in Latin characters in social networks and their influence on Armenian language - 39. *S. A. Mikayelyan*. The Arabic Borrowings of Malkhasyants' "Armenian Explanatory Dictionary" 22. **Reports:** *A. V. Galstyan*. Word-formation patterns of the vocabulary of authentic documentary-fiction texts - 46, *G. M. Grigoryan, O. Zakaryan*. Teaching ESP vocabulary by means of purposive-thematic diagrams and crossword puzzles (on the example of legal English) - 62. *V. G. Hamba*

r d z u m y a n. Issues of Armenian language studies covered in the publication in the periodical “Bazmavep” (1843-1893) - 74. **R e v i e w.**
A. V. G a l s t y a n. Collection of scientific articles dedicated to the 100 th anniversary of A. A. Abrahamyan -87. **B o o k r e v i e w s - 90: S c i e n c e N e w s - 99 :**

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը հրատարակում է «Լեզու և լեզվաբանություն» հանդեսը, որի առաջին համարը լույս է տեսել 2003 թ.:

Հոդվածները պետք է ուղարկել տպված և համակարգչային տեսքով (դիսկետով կամ կրիչով), 8-10 էջի սահմաններում, տողերի միջակայքը՝ 1.5, տառաչափը՝ 12 և Sylfaen տառատեսակով (ամփոփումները ռուսերեն և անգլերեն Times New Roman): Վերևում նշվում է հեղինակի անունը, ազգանունը, հաստատության անվանումը, հոդվածի վերնագիրը:

Հղումները և գրականության ցանկը պետք է համապատասխանեն:

Խնդրում ենք գրախոսական հոդվածներն ուղարկել գրախոսվող գրքի հետ:

Մեր հասցեն՝ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

ՀՀ, 3750015, Երևան, Լուսավորչի 15

Հեռ.՝ (+374 10) 565 337

Կայքէջ՝ www.language.sci.am

Էլ. փոստ՝ inslang@sci.am

Հանդեսի պատասխանատու քարտուղար՝ meri-sargsyan@mail.ru

К СВЕДЕНИЮ

НАН РА институт языка имени Р. Ачаряна издает журнал “Языки языкознание”, первый номер которого был издан в 2003 г.

Статьи следует присылать в виде распечатки и компьютерного набора (на дискете), объем - в пределах 8-10 машинописных страниц, интервал - 1,5, размер шрифта - 12, шрифт - Sylfaen (резюме на русском и английском - Times NewRoman). В начале указываются имя, фамилия, наименование учреждения, заглавие статьи.

Ссылки и список литературы должны соответствовать друг другу.

Просим статьи с отзывом или рецензией прислать с рецензируемой книгой.

Наш адрес: НАН институт языка имени Р. Ачаряна

РА, Ереван, Лусаворича 15

Тел.: (+374 10) 565 337

Веб. сайт: www.language.sci.am

Эл.-почта: inslang@sci.am

Ответственный секретарь: meri-sargsyan@mail.ru

ACKNOWLEDGEMENT

NAS RA language institute named after H. Acharyan is publishing afresh «Language and linguistics» magazine, the first number of which was published in 2003.

Please, send articles in hard and soft (on diskette) copies, within 8-10 pages, line spacing- 1,5, font size- 12, fonts- Sylfaen (the summary in Russian and English - Times New Roman). Author's name, institution and contact data should be placed in the upper right corner of the title page.

References or footnotes should be adequate to the list of bibliography.

Please, send reviews with the corresponding book.

Our address: NAS language institute named after H. Acharyan

RA, Yeravan, Lusavorich 15

Phone: (+374 10) 565 337

Web page: www.language.sci.am

E-mail: inslang@sci.am

Editorial secretary: meri-sargsyan@mail.ru

ԼԵԶՈՒ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ

LANGUAGE AND LINGUISTICS

2 (23)

2020

Համակարգչային էջադրումը՝ Վ. Պապյանի

Հրատ. պատվեր № 1075

Ստորագրված է տպագրության 12.03.2021 թ.:

Չափսը՝ 70 x 100 ¹/₁₆, 6,75 տպագր. մամուլ:

Տպաքանակը՝ 200 օրինակ:

Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: